

**ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ**

**ԳԻՏԷ՞Ք ՍԵՐԺԸ  
 ԻՆՉՈՒ՞ԿՈՒՁԷ  
 ԴԱՌՆԱԼ ՆԱԽԱԳԱՅ**

ՏՕԳՔ.Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Մինչև իր վարչապետական նշանակումը իր սակաւախօսութեամբ հանրածանօթ, այժմնախագահական քնննածու՝ Սերժ Սարգսիսեան ձեռնարկած է ուժեղ փառագարշաւի: Ան կ'աշխատի ապահովել իր նախագահական ընտրութիւնը: Բուէնքեր հաւաքելու առաջադրութեամբ եւ որպէսզի դիրաւ հասկնալի դառնայ իր ունկնդիրներուն կողմէ, մշակած է իւրայատուկ տրամաբանութիւն եւ «նորարար» ռազմավարութիւն, որպէսզի կարենայ տպաւորել եւ համակրանքը շահիլ իր ընտրագանգումներուն:

Սերժ Սարգսիսեան Յունուարի երրորդ շաբթուան մէջ այցելած է Սիւնիքի մարզը, ուր հանդիպում ունեցած է Սպանդարեան ու Անգեղակոթ գիւղերու բնակիչներուն հետ: Սիւնիքի ֆաղափի մէջ խլած է հրապարակ եկած ընտրողներու ծափահարութիւնները: Շրջած է Շինուհար գիւղերը: Գործիսի մէջ գտած է խանդավառութիւն: Սերժ Սարգսիսեան ապա այցելած է Քարահունջ եւ Քաջարան գիւղերը: Ու այսպէս Սիւնիքի շրջանի այլազան շրջանները՝ Մեղրի, Կապան, Ագարակ եւ այլ գիւղեր:

Սիւնիքի ֆաղափներու եւ գիւղերու մէջ իր ունեցած այցելութիւններուն ընթացքին, Սերժ Սարգսիսեանի ունեցած ելոյթները ձեւով եւ բովանդակութեամբ գրաւեցին մեր ուշադրութիւնը: Այդ ելոյթները լուսանկարի տակ կ'առնէին ընդունումը նշմարտութիւններու,

Շարք էջ 17

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԶԳԱՅԱՑՈՒՆՑ  
 ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ**

«ԲԱՆԱԿԸ ՊԻՏԻ ՔՈՒԷԱՐԿԷ Ի ՆՊԱՍՏ ՍԵՐՃ ՍԱՐԳՍԵԱՆԻ»

Հայաստանի պաշտպանութեան նախարար Միքայէլ Յարութիւնեան Յունուար 28-ին նախագահական ընտրութիւններուն վերաբերեալ կատարած յայտարարութիւնը բաւական տարօրինակ եւ զգալից էր: Որեւէ այլ երկրի մէջ պաշտպանութեան նախարարի մը կողմէ ընտրական գործընթացին նման ձեւով միջամտութիւնը կ'առաջնորդէ պաշտօնագրկումի: Բնականաբար Հայաստանի պարագային չափանիշերը տարբեր են:

Արդարեւ, Բանակի Օրուայ առթիւ Ռոբերտ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի հետ միասին եռաբլուր այցելութեան աւարտին Միքայէլ Յարութիւնեան յայտարարեց որ բանակը պիտի քուէարկի ի նպաստ Սերժ Սարգսեան:

«Ազատութիւն» ռատիոկայանի լրագրողի մէկ հարցին պատասխանելով Միքայէլ Յարութիւնեան ըսաւ. - «Ես շուտուանից եմ կողմնորոշուել՝ ես պաշտպանելու եմ Սերժ Սարգսեանի թեկնածութիւնը, որովհետեւ ես տեսնում եմ Սերժ Սարգսեանի մէջ այն մարդուն, որը կարող է ղեկավարել մեր պետութիւնը, դառնալ Գերագոյն գլխաւոր հրամանատար»:

Շարունակելով պաշտպանութեան նախարարը ըսաւ. - «Ամէն մի մարդ ինքը կ'որոշի բանակում, թէ ում տայ իր քուէն: Բայց ես համոզուած եմ, որ բանակը շատ լաւ է հասկանում, եւ համոզուած եմ, որ մեծամասնութիւնը, եթէ չսանձ է՛լ աւելին, տալու են իրենց քուէները Սերժ Սարգսեանին»:

Հայաստանի ընտրութիւններուն բանակի մասնակցութեան հարցը միշտ ալ դուռ բացած է ապօրինութիւններու: Մեղադրանքներ եղած են, որ բանակի սպաները խումբով առաջնորդած են իրենց ենթակայ զինուորները, քուէարկե-



Պաշտպանութեան նախարար Միքայէլ Յարութիւնեան եւ վարչապետ Սերժ Սարգսեան կողմ-կողմի, Բանակի Օրուայ առթիւ եռաբլուր կատարած այցի ընթացքին

լու օրուայ իշխանութեան ի նպաստ: Նոյնիսկ եղած են պարագաներ, երբ զինուորական ծառայողները տեղափոխուելով տեղամասէ-տեղամաս մի քանի անգամ մասնակցած են քուէարկութեան:

Հայաստանի պաշտպանութեան նախարարի նման բացառապէս միջամտութիւնը, կու գայ անգամ մը եւս կասկած յառաջացնելու յառաջիկայ նախագահական ընտրութիւններու օրինականութեան շուրջ:

Միս կողմէ, վարչապետ նա-

խագահական թեկնածու Սերժ Սարգսեան եւս կատարեց յայտարարութիւններ, որոնք չեն կրնար լաւատեսութիւն ներշնչել իշխանութիւններու վերաբերմունքին՝ իրենց քաղաքական հակառակորդներուն նկատմամբ:

Վարչապետը սպառնաց պատասխանատուութեան կանչել անոնց, որոնք իր հասցէին մեղադրանքներ կը կատարեն, ակնարկելով Լեւոն Տէր-Պետրոսեանի սուր քննադատութիւններուն:

**ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՇՏԱԲԸ ԿԸ ՍԵՂԱԴՐԷ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ «ՍԱԴՐԻՉ ԵՒ ԱՊՕՐԻՆԻ» ՔԱՅԼԵՐԸ**

Նախագահութեան թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանի նախընտրական շտաբի տարածած մէկ յայտարարութեան համաձայն, Հայաստանի իշխանութիւնները «սկսել են դիմել սաղբիչ եւ ապօրինի քայլերու:



Լեւոն Տէր-Պետրոսեան Թալինի հանրահաւաքի ընթացքին

«Լեւոն Տէր-Պետրոսեանի՝ Յունուար 27-ին Թալինում կայացած հանրահաւաքում իշխանութիւններին անմիջական մասնակցութեամբ կազմակերպուել էր սաղբիչ: Արդէն յայտնի Ս. Կարապետեանը իր սաղբիչ գործողութիւններով ծեծկոտուք էր հրահրել, ինչից օգտուելով իրաւապահ մարմինները Լեւոն Տէր-Պետրոսեանի՝ Թալինի նախընտրական շտաբի ակտիւնին հրաւիրում են ոստի-

կանութեան բաժին, ըստ էութեան կաթուածահար անելով նախընտրական շտաբի աշխատանքը», - ըստուած է Յունուար 29-ին հրապարակուած յայտարարութեան մէջ:

Շարք էջ 4

**ԹՈՒՐՔԻԱ ՇԻԱՍԹԱՓՈՒԱԾ Է ԸԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԸԱՐՑՈՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԱԽԱԳԱՇԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ**

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան խօսնակ Լեւենթ Բիւլման Յունուար 26-ին հրապարակած է հաղորդագրութիւն մը, ուր գարմանք կը յայտնուի Միացեալ Նահանգներու նախագահութեան թեկնածուներու վերջերս կատարած յայտարարութիւններուն վերաբերեալ: «Թուրքիա հիասթափուած է հայերի «ցեղասպանութեան» պնդումներուն նկատմամբ Միացեալ Նահանգներու նախագահութեան թեկնածուներու դիրքորոշումներէն», - ըստուած է հաղորդագրութեան մէջ:

«Անտուլիա» գործակալութեան փոխանցմամբ, Բիւլման յայտարարած է, թէ «քաղաքական գործիչները պէտք է աւելի պատասխանատու գտնուին պատմութեան նկատմամբ եւ նաեւ զգոյշ ըլլան, չվիրաւորելու համար դաշնակից պետութեան մը՝ իրենց անհիմն յայտարարութիւններով»:

Վերջերս, Դեմոկրատ երկու թեկնածուներ՝ Պարաք Օպամա եւ Հիլըրի Բլինթըն հանդէս եկան Յեղասպանութիւնը ճանչցող Գոնկրէսի բանաձեւի ընդունման ի նպաստ յայտարարութիւններով:

Անցեալին նման դիրքորոշում յայտնած էր նաեւ Դեմոկրատ երրորդ թեկնածուն՝ ձոն Էտուըրտ:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԸ՝ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԹԵԿՆԱԾՈՒ

Ռուսական «Կոմսոմոլսկայա Պրավդա» պարբերականը հրատարակել է մի յօդուած, որը նուիրուած է Հայաստանում կայանալիք առաջիկայ նախագահական ընտրութիւններին: Այստեղ եւս, ինչպէս վերջին շրջանում ռուսական մամուլում տպագրուած մի շարք յօդուածներում, արձանագրուած է, որ մինչեւ վերջերս Հայաստանում ստեղծուած նախընտրական գործընթացը միանգամայն կանխատեսելի էր, եւ ամէն ինչ խօսում էր նախագահական ընտրութիւններում Սերժ Սարգսեանի յաղթանակի անխուսափելիութեան մասին:

Պարբերականը նշում է, որ օգտուելով փաստացի անսահմանափակ ֆինանսական եւ վարչական ռեսուրսներից ու ստանալով Ռոբերդ Քոչարեանի աջակցութիւնը՝ Սերժ Սարգսեանը հեշտ յաղթանակ էր ակնկալում, սակայն Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի վերադարձը քաղաքականութիւն ամբողջութեամբ փոխել է ուժերի դասաւորութիւնը:

Յօդուածագիրը դա բացատրում է հետեւեալ կերպ. նախեւառաջ Տէր-Պետրոսեանը խարիզմատիկ եւ ճարտար հոգեւոր է, որը իր հրապարակային ելոյթների ժամանակ կարողանում է գրաւել

մագաչին, քան պարզապէս ընդդիմութեան թեկնածու:

«Կոմսոմոլսկայա Պրավդան» նշում է, որ մայրաքաղաքում քաղաքական մթնոլորտի փոփոխութիւնը հանգեցրել է նաեւ հեռուոր շրջանների ակտիւացմանը, եւ իրավիճակը երկրում արմատապէս փոխուել է: Գործող իշխանութիւնների ամենակարողութեան, ընտրութիւնների արդիւնքների կանխորոշուած լինելու մասին առաապելները գրեթէ յօդս են ցնդել, եւ շատ քաղաքացիներ սկսում են հասկանալ, որ իրենք կարող են ազդել քաղաքացիական հասարակութեան ձեւաւորման գործընթացի վրայ:

Յօդուածի հեղինակը ափսոսանք է յայտնում, որ այդ գործընթացն առայժմ ամբողջութեամբ էր ընկալուել Ռուսաստանում, ուր որոշները՝ ինքնազոյցով, իսկ միւսները ոչ անշահախնդրօրէն նշում են, թէ Սերժ Սարգսեանի յաղթանակը լուծուած հարց է: Սակայն օրէցօր ակնյայտ է դառնում, որ ուժեղ քարոզչութիւնը եւ «իշխանութեան թեկնածուի» շահերի անթաքոյց պաշտպանութիւնը, որն իրականացուած է նաեւ ՌԴ-ում, բացի հակակրանքից, ոչինչ չեն առաջացնում:

Յօդուածագիրն մտահոգում է այն փաստը, որ Քոչարեանի եւ

ԿՇԵՌԻ ՆԺԱՐԸ ԹԵՔՈՒԵԼ Է

Յունուարի 22-ի հօր հանրահաւաքից եւ աննախադէպ ազդեցիկ երթից յետոյ հանրապետութիւնում վախի մթնոլորտը վերջնականապէս վերացաւ: Բայց խօսքը հասարակութեան վախի մասին չէ: Հասարակութիւնը մէջքը շտկել էր դեռեւս Սեպտեմբերին՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի առաջին հանրահաւաքից յետոյ: Յունուարի 22-ի երթն այլ հարց չուծեց. այն է՝ վախի մթնոլորտը վերացաւ նաեւ ռեժիմի սպասարկուների՝ ոստիկանութեան, չինովնիկութեան եւ այլ կառույցներում: Այլ կերպ ասած, ռեժիմի սպասարկուները հասկացան, որ հանրապետութիւնում իրավիճակը փոխուել է, եւ իրենք կարող են այլեւս չվախենալ «վերեւների» ռեպրեսիաներից: Սա առաջին հերթին կարեւորագոյն հոգեբանական յաղթանակ էր, որովհետեւ դրանով իսկ ռեժիմը կորցրեց իր հիմնական յենարաններից մէկը: Կարելի է չկասկածել, որ հիմա արդէն ուժային կառույցների ներկայացուցիչները երկար կը մտածեն՝ կատարել, թէ՞ վկատարել ռեժիմի ապօրինի հրամանները, որովհետեւ Յունուարի 22-ին իրենց աչքով տեսան եւ համոզուեցին, որ Սերժ Սարգսեանի ընտրուելու շանսերը չնչին են:

Բայց հետաքրքիրն այն է, որ ռեժիմն ինքնազոյցով դեռ շարունակում է «աշխատեցնել» նախորդ ընտրութիւնների ընտրակեղծիքների նախապատրաստման մեխանիզմները: Այսօր հանրապետութիւնով մէկ նկատուած է մի բաւականին ծիծաղաշարժ երեւոյթ՝ մարդկանց տներն են մտնում ինչ-որ անհասկանալի «այցելուներ» (ժէկ-երից, թաղապետարաններից, սանէպիդկանաններից, էլեկտրացանցերից ու սատանան գիտի, թէ ուրիշ որտեղից) ու պահանջում քաղաքացիների անձնագրային տուեալները: Զուգահեռաբար, իհարկէ, խորհուրդ են տալիս անապայման ընտրել Սերժ Սարգսեանին, ու երբ տեսնում են, որ իրենց առջեւ խեղճուկրակ մարդ է, նաեւ ընտրակաշառք են խոստանում (չափը կախուած է դիմացինի խեղճուկրակութեան աստիճանից):

Իսկ ինչո՞ւ է այս երեւոյթը ծիծաղաշարժ: Որովհետեւ իրականում այդ անձնագրային տուեալները նրանց պէտք չեն (այդ տուեալները ոստիկանութեան համապատասխան բաժիններում կան): Դա արուած է միայն մի բանի համար՝ որպէսզի ընտրողն իրեն «կոնտրոլի տակ» զգայ: Պարզ ասած՝ վախենայ եւ որոշի «շաւից-փորձանքից հեռու» մնալ ու ձայն տալ Սերժ Սարգսեանին: Իրականում սա իսկապէս անհեթեթ մեխանիզմ է, որովհետեւ ոչ մէկը չի կարող իմանալ, թէ ում օգտին է քուէարկելու ընտրողը: Այսինքն, մարդը հանգիստ կարող է իր անձնագրային տուեալները տալ «այցելուներին» (եթէ աղմուկ բարձրացնելու զահա չունի), յետոյ հանգիստ գնալ ընտրութիւնների եւ ընտրել ում ուզում է: Անհանգստանալու կարիք չկայ. վստահաբար, «այցելուները» նոյնպէս ստիպուած են կատարում այդ նուստացուցիչ աշխատանքը եւ հաստատ իրենք նոյնպէս Սերժ Սարգսեանին ձայն չեն տալու:

Իսկ ի՞նչ տեղի կ'ունենայ, եթէ յանկարծ ռեժիմը որոշի Փետրուարի 19-ից յետոյ պատժել «վատ աշխատած» կեղծարարներին: Ոչինչ էլ տեղի չի ունենայ շատ պարզ պատճառով. Փետրուարի 19-ից յետոյ Հայաստանում ռեժիմ չի լինի: Ճիշդ հակառակը. Փետրուարի 19-ից յետոյ ռեժիմի այսօրուայ կամակատարները, ովքեր տնտեսուն ընկած ընտրակաշառք են առաջարկում, նոյն այդ մարդկանց դուները կ'ընկնեն ու տասնապատիկ աւելի մեծ գումար կ'առաջարկեն՝ խնդրելով «մոռանալ նախկին յանցաւոր ռեժիմի օրօք» իրենց կատարած «ճակատագրական սխալը»: Իսկ հրապարակաւ կը սկսեն պարծենալ, թէ «տեսէք՝ իմ վրայ Սերժն այսքան պլան էր դրել, բայց ես քաղաքացիական բարձր գիտակցութիւն եմ դրսեւորել ու պլանը չեմ կատարել»:

Պրոցէսը սկսուած է: Նոյն Յունուարի 22-ի երթի ժամանակ ոստիկանները ոչ թէ ուղեկցում էին, այլ մնաւորներով էին երթին: Ուշադրութիւն դարձրէք հեռուստատեսային ռեպորտաժներին. ակնյայտօրէն, կոռեկտութեան միակ պատճառը մոնիտորինգը չէ: Այնտեղ էլ են հասկացել, որ ՀՀ յաջորդ նախագահը Սերժ Սարգսեանը չի լինելու: Աւելին՝ այնտեղ էլ են հասկացել, որ ինչքան անվերապահօրէն են ծառայում ռեժիմին, այնքան աւելի արհամարհական վերաբերմունքի են արժանանում: Եւ հասկացել են, թէ ինչ խաչատուակ վիճակում է յայտնուելու ե՛ւ ողջ Հայաստանը, ե՛ւ իրենք, եթէ յանկարծ, հեռու տնից-տեղից, ՀՀ յաջորդ նախագահը Սերժ Սարգսեանը լինի:

Բայց նման բան տեղի չի ունենայ: Կշեռքի նժարն արդէն թեքուել է, եւ այդ «գործընթացն» այլեւս անկասելի է:

ԳՐԻԳՈՐ ՕՍԿԱՆԵԱՆ

«Հայ-ռուսական երկարատեւ յարաբերութիւնները պէտք է հայաստանեան ինչ-որ քաղաքական խմբաւորման շահերից վեր դասուեն» «ԿՈՄՍՈՄՈՒՍԿԱՅԱ ՊՐԱՎԴԱ»

տասնեակ հազարաւոր մարդկանց ուշադրութիւնը: Եւ երկրորդ, Տէր-Պետրոսեանը պետական բիւրոկրատիայի շրջանում, ուժային եւ այլ կառույցներում մեծ չարգանք է վայելում, նրան պաշտպանելու մասին յայտարարել են Ղարաբաղեան պատերազմի վետերանների մեծ թուով ազդեցիկ կազմակերպութիւններ:

Այդ հանգամանքը նկատի առնելով՝ յօդուածագիրը նշում է, թէ շատ վերլուծաբաններ կասկածում են, թէ Լեւոն Տէր-Պետրոսեանի կազմակերպած բողոքի ակցիաները բռնութեամբ ցրելու հրաման ստանալու դէպքում՝ ուժային կառույցները կը կարողանան կատարել այն: Նշում է, որ իրաւապահ մարմինների շատ աշխատակիցներ քաջ գիտակցում են, որ երկրում իրավիճակը կտրուկ կերպով փոխուած է, եւ այժմ իրենք այլեւս պատրաստ չեն կատարել վերեւից արձակուած հակաօրինական հրամանները: Յօդուածագիրը ընդգծում է, որ երկիրը արդիականացնելու եւ կոռուպցիոն համակարգը ապամոնտաժելու վերաբերեալ Տէր-Պետրոսեանի առաջարկները մեծ ժողովրդականութիւն են ձեռք բերում:

Պարբերականը որպէս օրինակ բերում է Յունուարի 22-ին Տէր-Պետրոսեանի կողմնակիցների կազմակերպած երթը, երբ «չնայած սաստիկ սառնամանիքին՝ աւելի քան 100 հազար ցուցարարներ, «Լեւոն, նախագահ» վանկարկելով, շրջել են Երեւանի փողոցներով»: Յօդուածագիրը նաեւ նշում է, որ ի դժբախտութիւն իշխանութիւնների՝ Տէր-Պետրոսեանը, ըստ էութեան, աւելի շատ դարձել է հա-

Սարգսեանի ռեժիմը կարող է հետեւել Միխայիլ Սահակաշվիլիի օրինակին, գնալ զանգուածային կեղծիքների, «այլախոհների» նկատմամբ ուժային եւ վարչական ճնշման՝ յոյս ունենալով, որ կեղծուած ընտրութիւնները արտաքին աջակցութեան շնորհիւ կարող են լեգիտիմ ճանաչուել: «Եւ եթէ նման բան տեղի ունենայ, եւ Ռուսաստանը պաշտպանի ժողովրդի վստահութեանը շարժանացած ռեժիմը, ապա Հայաստանում հակառուսական տրամադրութիւններ առաջ կը գան: Ուստի սեփական աշխարհաքաղաքական շահերից ելնելով՝ Ռուսաստանը պէտք է շահագրգռուած լինի արդար ընտրութիւնների անցկացման հարցում», - եզրակացնում է յօդուածի հեղինակը:

Պարբերականը նշում է, թէ Հայաստանի գործող իշխանութիւնների փորձերը՝ Մոսկուային համոզել, թէ Տէր-Պետրոսեանի իշխանութեան գալը կարող է բացասաբար անդրադառնալ երկու երկրների յարաբերութիւնների վրայ, տարակուսանք են առաջացնում, քանի որ ՀՀ առաջին նախագահը գործով ապացուցել է, որ հանդիսանում է Ռուսաստանի հետ յարաբերութիւնների ամրապնդման, անվտանգութեան ոլորտում փոխգործակցութեան խորացման եւ երկկողմ տնտեսական յարաբերութիւնների զարգացման կողմնակիցը: «Իսկ հայ-ռուսական երկարատեւ յարաբերութիւնները պէտք է հայաստանեան ինչ-որ քաղաքական խմբաւորման շահերից վեր դասուեն», - եզրափակում է «Կոմսոմոլսկայա Պրավդայի» յօդուածագիրը:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

www.massisweekly.com

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆԱՍԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Շրջանի ԽՄԲԱԳԻՐ ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ ԽՄԲԱԳՐԱՎԱՆ ԿԱԶՄ ՍԱՅԱ ԹՈՒԹՃԵԱՆ ԿԱԶՁԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ ՅՈՐԻԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ Գեղ. (626) 797-7680 Ֆաքս. (626) 797-6863 E:Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail) Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

ԼԵՒՈՆ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ ԵՌԱԲԼՈՒՐ, ՈՐԻՆ ՅԱԶՈՐԴԵՑ ԱՎՏՈՆԵՐԹ



ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ կողմնակիցները շուրջ 100 ինֆնաշարժներով երթ-վր կազմակերպած էին երեւանի փողոցներով

ՀՀ Ազգային Բանակի 16-րդ տարեդարձի առիթով Յունուար 28-ին ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանն այցելեց Եռաբլուր, ուր ծաղիկապակ դրեց Վազգէն Սարգսեանի շիրիմին եւ գոհուած ազատամարտիկների յուշակոթողին: Հենց Եռաբլուրում Լեւոն Տէր-Պետրոսեանը որոշեց ավտոերթ անել Երեւանի փողոցներով: Մեքենաների ձայնային ազդանշաններն ու լոյսերը միացրած՝ ավտոերթն անցավ կառավարութեան շէնքի մօտով, այնուհետեւ՝ Բաղրամեան պողոտայով: Այս պողոտայով երթի անցնելը համընկաւ այն պահին հետ, երբ ոստիկանները փակել էին ճանապարհը, որպէսզի Ռոբերդ Քոչարեանն անցնի: Ոստիկանները, սակայն, չկարողացան կանգնեցնել ավտոերթը: Քոչարեանը ստիպուած էր սպասել այնքան, մինչեւ երթին մասնակցող մեքենաները կ'անցնէին: Ճանապարհին ավտոերթին միացան բազմաթիւ մեքենաներ, մարդիկ մայրերից ու պատուհաններից ող-

ջուներով էին երթի մասնակիցներին:

Մօտ մէկ ժամ տեւած ավտոերթն աւարտուեց Աւանում՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի նախընտրական գրասենեակի մօտ: «Սա դեռ ընդամենը ավտոերթի փորձն է: Հիմնական երթը, որից թնդալու է ոչ միայն մայրաքաղաքը, այլեւ ողջ հանրապետութիւնը, լինելու է Փետրուարի 20-ին: Բոլորովին պատահական չէ, որ մեր երթն աւարտուում է Աւանում, որովհետեւ այստեղ իշխանութիւններն ամենամեծ դժուարութիւնները փորձեցին յարուցել մեր շտաբները բացելու, մեր օրինական իրաւունքն իրականացնելու դէմ: Սա պաշտօնական քարոզարշաւ է, եւ ոչ ոք իրաւունք չունի խանգարել մեզ: Ոչ մի Տարօն Մշակույթ կամ Ռուբէն Գերմանացի չեն կարող խանգարել մեզ: Ես ձեզ բոլորիդ շնորհակտութեամբ եմ Բանակի տօնի առթիւ, որի ամենամեծ յաղթանակը տեղի է ունենալու Փետրուարի 19-ին», - ասաց Լեւոն Տէր-Պետրոսեանը:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ԱՏՈՒՄ Է

Նախագահի ընտրութեան օրինականութիւնն ապահովելու մասին իշխանութեան խօսքերին վերաբերուող յայտարարութեամբ, Յունուարի 25-ին հանդէս է եկել «Լեզիտիմ նախագահ 2008» շարժման նախաձեռնող խումբը: Քարոզչութեան օրերին Սերժ Սարգսեանը փորձում է համոզել ՀՀ քաղաքացիներին եւ միջազգային հանրութեանը, որ նախագահական ընտրութիւնները անցնելու են առանց զանգուածային ընտրակեղծիքների - ապօրինի ճնշումների: «Դժուար է հաւատալ նրա հաւաստիացումներին: Եթէ իշխող վարչախումբը իսկապէս ուզենար ազատ եւ արդար ընտրութիւններ կազմակերպել, ապա նախ եւ առաջ պէտք է վերացնէր քաղաքական ահաբեկումների միջոցը, որը նրա կողմից ձեւաւորուել է անցած խորհրդարանական ընտրութիւններից ամիսներ առաջ: Մասնաւորապէս այն ժամանակ, ցուցադրական ձեւերով ընտրութիւնների արդիւնքում ազատագրիկներին նախընտրելու արդար լրատուամիջոցներից մէկի ղեկավար Արման Բաբաջանեանը, իսկ յետոյ «Հայ Կամաւորա-

կանների Համախմբման» ղեկավարներ ժիրայր Սէֆիրեանը եւ Վարդան Մալխասեանը, որոնք յայտարարել էին ընտրակեղծիքները կանխելու իրենց վճռականութեան մասին: Ընտրութիւններին նախորդած կանխարգելիչ քաղաքական հետապնդումները ընտրողներին յուսահատեցնելու եւ «մեր դէմ խաղ չկայ» համոզումները տարածելու նպատակ էին հետապնդում», - ասուած է յայտարարութեան մէջ:

Հեղինակների կարծիքով, այն, որ մինչեւ օրս քաղաքատարկեալները մնում են ազատագրկման մէջ, վկայում է առաջիկայ նախագահի ընտրութիւնն իրականում ահաբեկութեան եւ զանգուածային կեղծիքների միջոցով անցկացնելու իշխանական մտադրութեան մասին: «Լեզիտիմ նախագահ 2008» շարժման նախաձեռնող խումբը համարում է, որ միայն ժիրայր Սէֆիրեանի, Վարդան Մալխասեանի եւ Արման Բաբաջանեանի ազատ արձակումը կարող է վկայել, որ նախագահի ընտրութիւնն ազատ, արդար ու թափանցիկ անցկացնելու մասին իշխանութեան հաւաստիացումն անկեղծ է:

ԱՐԹՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ. «ԳԻՒՂԱՊԵՏԵՐԸ ԶԲԱՂՈՒԱԾ ԵՆ ԻՇԽՈՂ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՅԱՄԱՐ ԶԱՅՆԵՐ ԿՈՐԶԵԼՈՎ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Նախագահի թեկնածու, «Օրինաց երկիր» կուսակցութեան նախագահ Արթուր Բաղդասարեանը ուրբաթ օրը Հայաստանի գիւղացիական տնտեսութիւնների ներկայացուցիչների հետ հանդիպմանը ներկայացրեց գիւղի այսօրուայ խնդիրները ու իր ծրագրերն այդ հարցում, խօսեց գիւղում տիրող քաղաքական վիճակի մասին:

«Գիւղացիները գբաղուած են իշխող թեկնածուի համար ձայներ կորզելով», - յայտարարեց նախագահի թեկնածուն: - «Մենք այս մօտեցումները դատապարտում ենք: Եւ մենք այս երեւոյթների դէմ լրջօրէն կուր ենք տալու եւ պայքարելու ենք»:

2003-ի նախագահական ընտրութիւններում, երբ «Օրինաց երկիր»-ը, ՀՀԿ-ի եւ Դաշնակցութեան հետ միասին, աջակցում էր Ռոբերդ Քոչարեանին, նման յայտարարութիւններ «Օրինաց երկիր»-ը, կարծես թէ, չի արել: «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ 2003-ին չկա՞ր այդ երեւոյթը, Բաղդասարեանի պատասխանեց. - «Նման ձեւերով չկար»:

«Նոր երեւոյթ չէ: Բայց նման ձեւով, նման կոչում մեթոտներով, որ իրականացում է այսօր, եւ այս ֆոնի վրայ խօսել արդար ընտրութիւնների մասին, դա անընդունելի է»:

ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ՏՈՒԵԱԼՆԵՐՆ ԵՆ ՅԱՒԱՔՈՒՄ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Շէնգաւիթ համայնքի բնակիչների համար արդէն սովորական է դարձել այն, որ օրական մի քանի հոգի բախում են դուռը եւ հարցնում, թէ քանի մարդ կայ գրանցուած իրենց բնակարանում:

Նախընտրական քարոզարշաւի մեկնարկի առաջին իսկ օրերից բնակարաններ են այցելել Լեւոն Տէր-Պետրոսեանի, Արթուր Բաղդասարեանի եւ Սերժ Սարգսեանի կողմնակիցները: Նրանք բոլորն էլ ճշդում են, թէ քանի մարդ է գրանցուած տուեալ բնակարաններում եւ արդեօք նրանք Հայաստանում են գտնուում, թէ ոչ: Լեւոն Տէր-Պետրոսեանի կողմնակիցները բաժանում են իրենց թեկնածուի նախընտրական ծրագրերի բուկլետներ, իսկ Արթուր Բաղդասարեանի թիմակիցները ճշդում են մարդկանց վերաբերմունքն իրենց թեկնածուի նկատմամբ եւ օրացոյցեր են բաժանում:

Իսկ Սերժ Սարգսեանին աջակցող խմբերը, որոնք հիմնականում

է», - ասաց նա:

Գիւղատնտեսութեան ոլորտում իր ծրագրերը ներկայացնելիս, Արթուր Բաղդասարեանը անընդունելի համարեց, որ «պետական այս կամ այն ծրագիրը կապում են այս կամ այն կուսակցութեան հետ». - «Այն ջրագիծը, որ պետութիւնը պարտաւոր է սարքել, այն գազամատակարարման համակարգը, որ պարտաւոր է անցկացնել, դա կապում են իշխող կուսակցութեան հետ, դա կապում են այս կամ այն թեկնածուի հետ»:

«Դա եղել է եւ խորհրդարանական ընտրութիւններում, եւ հիմա շարունակուում է նաեւ նախագահական ընտրութիւններում», - յաւելեց «Օրինաց երկիր»-ի նախագահը: - «Սա անընդունելի է, որովհետեւ չի կարելի պետական ծրագրերը դարձնել առանձին մարդկանց սեփականութիւնը»:

Արթուր Բաղդասարեանը գիւղատնտեսութեան ոլորտում նախագահ ընտրուելու դէպքում խոստանում է ոռոգման ջրի սակագնի իջեցում, գիւղատնտեսութեան մէջ ապահովագրական համակարգի ներդրում, ցածր տոկոսադրոյքներով գիւղտնտեսիկայի, սերմացուտնկանիւթի, պարարտանիւթ-թունաքիմիկատի տրամադրում գիւղացիներին եւ այլն:

գլխաւորում են համայնատիրութիւնների ղեկավարները, այցելում են մարդկանց բնակարաններն ու հարցնում՝ «կը քուէարկէք արդեօք Սերժ Սարգսեանի օգտին»: Նրանք ամէն գնով փորձում են համոզել բնակիչներին, որ անհրաժեշտ է հենց Սերժ Սարգսեանին ընտրել:

Համատիրութիւնների ղեկավարներին սովորաբար ուղեկցում է տուեալ շէնքի լիազօրը, ով լաւ է ճանաչում շէնքի բնակիչներին եւ կարողանում է նրանց համոզել իրենց տրամադրել անձնագրի տուեալները: Իսկ որոշ համատիրութիւնների ներկայացուցիչներ անձնագրի տուեալները ստանալու աւելի հեշտ եղանակ են գտել: Նրանք պարզապէս զանգահարում են տներ՝ խնդրելով անձնագրի տուեալները՝ առանց որեւէ բացատրութիւն տալու: «Մենք պարզապէս տուեալներն ենք գրում», - ասում են նրանք:

Յ. Գ. Անձնագրի տուեալները «ճշդելու» համար զանգահարել են, այցելել են «Ա1+»-ի թղթակցի տուն:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՐԱՆՑՈՒԱԾ Է 2 ՄԼՆ 312 ՀԱԶԱՐ 945 ԸՆՏՐՈՂ

Ինչպէս Յունուար 25-ին լրագրողների հետ հանդիպմանը ասաց Ոստիկանութեան անձնագրային եւ վիզաների վարչութեան պետ Ալվինա Զաքարեանը, ներկայ դրութեամբ Հայաստանում գրանցուած է 2 մլն 312 հազար 945 ընտրող:

Զաքարեանը յաւելեց, սակայն, որ ընտրացուցակները փոփոխութեան են ենթարկուում գրեթէ ամէն օր, «քանի որ ամէն օր մարդ է մահանում, կամ լրանում է քաղաքացու 18 տարեկանը, կամ կալանավայրից են վերադառնում մարդիկ եւ կամ զօրացրուում են»:

2007 թուականի խորհրդարանական ընտրութիւնների ժամանակ ընտրացուցակներում ընդգրկուած է եղել 2 մլն 285 հազար 830 ընտրող: Անձնագրերի եւ վիզաների վարչութեան պետը կտրականապէս հերքեց հրապարակուող լուրերը, թէ ընտրութիւնների նախաշեմին տպագրուում են կեղծ անձնագրեր:

«Ամենայն պատասխանատուութեամբ վստահեցնում եմ՝ կարող էք ցանկացած տեղ պարզ ճակատով ասել. եթէ նրանք կարող են ներկայացնել միայն մէկ հատ, աւելին պէտք չէ, միայն մէկ հատ կեղծ անձնագրի գոյութիւն, ես ձեզանից ներողութիւն կը խնդրեմ անպայմանօրէն», - ասաց Ալվինա Զաքարեանը:

ԼՈՒՐԵՐ

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՆԱԽՆԱՏՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԶՅ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

Յունուարի 24-ին ՀՀ նախագահի թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանը նախընտրական ուղերձ է յղել ՀՀ քաղաքացիներին, որում ասուած է.

«Փետրուարի 19-ին դուք կանգնելու էք ձեր ապագան սեփական ձեռքերով կերտելու լրջագոյն պատասխանատուութեան առջեւ:

Սերժ Սարգսեանի ընտրութեան պարագայում մեր երկրում որեւէ դրական տեղաշարժ չի լինելու, այլ ընդհակառակը, աւելի են ծաւալուելու այն բոլոր արատաւոր երեւոյթները, որոնք առկայ էին Ռոբերդ Քոչարեանի նախագահութեան օրօք, այսինքն.

- Շարունակուելու է ժողովրդի անխնայ կեղեքումը եւ ազգային հարստութեան կուտակումը փոքրաթիւ մարդկանց ձեռքում,

- Խորանալու է հասարակութեան բեւեռացումը՝ հարուստներն աւելի են հարստանալու, իսկ աղքատներն՝ աւելի աղքատանալու,

- Տնտեսութեան անազնացող մոնոպոլիզացումը վերջնականապէս սպառնալու է միջին եւ մանր գործարարութեան գոյութեանը,

- Ձեռնարկուելու իրաւապահ մարմինների, հարկային տեսչութեան, մաքային վարչութեան կամայականութիւններն ու օրինազանցութիւնները,

- Արտագաղթի շարունակուող գործընթացը վերածուելու է դեմոգրաֆիական աղէտի,

- Վիժեցուելու է աննախադէպ յանցագործութիւնների 1999-ի Հոկտեմբերի 27-ի անաբեկչութեան, քաղաքական միւս սպանութիւնների, բենզինի ու գազի ներկրման հետ կապուած մեքենայութիւնների բացայայտումը,

- Ձի յաղթահարուելու Հայաստանի քաղաքական եւ տնտեսական մեկուսացումը. մեծանալու է Լեւոնային Ղարաբաղում պատերազմի վերսկսման վտանգը:

Մինչդեռ իմ ընտրութեան պարագայում տեղի է ունենալու նշուած փակուղային զարգացումների ճիշդ հակառակը, այն է՝ աւազակապետական համակարգի կազմաքանդում, սահմանադրական կարգի վերականգնում, ժողովրդավարական ազատութիւնների կենսագործում, օրինականութեան հաստատում, տնտեսավարողների համար հաւասար հնարաւորութիւնների ստեղծում, ազատ մրցակցութեան ապահովում, սեփականութեան անձեռնմխելիութեան երաշխաւորում, կառուցողական արտաքին քաղաքականութեան իրականացում եւ այլն: Գուժարած՝ ժողովրդի սոցիալական վիճակի կտրուկ բարելաւմանն ուղղուած այն բոլոր միջոցառումները, որոնք արտացոլուած են իմ ծրագրում: Դրանք են.

- Առաջիկայ հինգ տարիների ընթացքում միջին աշխատավարձի եռակի եւ միջին կենսաթոշակի քառակի բարձրացումը,

- Պետական պարտատոմսերի թողարկման միջոցով քաղաքացիների խորհրդային աւանդների հատուցման արագացումը,

- Երեխաների ծննդեան համար մայրերին տրուող միանուագ նպաստների զգալի յաւելումը,

- Զինուորական ծառայութիւնից խուսափած երիտասարդների նկատմամբ համաներման կիրառումը,

- Բուհական ուսման վարձերի ձեւաւորման կանոնակարգումը եւ դրանց աճը զսպող մեխանիզմների մշակումը,

- Պետութեան կողմից սոցիալական շինարարութեան լայնածաւալ ծրագրի իրականացումը եւ այլն:

Ընտրութիւնն, այսպիսով, կայանալու է ոչ թէ անհատների, այլ երկրի զարգացման երկու հնարաւոր ճանապարհների միջեւ, որոնցից մէկը անխուսափելի կործանման, միւսը՝ փրկութեան ճանապարհն է: Այլ կերպ ասած՝ մէկը ներկայ աւազակապետական վարչախմբի եւս տասը տարուայ տիրապետութեան մղձաւանջն է, միւսը՝ նորմալ պետութիւն կառուցելու հեռանկարը:

Ամէն ինչ կախուած է ձեր կամքից ու վճռականութիւնից, ձեր քաղաքացիական պարտքը կատարելու պատրաստակամութիւնից, երկրի ապագայի կերտումը ձեր սեփական գործը համարելու գիտակցութիւնից:

Կատարէք ձեր պարտքը, եւ ոչ մի դաժանաբարոյ ուժ, ոչ մի բռնութիւն, ոչ մի ընտրակեղծիք չի կարող կասեցնել մեր ընդհանուր յաղթանակը»:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԱՏԱՐԱՆԸ ՊԱՏԺԵԼ Է ՊՐՈՖԵՍՈՐԻՆ՝ ԱԹԱԹՈՒՐՔԻ ՅԻՇԱՏԱԿԸ ԿԻՐԱԴՈՐԵԼ ԶԱՄԱՐ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
«Ռոյթերը» լրատուական գործա-

կալութեան փոխանցմամբ, իզմիրի քաղաքային դատարանը Թուրքիայի հիմնադիր նախագահ Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի յիշատակը վիրաւորելու մեղադրանքով պրոֆեսոր Աթիլա Եալլային դատապարտել է 15 ամսուայ պայմանական ազատազրկման:

Պրոֆեսոր Եալլայն Անկարայի Գազիի համալսարանում դասաւանդում է «Արդիական քաղաքագիտութիւն» առարկան: 2006 թուականին տեղի ունեցած գիտաժողովում նա համարձակուել է կասկածի տակ առնել Աթաթուրքի ներդրումը Թուրքիայի առաջխաղացման գործում եւ հրապարակաւ հարց է տուել, թէ ինչու են ամենուր տեղադրուած Աթաթուրքի արձաններն ու նկարները:

Քեմալ Աթաթուրքի յիշատակը վիրաւորելը Թուրքիայում քրէ-օրէն պատժելի արարք է: Եալլային անորոշ ժամանակով արգելել են դասաւանդել Գազիի համալսարանում այն բանից յետոյ, երբ տեղական մամուլը հրապարակել է նրա մեկնաբանութիւնները:

CNN Turk մասնաւոր հեռուստակայանի փոխանցմամբ, «պրոֆեսորի պայմանական ազատազրկ-

ման ընթացքում յատուկ փորձագէտները հետեւելու են նրա գործունէութեանը»:

Աթաթուրքը մահացել է 1938 թուականին: Նրա կեանքը եւ դադափարները պարտադիր ներկայացուած են դպրոցական դասագրքերում, ամէն տարի միլիոնաւոր մարդիկ այցելում են Անկարայում Աթաթուրքի դամբարանը, իսկ Նոյեմբերի 10-ին երկու րոպէ լուսթեամբ յարգանքի տուրք են մատուցում նրա յիշատակին:

Թուրքերի մեծամասնութիւնը Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքին համարում է ռազմական եւ պետական առաջնորդ, ով կարողացել է փրկել երկիրը, դուրս վտարել օտարերկրացի զաւթիչներին, ստեղծել դէպի Արեւմուտք կողմնորոշուող աշխարհիկ հանրապետութիւն, որտեղ կրօնը տարանջատուած է քաղաքականութիւնից եւ կանայք տղամարդկանց հետ հաւասար իրաւունքներ են ստացել:

«Ռոյթերը»-ի փոխանցմամբ, Եւրոպական միութիւնը, հաւանաբար, կ'արձագանքի այդ միջադէպին եւ պրոֆեսոր Եալլայի պայմանական դատաւճիռը կ'որակի որպէս Թուրքիայում խօսքի ազատութեան ոտնահարման հերթական վկայութիւն:

«ԻԶՎԵՍՏԻԱ». «ՌՈՒՄԱՍՏԱՆԸ ՅՈՅՍԵՐԸ ԿԱՊՈՒՄ Է ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՅԵՏ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
«Իզվեստիա» թերթն Յունուար 29-ին գրում է, որ «Ռուսաստանը շահագրգռուած է Հայաստանի կայուն զարգացմամբ եւ յոյսերը կապում է Սերժ Սարգսեանի հետ»:

«Սա այն հազուագիւտ դէպքերից է, երբ Մոսկուայի եւ արեւմտեան տէրութիւնների դիրքորոշումները համընկնում են՝ միայն Սերժ Սարգսեանը կարող է երաշխաւորել հաւասարակշռուած արտաքին քաղաքականութիւնն»:

Ներկայացնելով Հայաստանի նախընտրական պատկերը, թերթը պնդում է, թէ պատերազմը, տնտեսական աւերածութիւնները, քաղաքական ճգնաժամը հասարակական գիտակցութիւնում կապում են Լեւոն Տէր-Պետրոսեանի անուան հետ: Արթուր Բաղդասարեանը, մեկնաբանի կարծիքով, «ամբո-

խավարական հետտրուութեան շնորհիւ ունի կայուն ընտրազանգուած. սոցիոլոգների գնահատականներով՝ մինչեւ 15 տոկոս»:

Ըստ թերթի՝ Վահան Յովհաննիսեանի Դաշնակցութիւնը Հայաստանում նոյնպէս ունի կայուն ընտրազանգուած՝ 10 տոկոս:

Իսկ Արտաշէս Գեղամեանը, յօդուածագրի կարծիքով, «անցած դարի հակասական գործիչ է, որը խորհրդարանական ընտրութիւններում պարտութիւնից դասեր չքաղելով, իր քարոզարշաւը կառուցում է անդէմ եւ ոչ հրատապ կարգախօսների վրայ»:

«Հայաստանի քաղաքացիները գլոբալ սոցիալական ցնցումներ չեն ցանկանում, ուստի չեղափոխութիւնը Հայաստանում, ըստ երեւոյթի, չեղեալ է յայտարարուած», - եզրափակում է թերթը:

ՐԱՅԱՍՏԱՆՈՒՄ Է ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՊԵՏՐՈՒՄԱՅԻ ՆԱԽԱԳԱՐԸ

Պաշտօնական այցով Հայաստան է ժամանել Ռուսաստանի Պետդոմայի նախագահ Բորիս Գրիգորովը:

Ընդունելով ռուսաստանցի գործընկերները՝ Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Տիգրան Թորոսեանը վստահութիւն է յայտնել, որ այցը սկիզբ կը դնի երկու երկրների միջեւ որակական նոր յարաբերութիւնների, որոնք կը համապատասխանեն նոր հնարաւորութիւններին ու նոր հեռանկարներին:

Ազգային ժողովի նախագահը բարձր գնահատական է տուել նաեւ միջազգային կառուցներում համագործակցութեանը, նշելով, այնուհանդերձ, որ չօգտագործուած շատ հնարաւորութիւններ կան:

Տիգրան Թորոսեանի գնահատմամբ՝ հայ - ռուսական միջխորհրդարանական համագործակցու-

թիւնը չի կարող սահմանափակուել օրէնսդրական շրջանակներում, այլ նաեւ պէտք է աջակցութիւն ցուցաբերի այլ ոլորտներում համագործակցութեանը՝ գիտամշակութային, կրթական, տնտեսական խնդիրների լուծման համար:

Բորիս Գրիգորովը նոյնպէս նշել է միջազգային կառուցներում երկու երկրների խորհրդարանական պատուիրակութիւնների համագործակցութեան խորացման անհրաժեշտութիւնը:

Պետդոմայի նախագահը յոյս է յայտնել, որ 2008-ին ապրանքաշրջանառութիւնը երկու երկրների միջեւ կը հասնի մէկ միլիարդ դոլարի, որը որակական նոր մակարդակ է բնորոշում: Նա նշել է, որ ռուս գործարարները Հայաստանում օրէնջօր աւելացող ներդրումներ են անում:

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՇՏԱԲԸ ԿԸ ՄԵՂԱԴՐԵ

Շարունակուած էջ 1-էն

Հաղորդագրութիւնը նոյնպէս կը տեղեկացնէ նաեւ որ, Յունուար 28-ին Կապանի ոստիկանութեան աշխատակիցները բռնի ուժով փակած են Լեւոն Տէր-Պետրոսեանի Կապանի նախընտրական շտաբը, իսկ Յունուար 27-ի գիշերը անյայտ անձինք պոկած են Լեւոն Տէր-Պետրոսեանի Վանաձորի նախընտրական շտաբի ցուցանակը եւ մօտակայքը փակցուած գովազդային պաստառը:

Շտաբը կը յայտնէ, որ Երեւանի պետապետտեսչութեան աշխատակիցները տուգանային հրապարակ տարած են Լեւոն Տէր-

Պետրոսեանի նախընտրական ավտոթերուն մասնակցած ինքնաշարժերը:

Նախընտրական շտաբը կը գանգատի նաեւ, որ Հանրային հեռուստատեսութիւնը, խեղաթիւրուած եւ իրականութեան հիմնապատասխանող տեղեկութիւններ կը տարածէ Լեւոն Տէր-Պետրոսեանի նախընտրական այցերու վերաբերեալ:

Յայտարարութիւնը կ'եզրակացնէ որ, այս գործողութիւնները նպատակ ունին կասեցնելու նախագահական ընտրութիւններուն Լեւոն Տէր-Պետրոսեանի յաղթարշաւը եւ նախընտրական իրավիճակը դուրս բերել վերահսկողութենէ:

ՄԱՍԻՍ  
ԱՄԵՆԱՎԱՍՏԱԶԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

**ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

**ՄԻԹԵ՞ ՄԵՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԲՆԱԶԴ ՉՈՒՆԵՆՔ ԾԻՇՏ  
ՆԱԽԱԳԱՐ ԸՆՏՐԵԼՈՒ, ՈՐ ԿԱՇԱՌՔՆԵՐՈՎ, ՈՒԺԻ  
ԾՆՇՄԱՍԲ՝ «ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԳՈՂԱՑՈՂ»  
ՆԱԽԱԳԱՐ ԸՆԴՈՒՆԵՆՔ...**

Մեր ազատ, անկախ երկրի սահմանադրութիւնը յարգելու հրամայականը՝ օրէնսդրական, տնտեսական եւ ուժային համակարգի փրկութիւնը՝ պէտք է դառնայ շարժող ուժը, որպէսզի մենք ազգովին համարմբուենք Լեւոն Տէր-Պետրոսեանի շուրջը:

Հայրենիքի մէջ տեղի ունեցած երեք բազմամարդ հանրահաւաքները գալիս են «ասելու, որ ժողովուրդը յոգնել է երկրում տեղի ունեցող՝ անպարկեշտ, անհեռանկար, անպագայ ազգային արդէտներից...»

Մահամարութիւն նշանակում է օրէնք, օրէնք նշանակում է բարոյական նորմ, բարոյական նորմ նշանակում է յարգել օրէնքը եւ ապրել համաձայն կեանքի: Խղճի քաջութիւն ունենալ, յարգել եւ հաշուի նստել, ուրիշ տեսակէտների հետ եւս:

Ինքնաբեմականացումը եւ հաճոյակատարներով շրջապատուելը՝ տղամարդկութիւն չէ: Ինչի՞ համար սկզբունք սարքել նրանից՝ ինչ պէտք է լինել: Հայաստանի ապագայի բեկումը, օրէնսդրութեան աղաւաղումը՝ չեն համապատասխանում ժողովրդի շահերին: Հասարակական կարծիքը ոտնահարուած է...

Մամուլը, հեռուստակիրանը, բռնի կապանքների տակ դնել հակառակորդ թեկնածուի առաջ, ժողովրդին վախի մթնոլորտի մէջ պահել, բռնութիւնների ենթարկել: Միթէ՞ ժողովուրդը պատանդ է իր իսկ երկրում, իր ծննդավայրում...

Մէկ տասնամեակը բաւական էր: Որպէսզի իրական տղամարդու պէս լուծ՝ ինչպիսի, հայրենասէր, մեծ քաղաքագէտ, պետական գործիչ, ապագայի տեսլականով ու պատմական փորձառութեամբ զինուած, հիանալի մտածող՝ Լեւոն Տէր-Պետրոսեանը վերադառնայ, տէր կանգնի երկրին, եւ շարունակի իր ընդհատուած գործը:

Մեզ պէտք է նախագահ, որը ունենայ ճշմարտութիւն պնդելու քաջութիւն, վճռաբեկ իմաստութիւն, անկաշառ ազնուութիւն, որը իր դեկավարելու սխտեմով՝ օրինակ ծառայի երիտասարդ սերնդի համար: Որպէսզի եկող սերունդը օրինապահօրէն՝ ի շահ ժողովրդի, ոչ թէ ի շահ անհատների, ազնիւ ու անկաշառ դեկավարի երկիրը: Որպէսզի ազգային արժէքները իրենց տեղերը դրուեն, ազգի մեծերը ըստ արժանուոյն զնահատուեն, ոչ թէ յայնուեն մշակույթի ոլորտից դուրս...

Որպէսզի մտաւորականը ունենայ արժանապատիւ ապրելու հնա-

րաւորութիւն, եւ երկիրը չլքի:

Որպէսզի հասարակութեան միջնախաւի արժանապատուութիւնը չոտնահարուի՝ տնտեսապէս եւ հոգեպէս: Այդ հիանալի միջին խաւը, որը անօգնական ու յուսահատ է դարձել իր իսկ երկրում, եւ կորցրել նորմալ կեանքի երազանքը... Ամէն մարդ թող գնա միանայ իր երամին, եւ ապրի բնութիւնից պարզեւ ստացած իր միակ կեանքը: Իսկ օտար երկրներում ծուարած հայաստանահայն էլ միանայ իր երամին եւ երկրեղկուած ընտանիքին՝ որին ապաստում է անհամբեր...

Վահան Տէրեանը «Մի Խառնէք մեզ...» բանաստեղծութեան մէջ այսպէս է ասել՝

«Բարբարոսներ շատ կը գան ու կ'անցնեն անհետ,

Արքայական խօսքը մեր՝ կը մնայ յաւէտ:

Ձի հասկանայ ձեր հոգին եւ ծոյլ եւ օտար,

Տաճար է մեր երկիրը՝ սուրբ է ամէն քար:

Արիացի՛ր, սիրտ իմ, ե՛լ հաւատով տոկուն,

Կանգնի՛ր հպարտ, որպէս լոյս՝ լեռն է մեր կանգուն»:

Պատմական բազմաթիւ դրուագներ փաստել են, որ բոլոր յեղափոխութիւններից, կամ սխտեմից ուրիշ սխտեմի անցնելու ժամանակահատուածներում էլ՝ անխուսափելի է եղել կեանքի վատթարացումը, տնտեսութեան անկումը, անօրէնութիւնը եւ այլն՝ - օրինակները բազմաթիւ են: Մեղաւորներ փնտուելը, եւ առաջին նախագահի վրայ ամէն բան բարդելը անարդարացի էր: Ժամանակը պէտք է օգնէր... Եւ օգնէր: 1994ից երկիրը սկսեց յաղթահարել տնտեսական անկումը, երեւացող աճ ունեցաւ, յաղթահարուեց էներգետիկ ճգնաժամը: Կեանքի մակարդակը կամաց-կամաց տեղաշարժ եղաւ, ամենակարեւորը աւարտուեց Արցախի պատերազմը:

Դժուար է չհամաձայնուել, որ դա այնպիսի սխրանք ու նուաճում էր Լեւոն Տէր-Պետրոսեանի համար, որն իր նմանը չի ունեցել, հայ ժողովրդի նորագոյն պատմութեան մէջ...

Միթէ՞, մեր փշոզութիւնը այնքան կարճ է,

որ ցուրտ ու մութ օրերը փշոզում ենք,

Իսկ խորհրդարանի կոտորածը մոռանում...

«Արդարութիւն» Սիիւնֆախայ մտաւորական Եռյնախոհների յանձնախումբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ  
ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԵՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ**

Իմ կարծիքով իր խորքում այսօրուայ նախագահական ընտրութիւնները ընթացիկ չեն: Այս դէպքում հայ ժողովուրդը ոչ միայն պիտի որոշի իր հետագայ պատմութեան ուղին, այլ նաեւ պիտի բնորոշէ ինքն իրեն, պիտի ճշգրտի իր ազգային ինքնութիւնը, իր ազգային առանձնայատկութիւնները: Այդ անելով նա այլ ժողովուրդներին պիտի ներկայանայ իր իսկական դիմագծով, իր խորքով, իր բարեմասնութիւններով: Այս կտրուածքով մենք նկատում ենք երկու իրարամերժ մօտեցումներ, հարցադրումներ՝ առարկայական եւ հայ ժողովրդի պատմական փորձառութեամբ հիմնաւորուած եւ կեղծ, հնարովի, վիրաւորական, ստորացուցիչ:

Հայկ Նահապետից սկսող հայ պատմութիւնը հայուն բնութագրում է որպէս բռնութեան դէմ, ստրկամտութեան դէմ պայքարող մի հաւաքականութիւն: Այդ աւանդութիւնը շարունակում է Սասնայ Ծռերէ կտորը: Այդ ամբաստանում է Վարդանանցով: Այնպէս է ստացուում, որ հայ ազգի պատմական հոլովոյթի ողջ ընթացքը ազատագրական պայքարի պատմութիւն է: Նոր ժամանակներում, երբ հայ ազատագրական պայքարը թեւակոխում է իր նոր փուլը եւ սկսում են հիմնաւորել ազգային ազատագրական պայքարի գաղափարախօսութիւնն ու կազմակերպուել կուսակցութիւններ (Մատրասեան խմբակից սկսած), նրանցից իւրաքանչիւրը վեր է հանում հայ ժողովրդի ժողովրդապետական միտումները, ազատատենչութիւնը, յանուն բարու, արդարի ու զեղեցիկի համար պայքարելու նրա վճռականութիւնը: Հայ մտաւորականութիւնը իւրովի զարգացրեց ֆրանսական յեղափոխութեան, իտալական կարիպալտիականների ու ռուսական սոցիալ-դեմոկրատների գաղափարները: Օսմանեան բռնատիրական պայմաններում հայերը կարողացան մշակել հնարաւոր ամէնից ժողովրդապետական ազգային սահմանադրութիւնը: Հայտնաւորեցին ինքնապաշտպանութիւնը մի անգամ եւս բացառապատկան Արցախի ազատագրութեան համար մղուած պայքարում:

Հակառակ այս պատմական իրականութեան այսօր հանդէս են գալիս այնպիսի ինքնակոչ ուժեր, այնպիսի վայ գաղափարախօսներ ու պետական գործիչներ, որոնք ցանկանում են հայուն ներկայաց-

նել որպէս ստրկամիտ, որպէս հակաժողովրդական մտայնութեան տէր մի ազգ, որին հնարաւոր է դեկավարել միայն բռնութեամբ, վախի մթնոլորտում: Այդ դիտում են որպէս հայու «մենտալիտետ»:

Դեռ հինգ տարի առաջ սոյն գաղափարախօսութեան հիմնադիրներին մէկը, որը ցանկանում է այժմ դառնալ Հայաստանի Նախագահ՝ Սերժ Սարգսեանը, իրար էր հակադրում եւրոպական ու հայկական «մենտալիտետները» պնդելով, որ հայկականի համար խոտոր են ժողովրդապետական շարքերութիւնները եւ ընկերութեան դեմոկրատական կառուցը: Ժամանակին սոյն սխալ, վնասակար ու հիւանդագին տեսակէտները հանգամանօրէն քննադատուեցին, նշելով որ այն, որ որոշ իմաստով, սոյն մարդիկ հաստատում են թրքական այն տեսակէտը, որ հայուն դեկավարելու համար անհրաժեշտ է նրան միշտ ցաւցնել, արիւնոտել, ազատագրել, որ հայը «կատաղում է», երբ նրան ազատութիւն է տրուում:

Այս վայ գաղափարախօսներն ու ազգային առաջնորդները իրենց սոյն տեսութեան որպէս գործնական հիմնաւորում առաջ են քաշում Խորհրդարանում կատարուած հայ քաղաքական նոր մտքի ջարդը: Նրանք միտում են ապացուցել, որ Հայաստանի Հանրապետութեան կեանքը բնական հոռնի մէջ մտաւ, Հանրապետութեան տնտեսական, բնակչային, մշակութային կեանքը իրաւ զարգացման ընթացքի մէջ դրուեց Ազգային ժողովի մէջ կատարուած սպանութիւններով ու նրանից յետոյ տիրող բռնատիրական կարգավիճակով:

Արդի ընտրութեան միջոցով հայ ժողովուրդը ոչ միայն պիտի ընտրի իր նախագահին, այլ առաջին հերթին պիտի որոշի թէ արդեօք ճիշդ են իրեն տրուած այդ բնութագրումները, ընդունում է արդեօք ինքը իրեն վերագրուած այդ կեղծ, սխալ, վիրաւորական ու ստորացուցիչ յատկանիշերը:

Վերոյիշեալ վայ գաղափարախօսները հայուն վերագրում են նաեւ անկաշուն հայրենասիրութիւն: Նրանք գտնում են, որ «որտեղ հաց, այնտեղ կաց» մտայնութիւնը բնորոշ է հայու մենտալիտետին: Նախ նշենք, որ աշխարհի ժողովուրդների զգալի մեծամասնութիւնը ունի իր սփիւռքը: Նշենք մի քանիսին:

Հրեաների փոքրամասնութիւնն

Շաբ.ը էջ 17

*The Quality and Safe Choice for Your Child's High School Education*

**AGBU HIGH SCHOOL – PASADENA**

**OPEN ENROLLMENT FOR 2008-2009**

*Grades 9-12*

The administration will be happy to meet with you, answer your questions and give you a campus tour.

Please call (626) 794-0363

ԶԵԿՈՒՅՈՒՄ

# ՎԱՐԴՂԵՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ ԼՐԱԳՐՈՂԸ

Ծ.Խ. Սոյն յօդուածը կը հանդիսանայ արձանագրութիւնը այն գեկուցում-ելոյթին, գոր կարողաց ԲԺ. Յարութիւն Սաղոեան, Կիրակի 13 Յունուար, 2008, Պէշկէօքիւրեան սրահէն ներս տեղի ունեցած տարաբախտ հեղինակ Վարդղէս Պետրոսեանի ծննդեան 75-ամեակին նուիրուած յուշ-երեկոյին:

Յօդուածէն զեղչուած են պարագայական արտայայտութիւններ:

Ելոյթի հիմնական թեման այն է որ խմբագիր ըլլալու հանգամանքը բաւականին բարդ եւ դժուարին հանգամանք մըն է, եւ կը պահանջէ յատկանիշներ որոնք պատահական մտաւորականի, մտածողի, կամ գրողի յատկանիշերէն շատ աւելի անդին կ'երթան: Որեւէ ինքզինք յարգող հրատարակութիւն կամ մամուլ, իմ համոզումով, իր խմբագրի նկարագրի, անոր էութեան արտացոլացումն է, երեւոյթ որ վարդղէս Պետրոսեանի մօտ յատկապէս շեշտուած էր: Իր պարագային, կարելի չէր անջատել թէ ուր կը վերջանար հրատարակութիւնը, եւ ուր կը սկսէր գրականութիւնը, այնքան որ այս երկուքը գիրար կ'ամբողջացնէին եւ իրարմով պայմանաւորուած էին: Այլ խօսքով, գրող եւ խմբագիր նոյնացած էին իր մէջ:

\*\*\*

Ծնած 1932 թուականին Աշտարակ քաղաքի մէջ: Պետրոսեան պիտի աւարտէր Երեւանի Պետական Համալսարանի ժուրնալիստական, լրագրական ֆաքուլտետը: Զինուած այդ ասպարէզի լաւագոյն գիտելիքներով, գիտակից իր լրագրողի առաքելութեան, եւ անոր խառնելով իր նկարագրային արժանիքները, եւ խառնուած քային մասնաշատկութիւնները, Պետրոսեան պիտի յաջողէր, փրօֆեսորնալիզմի ամենաբարձր մակարդակի վրայ, հայ ժողովուրդին ծառայութիւն մատուցանել գրական, ազգային-հասարակական եւ քաղաքական մարզերէն ներս:

Վ. Պետրոսեան իր խմբագրի ասպարէզը սկսած է կանուխէն, տակաւին ուսանողական տարիքէն, համալսարանական թերթի մը մէջ: Ապա, 1954-1955 թուականներուն, շրջանային թերթ՝ «Պայազէտի Կոլխոզնիկ» ի խմբագիր, 55-57՝ «Սովետական Հայաստան» եւ «Աւանգարտ» թերթերու մէջ: 1961-1968ը եղած է «Պիոներ Կանչ» թերթի խմբագիր, իսկ 1966էն սկսեալ եղած է հանրաժանօթ «Գարուն» ամսագրի կնքահայրը եւ երկար տարիներու անոր խմբագիրը, հրատարակելով շուրջ 100 թիւ «Գարուն»: Վերջապէս եղած է «Երկիր Նայիրի» թերթի խմբագիր:

«Որպէս գրող եւ մանաւանդ լրագրող, Վ. Պետրոսեան, իր ողջ էութեամբ, կապուած էր երիտասարդութեան հետ, գայն չուզող հարցերուն, որոնումներն եւ սայթաքումներուն: Փորձած է հասկնալ իր եւ մեր ժամանակը, նոր սերունդի առջեւ ծառայած բարդութիւնները»: («Գարուն» ամսագիր, Յրդ թիւ):»

Իր մահուան վաղորդայինն, 22 Ապրիլ 1994, բանաստեղծուհի Մարօ Մարգարեան, «Երկիր Նայիրի» մէջ պիտի գրէր.

«Նրա համար «ոչ» բառը չկար, ում հարկաւոր էր, իսկոյն գտնուած էր ելքն ու միջոցը, եւ օգնութեան հասնում, դուռ եւ ճամբայ բացում եւ թեթեւացում վիճակը»:

Իր մահուան առիթով, Լեւոն Անանեան, Հայաստանի Գրողներու Միութեան վարչութեան նախագահը, հետեւեալը պիտի վկայէր իր նախորդին մասին.

«Ապրեց յախուռն, ողբերգական կեանք, յայտնուեցաւ լեռան գագաթին, բայց եւ վիհի խորութիւնը չափեց: Ժաշակեց թէ փառքի նեկտարը, թէ տառապանքի լեղին: Այսօր նա չկայ, բայց եթէ ողջ լինէր, հաւատացէք, կը ծնուէր եւս մի շունդալից, տխուր խոստովանութիւն, թէ ինչպէս են կորուսում, ոտնատակ տրուած հայ ժողովուրդի բարոյական կողմնորոշումները, եւ թէ ուր ենք այսպէս գլորուած օր ցերեկով, գոհաբերելով մեր մտաւորականին, մեր բարոյականութիւնը, մեզ... իսկական գրողի ժամանակի հաշուարկը սկսում է յետմահու, ուրեմն եւ Վ. Պետրոսեանի ժամանակը»:

Սոյն վկայութիւնները եւ բազմաթիւ ուրիշներ, առնուած են Պետրոսեանի այրիին, Սոնա Տիգրանեանի հեղինակած «Յետմահու-Անմահութիւն» խորագիրը կրող գրքէն, նուիրուած իր ամուսնոյն եւ անոր ժամանակին: Սոնան իր գրքին մէջ հետեւեալը կը գրէ.

«Մարդը ապրում է այնքան, որքան յիշում են նրան»:

\*\*\*

Վ. Պետրոսեան լրագրողի մասին վկայութիւն մը եւս, «Ոգնի» երգիծաթերթի խմբագիր, Արամայիս Սահակեանէն. «Պետրոսեան

մի շարժուն անդիկ էր, յաւերժական շարժիչ: Նա միշտ նոր երեւոյթներ էր տեսնում, միշտ ձեռքը դնում հասարակական կեանքի ամենակարեւոր զարկերակին: Ունէր հասարակական, պետական վիթխարի մտածողութիւն»:

Այդ մտածողութեան վերաբերող հետեւեալ թեմաները, Վ. Պետրոսեան լրագրողի, գրողի եւ պետական մտածողի, կ'արժանանան մեր ուշադրութեան.

1. Հայրենասիրութիւն
2. Ղարաբաղեան Հարց
3. Սումկայիթեան Յեղասպանութիւն
4. Հայ-թուրք փոխ-յարաբերութիւններ


### 1. ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Վ. Պետրոսեանին սիրելի է իր հայրենիքը, անոր անցեալը, պատմութիւնը, ներկան եւ մանաւանդ ապագայ լինելութիւնը: Այս յատկանիշերը կը գտնենք յատկապէս իր «Հայկական Էսքիզ»ներ գրքին մէջ, հրատարակուած 1969 թուականին: Ըստ իրեն, անցեալը եւ ներկան պէտք է խանգարեն գիրար:

Վ. Պետրոսեան հարց կու տայ. «Ի՞նչ է Հայրենիքը» եւ կը պատասխանէ. «Հայրենիքը այն է ինչ չի կարելի պատմել ուրիշին»: Այլ խօսքով, հարկաւոր է ճանչնալ օղբ, ջուրը, բնութիւնը, ժողովուրդը: Լիարժէք հայրենասէր է ան որ կարող է իր մտքով, սրտով, երկար եւ բազմաթիւ տարիներու վրայ, սիրելի հայրենի ժողովուրդին եւ հայրենի հողին: Եւ սիրել ոչ թէ կոյր, վերացական սիրով, այլ իսկական, անվախ հայեցքի վրայ հիմնուած զգացումով: Հայրենասիրութեան նման ենթահողի վրայ կը խմբագրուէր նաեւ «Գարուն» ամսագիրը: Հայաստանի Գրողներու Միութեան 14 տարիներու վրայ երկարող իր նախագահութեան շրջանին, Պետրոսեան ամբողջ աշխարհի ուշադրութիւնը կը հրահրէր հայ գրականութեան վրայ: Մանաւանդ պէտք է յիշել «Թարգմանչաց Տօները»: Ինք մեծ դեր կատարեց, գրականութեան միջոցաւ Հայաստանը դէպի լայն աշխարհ տանելու առաքելութեան մէջ: Աշխարհի շատ գրողներ հայ գրականութեան մէջ կը մտնէին իր միջոցաւ:

### 2. ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱՐՑ

Յատկանշական է հոս նշել Վ. Պետրոսեանի ելոյթը Խ. Միութեան փլուզումէն առաջ, անոր առաջին քարտուղար Մ. Կորպաչովի ներկայութեան, Գերագոյն Խորհուրդի նախագահութեան մէկ նիստին, խոր-



հուրդ՝ որուն մաս կը կազմէր ինք: Պետրոսեան բոլորին կ'ուզէ յիշեցնել որ Լեւոնային Ղարաբաղը, իբրեւ ազգային տերիտորեալ միաւոր, անբաժանելի մասն է ոչ թէ Ատրպէյճանի, այլ այն ատենուայ Խ. Միութեան: Սոյն ելոյթը տեղի կ'ունենար Մոսկուայի մէջ, 1988 թուականի Յուլիս 18ին: Անկէ առաջ, երբ տակաւին Սումկայիթը չէր պատահած, Պաքուի մէջ, Պետրոսեան կը հանդիպէր Ալիեւին, այսօրուայ Ալիեւին հօրը, եւ իրեն կ'ըսէր.

«Գոնէ դուք ձեր մէջ, գիտէք թէ Ղարաբաղը ձերը չէ»:

Մոսկուայի իր ելոյթին մէջ Պետրոսեան կը պնդէր.

«Մի ելակէտ պէտք է անվիճելի լինի. Լեւոնային Ղարաբաղը այլեւս չի կարող մնալ Ատրպէյճանի վարչական կառուցուածքին մէջ, եւ պրոպլեմի ամէն մի լուծում որ հաշուի չի առնի այս ճշմարտութիւնը, որին Ղարաբաղի հայ ժողովուրդը հասել է տասնամեակներու ցաւատանջ մաքառումով, պարզապէս աղիտաբեր կը լինի»: Ապա, Պետրոսեան փաստեր կը բերէ Ղարաբաղի հայ ժողովուրդի պատկանելիութեան մասին, յոյն, հումէլացի, պարսիկ պատմաբաններէն, մանաւանդ «Քարէ Վկաներէն», եւ այլն:

«Լեւոնային Ղարաբաղի շարունակութիւնը Ատրպէյճանի վարչական կառուցուածքէն ներս» Պետրոսեան կը գտնէ. «Հակատարածաբան, հակամարդկային, հակաբարոյական եւ հակաբնական, մանաւանդ սոցիալիստական Հանրապետութեան մը համար»:

### 2. ՍՈՒՄԿԱՅԻԹԵԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Իր ելոյթի ընթացքին, Կորպաչովի ներկայութեան, Պետրոսեան կը խօսի հայ խաղաղ քաղաքացիներու Սումկայիթեան ջարդի

Շաբ.ը էջ 7



**A.B.A. INSURANCE SERVICES**

Commercial  
Auto  
Fire  
Life  
Health



Thanks to Our Valued Clients



Season's Greetings  
Շնորհակալութիւններ  
Պետրոս ԵՒ ՍԻԱՍԱՆԹՕ  
ՄԱՐՈՆԵԱՆ

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205  
ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



# ՎԱՐԴՊԵՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ ԼՐԱԳՐՈՂԸ

Շարունակում էք 6-էն

մասին, որուն 20-ամեակն է այսօր: Ինք այդ ջարդը կը նկարագրէ իբրև ցեղասպանութեան փորձ: Այդ նիստի ընթացքին, առաջին անգամ պիտի բաց լսուէր Հայաստանի եւ Ղարաբաղի ձայնը:

Կորպաչով իրեն պիտի հարցունէր. «Ինչո՞ւ էք դուք նման բնութագրում տալիս Սուվկայիթի մէջ կատարուածին, երբ որ դա հրոսակների գործն էր եւ ուզած էք դա վերագրել ողջ Ատրպէյճանին, վերագրել նրա կամ չգիտեմ ում»:

Պետրոսեան կը պնդէ. «Ես ասացի Սուվկայիթում ցեղասպանութեան փորձ է կատարուել»:

Կորպաչով. «Դուք այնպիսի մեղադրանք էք շարտուում, որոնց համար ափսոսալու էք ձեր ողջ կեանքում»: Կորպաչովի այս խօսքը միթէ սպառնալիք մը չի նկատուիր Պետրոսեանի նկատմամբ, որ յետոյ պիտի յանգէր իրեն հանդէպ թշնամական վերաբերմունքի:

Կորպաչովեան վերաբերմունքի մասին, յետագային, Պետրոսեան պիտի ընէր հետեւեալ արժեւորումը.

«Իսկ Սուվկայիթեան եղեռնագործութեան գնահատութեան հարցում, Կորպաչովի դիրքորոշումը պարզապէս քաղաքական յանցագործութիւն էր: Նա սքողեց կատարուածի բուն էութիւնը: Յետոյ, Մոսկուայում բեմադրուեց Սուվկայիթեան դատավարութեան ֆարսը եւ պետական յանցագործներուն ու վարձու մարդասպանները ազգային հերոսներ հռչակուեցին Ատրպէյճանում»:

«Այս ամէնի համար պատմութեան առաջ մի օր պատասխան պիտի տայ, «վերակառուցման» հայրը:

Ինչ հեզնանք: Նոյն տիրահռչակ «վերակառուցման հայրը» Կորպաչով, իր երկրի, Խ. Միութեան փլուզման վրայ հակելէ ետք, փոխանակ «այս ամէնի համար, պատմութեան առաջ մի օր պատասխան տալու», ազատ համարձակ կը պտտի աշխարհով մէկ, եւ նոյնիսկ Ամերիկայի մէջ, ունի իր չակերտուած «բարեսիրական հիմնարկը»...

### 4. ՀԱՅ-ԹՈՒՐԿ

#### ՓՈՆ-ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս յարաբերութիւնները, դիտուած Վ. Պետրոսեանի «Կրակէ Շապիկ» հրաշալի վէպին ընդմէջէն, ունին նորարարութեան, մարգարէական շունչ, վէպ որ ամէն հայու պարտաւորութիւն պէտք է սեպուի անոր ընթերցումը: Մանաւանդ այս օրերուն, երբ հայ-թուրք փոխ-յարաբերութիւնները սուր հանգամանք ստացած են: Յաւոք

սրտի «Կրակէ Շապիկ» գիրքը գրեթէ անգտանելի է այսօր: Անոր լոյս տեսնելուն, 1986 թուականին, Երեւանի մէջ, «Սովետական Հայաստան» հրատարակութիւն, Վ. Պետրոսեան մեղադրուեցաւ ազգադաւուրութեամբ, նոյնիսկ իր գրքերը հրապարակով կրակի տրուեցան: Կորպաչովեան սպառնալիքի գործադրութիւն էր արդեօք: Ինք երբեք ազգայնամոլ չէր, ու երբ այդ գրքի առասպելի համար սկսան գինք մեղադրել, հասարակարգը եւ շատեր չհասկցան կամ չուզեցին հասկնալ վէպին պատգամն ու տարողութիւնը:

Հրատարակութեան հեղինակները կը գրեն գրքի մասին.

«Կրակէ Շապիկ» վէպը նուիրուած է մեր օրերու մարդկանց կեանքի պատկերմանը: Կեդրոնական հերոսը մտաւորական է, հայրենիքից մինչեւ սփիւռքի ամենահեռու անկիւնները ձգտող հետաքրքրութիւնների իր լայն ընդգրկումով, ժամանակի մեծ ու փոքր հոգներով, եւ դարի հրատապ խնդիրներու տենդոտ ինքայնութիւնով»:

Ես կը խորհիմ որ Վ. Պետրոսեանի «Կրակէ Շապիկ» վէպը, ինչպէս նաեւ Վահէ Քաչայի «Մի դաշոյն այս պարտէզին մէջ» վէպը, հայկական ցեղասպանութեան ամբողջ ողբերգութիւնը գեղարուեստականօրէն պատկերացնող գրական գլուխ-գործոցներ են:

«Կրակէ Շապիկ» վէպը իր երեք բաժիններով, շուրջ 600 էջ, հրատարակուած է 1986 թուականին: Կը բաղկանայ 51 թանձր գլուխներէ, որոնց ընթերցումը լուրջ կեդրոնացում կը պահանջէ: Այս գրքով, հեղինակը ցոյց կուտայ հեռատեսութեան եւ մարգարէական նախատեսութեան, նաեւ լրագրական զգայուն «Տոտառութեան» անվիճելի յատկանիշերը: Մանաւանդ երբ այս օրերուն, իր վէպին ասդին թուրքերու պարագային, կարեւոր մտաւորականներ, գրողներ, ինչպիսիք են Օրհան Փամուք, Թանր Աքչամ, Քեմալ Եալչըն, Ռադըպ Չարակօղլու, էլիք Շաֆաք եւ ուրիշներ, սկսած են վկայել հայերու ենթարկուած ցեղասպանութեան մասին, ի տարբերութիւն պետական թուրքիոյ որ տակաւին յամառօրէն կը շարունակէ իր ուրացման քաղաքականութիւնը: Տարի մը առաջ նահատակուող Հրանդ Տինք արդեօք գոհ չէ՞ր այդ քաղաքականութեան:

«Կրակէ Շապիկ» վէպը իր ամբողջութեան մէջ, յատկապէս սակայն իր 35րդ գլուխով, հարագատօրէն կը ներկայացնէ հայ-թուրք փոխ-յարաբերութեանց ամբողջական մէկ պատկերը: Հոն կը գտնենք հայ դատի թղթածրարի

ամբողջական բովանդակութիւնը, թուրքերու հետ մեր յարաբերութեան բոլոր մանրամասնութիւնները, սփիւռքեան մեր խայտաբղետ եւ անբնական կեանքի պայմաններու նկարագրութիւնը, եւ այլն: Այս բոլորը տրուած իրապաշտօրէն եւ գրեթէ պատմական ճշգրտութեամբ: Միայն մէկ դիպուկ եւ կարճ մէջբերում մը, ցոյց տալու համար Պետրոսեանի մտածողութեան նրբութիւնը:

«Որեւէ հայ եւ թուրք երբեք չեն կարող միայն երկուսով լինել: Նրանց արանքում միշտ պիտի գայ նստի երրորդը՝ պատմութիւնը»:

Վ. Պետրոսեանի մօտ, հայեացքը ուղղուած կը մնայ սահմանէն անդին գտնուող տարածքներու վրայ: Իր մէջ վառ է սեփական ժողովուրդի իրաւագրկման սուր գիտակցութիւնը, եւ տառապանքը, շատախօս քաղաքական վերլուծումներէն անդին: «Կրակէ Շապիկ»-ը լոյս կը տեսնէր 1968 թուին, երբ հայ-թուրք երկխօսութիւնը հազիւ դողող կերպով սկսած էր: Պետրոսեան, պատմութիւն եւ գրականութիւն ստեղծած անձ, կը խօսէր թուրքիոյ հետ երկխօսութեան մը մասին, նախապայմանով մը սակայն, որ սկսելէ առաջ, թուրքերը առնուազան պէտք է ներողութիւն խնդրեն կատարուածի համար: Այս չէ՞ միթէ մեր ցեղասպանութեան ճանաչման նախապայմաններէն մէկը:

Վկայութիւն մը եւս, Արամայիս Սահակեանէն, եզրակացութենէ առաջ.

«Նա գրեց «Կրակէ Շապիկ»-ը, բայց միթէ հենց ինքը չայլուեց՞ այդ կրակում, որի մէջ հիմա այլուած ենք մենք: Բարդ, հակա-

սական, ողբերգական վարդգէս Պետրոսեանը այսուհանդերձ իր ժողովուրդի արժանի գաւակն է, նրա գրականութեան, հրապարակախօսութեան երեւելի դէմքը, եւ ուրոյն տեղ է իր համար ապահովել մեր գրականութեան մէջ: Նա կարող էր լինել հայրենիքը կարելիին չափով վերակերտողների շարքերում: Չհասկացա՞ն նրան, թէ չուզեցին, կարելի չէ ասել, եւ ենթադրութիւններ անել, իմաստ չունի»:

Արդեօք որո՞նց կ'ականարկէր Ա. Սահակեան: Ես համոզուած եմ որ իմաստ ունի, գէթ պատմութեան եւ արդարութեան փնտռութիւն համար:

Իր հասցէին շարտուած ազգայնամոլի, ազգադաւի յանցանքները, ես կը խորհիմ որ արդիւնք էին որոշ մարդոց եւ շրջանակներու նախանձի, չըսելու համար անբարեացակամ, թշնամական վերաբերմունքի: Աւելին, իր անկեղծ հայրենասիրութիւնը, խորթ էր Սովետական, Խորհրդային հասարակարգի ապագային, ինչո՞ւ չէ նաեւ հայալնաս քաղաքականութեան եւ միջնորդութիւն: Հետաքրքրականը սակայն, եւ ցաւալին հոն է որ Պետրոսեան ձեւով մը կարողացաւ դիմադրել, վերապրել եւ հասնիլ անկախութեան շրջան: Պատմութեան զարմանալի եւ հեզնական մէկ դարձուածքով, ան գոհ զնաց դարանակալ փամփուշտի մը, Ապրիլ 15, 1994 թուականին, իր ստեղծագործական կեանքի ամենէն փայլուն շրջանին:

Կ'ուզեմ փակել, կրկնելով Սոնա Տիրանեանի խօսքը: «Մարդը ապրում է այնքան, որքան յիշում են նրան», կ'աւելցնէ. «նրան յիշենք սիրով, բարութեամբ, որովհետեւ դա հարկաւոր է մեզի, ապրողներուս»:

COME AND JOIN US FOR AN EVENING OF ROMANCE ORGANIZED BY NSCA



On Valentine's Day  
Thursday, February 14, 2008  
Starting at 8:00 pm

- Enjoy the
- Romantic Ambiance
- French Music
- French Food
- and much more

1060 North Allen Avenue, Pasadena  
For Tickets please call (818) 391-7938  
Tickets: \$50 (No children please)

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ  
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ  
(200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)**

**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ  
1060 N. ALLEN AVE. PASADENA  
ԵՆՈՒՁԱՅՆԵԼ (626) 797-7680**

# ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

## ՐՈՒՆԴ ՏԻՆՔ՝ ՄԵԿ ՏԱՐԻ ԵՏՔ

### ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՂՐԵԱՆ

Կը կարծուէր թէ 1915ի Ցեղասպանութիւնը տեղի ունեցած էր 92 տարիներ առաջ, մինչեւ «Ակօս» թերթի խմբագիր, Հրանդ Տինքի ոճրային գործողութիւնը, 17 տարեկան թուրք պատանիի մը ձեռքով: Տինքի սպանութեամբ, մինչ ան կը նկատուէր 1,500,000 +1 թիւը ցեղասպանութեան զոհերուն, յատկապէս այն հանրային կարծիքի մօտ կը վերահաստատուէր այն տպաւորութիւնը որ տակաւին ի գորու կը մնան այն բոլոր պատճառները որոնք թուրքիան մղեցին գործադրելու 20րդ դարու առաջին Ցեղասպանութիւնը: Առաջին առիթով, պէտք է շեշտել ազգայնամոլութեան երեւոյթը, որմով յատկանշուած է այդ երկիրը եւ իր պետական քաղաքականութիւնը ազգային փոքրամասնութեան նկատմամբ: Այս չէ՞ր միթէ թուրքիոյ ծրագրած ցեղասպանութեան շարժառիթը, 1915 թուականին, որ տակաւին կը շարունակուի մինչեւ այսօր, անոր կուտակելով սուտերու, ուրացումներու եւ սեղմումներու բիրտ քաղաքականութիւն մը: Փոխանակ իր գործած ոճիրը ընդունելու, թուրքիա տակաւին կը շարունակէ իր ուրացման քաղաքականութիւնը եւ այս մէկը չէր բաւեր կարծես, հաստատած է 301 թիւ յօդուած մը իր պատժամիջոցներուն մէջ, որով թրքականութեան դէմ լուրջ քրէական յանցանք կը նկատուի որեւէ հակաթուրք արտայայտութիւն: Այս եղած է թուրք պետութեան գաղափարախօսական ենթակառուցը, եւ որուն լոյսին տակ ալ կը մշակուի որեւէ վերաբերմունք մեղանշողներու նկատմամբ:

Ազգայնամոլական այս տրամադրութիւնն էր որ 17 տարեկան պատանիի մը ձեռքով, իր մահուան պիտի առաջնորդուէր Հրանդ Տինքը, ինչպէս նաեւ Պելճիքայի մայրաքաղաք Պրիւքէի մէջ, եւ Եւրոպայի տարբեր քաղաքներու մէջ տեղի պիտի ունենային հակահայ եւ հակաքրիստ ցոյցեր եւ թշնամական արտայայտութիւններ:

Մինչ թուրքիոյ մէջ, կրիայի քայլերով յառաջ կը տարուին Հրանդ Տինքի սպանութեան հետ կապուած դատա-նստիական հետապնդումները, Օկուր Սամասթի, իր մեղակից ոստիկաններու եւ անոնց ետին գտնուող բուն ոճրագործներու յայտնաբերման աշխատանքները, անդին, իր եղբրական մահէն տարի

մը ետք, աշխարհի տարբեր մասերուն մէջ տեղի կ'ունենան յուշերեկներ, նուիրուած տարաբախտ Հրանդ Տինքի յիշատակին: Սոյն երեկները ունին եկեղեցական եւ աշխարհիկ նկարագիր եւ հանգամանք, նախ յարգելու համար անհետացող լրագրողի, քաղաքա-հասարակական մտածողի, բաց մանաւանդ իր պատկանած ժողովուրդին, եւ իր ապրած երկրին միջեւ երկիւստութեան մը ջատագովին, եւ ապա, խօսելու այն տեսլականին մասին որ ինք ունէր, թուրքիոյ մասին իբրեւ պետութիւն:

Ահա այսպիսի ձեռնարկ մըն էր որ տեղի ունեցաւ Ուրբաթ, Յունուար 25, 2008 թուականին, Հայց. Առաք. Եկեղեցւոյ Առաջնորդարանի Պրպէնքի Գալաչճեան սրահէն ներս, իրապէս խուռներամ բազմութեան մը ներկայութեան: Քիչ մը ամէն շրջանակներու անհատներ փութացած էին ներկայ գտնուելու տպաւորիչ, լաւ ծրագրուած, եւ լաւ գործադրուող յայտագրի մը, որուն հովանաւորութիւնը ստանձնած էր Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեան, եւ որուն կը մասնակցէին Պոլսահայ Միութիւնը, «NAASR» ընկերակցութիւնը, եւ «UCLA»ի Արդի Հայոց Պատմութեան ամպիոնը: Յայտագիրը նկատեցինք տպաւորիչ, քանի որ ելոյթ ունեցողները, սկսելով բացման կարծ խօսքերով, Սիմոն Աճիլաճօղլու, Պոլսահայ Միութեան նախագահ, եւ Նենսի Գոլիկեան, «NAASR»ի կողմէ, անցնելով բուն բանախօսներու Ստեփան Քիւրքճեան, Պոսթըն Կրոյ թերթի թղթակից, Փրոֆ. Թանըր Աքչամ, Մինեսօթա համալսարանի պատմութեան դասախօս, եւ փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեան, «UCLA»ի ամպիոնի վարիչ: Այս երեք բանախօսներուն ելոյթները բարձրորակ բովանդակութիւն ունէին, եւ մեծապէս տպաւորեցին ներկայ ունկնդիրները: Այսպէս Ստեփան Քիւրքճեան ներկայ գտնուած էր տարաբախտ Տինքի յուղարկաւորութեան եւ զգայուն մանրամասնութիւններ տուաւ իր ունեցած տպաւորութեանց մասին: Բացառիկ ելոյթ մըն էր թուրք պատմաբան, եւ հայ ժողովուրդի բարեկամ, մանաւանդ Հրանդ Տինքի մտերիմ ընկեր, փրոֆ. Թանըր Աքչամի ելոյթը, ուր յարգելի փրոֆեսորը կը պատմէր Տինքի ապրումներուն, հաւատամքին եւ ճա-

Մար.ք էջ 18

## Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏԱՐԵՂԱՐԶԻ ՆՇՈՒՄԸ



Յունուար 20, 2008, Կիրակի օրը, յիշատակելի օր մը պիտի մնայ այն բոլոր անձերուն համար, որոնք ներկայ գտնուեցան Ս. Սարգիս Հայց. Առաք. Եկեղեցւոյ Անուանկոչութեան Տօնի առթիւ տեղի ունեցած հանդիսաւոր Ս. Պատարագին, Մատաղ Օրհնէքին, Սարկաւազի ձեռնադրութեան, գնահատական գիրքերու բաշխման եւ վերջապէս պատարագէն ետք ողբացեալ Հրանդ Տինքի նահատակութեան առաջին տարելիցի առիթով հոգեհանգստեան արարողութեան, եւ այս բոլորին աւարտին եկեղեցւոյ կից Մամուլեան սրահէն ներս սիրոյ սեղանին եւ անոր ընկերացող գեղարուեստական յայտագրին եւ գնահատելի նուիրատուութեանց:

Ընթերցողը անշուշտ նշմարած կ'ըլլայ թէ որքան ճոխ, տեսակաւոր եւ լիցքաւորող յայտագիր մըն էր հրամցուած այդ օրը Ս. Սարգիս եկեղեցի ներկայ գտնուողներուն:

Ինծի համար յատկապէս իմաստ ունեցող ներկայութիւն մըն էր այդ օր, Ս. Սարգիս եկեղեցի, քանի որ նախ կը ներկայացնէի «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնը վերոյիշեալ արարողութեանց տօնակատարութեան եւ ապա անձնապէս Ս. Սարգիս եկեղեցին յիշողութեանց եւ ապրումներու վայր հանդիսացած է ինծի համար, 1980-ական թուականներէն սաղին:

Այստեղ կ'ուզեմ նախ մեծապէս գնահատել եւ շնորհաւորել Ս. Սարգիս գորավարի Տօնի եւ եկեղեցւոյ անուանակոչութեան օրուայ առթիւ տեղի ունեցած տեսակաւոր

յայտագրի համար, եկեղեցւոյ երիտասարդ եւ աշխոյժ հովիւ Տ. Նարեկ Ա. Քհնյ. Մատարեանը, եւ իրեն ընկերացող Ծխական Խորհուրդի բոլոր անդամները, որոնք մեծ ձեռնհասութեամբ, սիրով եւ նուիրումով, յաջողութեամբ գործադրեցին ամբողջ յայտագիրը, լուրջ գոհունակութիւն պատճառելով բոլորին: Ընդհանրապէս, «հոգեպարար», «հոգեզմայլ», »լիցքաւորող» արտայայտութիւնները կ'ուղղուին ձեռնարկներուն, որոնք արժանի չեն անոնց: Այս պարագային սակայն, իրապէս կ'արտայայտէին տեղի ունեցող յայտագրի իւրաքանչիւր միաւոր եւ ինչպէս յիշուեցաւ, բազմաթիւ էին այդ միաւորները:

Վերոյիշեալ զոյգ առիթներով տեղի ունեցող Ս. պատարագը մատուցող թեմիս բարեխնամ առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանն էր, առընթերակալութեամբ Տ. Նարեկ Ա. Քհնյ. Մատարեանի: Հոգեպարար պատարագին ամբողջ տեսողութեան ներկայ էր նաեւ նախկին առաջնորդ, գորկարելի է «չինարար» անուանել, Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, որ երբեմն ալ յայտագրի վրայ հակողի դերին մէջ կը գտնուէր:

«Հոգեզմայլ» արտայայտութիւնը պիտի ուղղենք, եւ «Կոմիտասեան» երգեցողութիւնը կատարող Խաչատուրեան դպրաց դասի երգչախումբին, որուն աւելի քան 30 տարիներու վաստակին հետեւողը եւ գնահատողը եղած ենք:

Մար.ք էջ 17

authentic cuisine  
full hookah bar  
VIP membership  
full cocktail bar  
live belly dancing  
live music and DJ

**ATLANTIS**  
RESTAURANT AND NIGHT CLUB  
626.449.4599  
162 N. SIERRA MADRE BLVD.  
PASADENA, CA 91107

# Massis Weekly

Volume 28, No. 02

Saturday, FEBRUARY 2, 2008

## Turkey Criticizes US Democratic Presidential Hopefuls For Armenian Genocide Comments

ANKARA, Turkey (AP) - Turkey has criticized U.S. Democratic presidential hopefuls for backing Armenian Genocide recognition by the US Congress. The Turkish Foreign Ministry said in a statement over the weekend that remarks by Democratic presidential candidates «for the sake of an internal party struggle, offends the Turkish nation.» The statement did not name specific candidates.

Barack Obama issued a statement urging Turkey to acknowledge the 1915 killings of Armenians as Genocide, saying: «As a U.S. senator, I have stood with the Armenian American community in calling for Turkey's acknowledgment of the Armenian Genocide.» The statement, dated Jan. 19, was posted on his campaign Web site.

Another Democratic Presidential hopeful Hillary Clinton has also called for Congressional passage of the Armenian Genocide Resolution and pledged that, as President, she will recognize the Armenian Genocide.

"Our common morality and our nation's credibility as a voice for human rights challenge us to ensure that the Armenian Genocide be recognized and remembered by the Congress and the President of the United States," said Sen. Hillary Clinton (D-NY).

## Armenian Genocide Monument In Wales Desecrated Turkish Protesters Disrupt Holocaust And Hrant Dink Commemorations



Armenian Genocide monument in Cardiff: before and after desecrated

CARDIFF -- Armenians and Welsh gathered to pray for victims of all genocides on the United Kingdom's Holocaust Memorial Day and to remember the first anniversary of the assassination of Hrant Dink, the journalist killed for raising the issue of the Armenian Genocide in the Turkish press.

The small Welsh Armenian community found that the ornate slate cross on the monument was smashed into pieces with a hammer left at the scene. The Armenian Genocide Monument was desecrated on a symbolic day designated to recall the events, consequences and lessons of the darkest days of human history in a deliberate and premeditated act of vandalism.

The ceremony went ahead. Eminent Welshman Robin Gwyndaf prayed in Welsh and English, Assembly Member Jenny Randerson called on the UK government to recognise the Armenian Genocide and Martin Shipton, representing the National Union of Journalists and chief reporter for the "Western Mail", gave the tribute to Hrant Dink. Solemn prayers for all genocide victims and speeches were disrupted by continual taunting by pro-

testors using a megaphone. Copies of the book "Remember" were presented to the guest speakers representing the theme of the occasion.

One of the Welsh Armenians said "This is our holiest shrine. Our grandparents who perished in the Genocide do not have marked graves. This is where we remember them"

It is ironic that the main Holocaust Memorial Day commemoration in Liverpool again failed to remember the Armenian victims of the first genocide in the 20<sup>th</sup> century. The political decision runs against the core purpose of this solemn day, and shows that the lessons from the last century have yet to be fully grasped by even the organisers of HMD.

Eilian Williams of Wales Armenia Solidarity called on "Armenians and other sympathisers throughout the world to send messages of support to Wales Armenia Solidarity (eilian@nant.wanadoo.co.uk) to be forwarded to the Prime Minister of the National Assembly of Wales. We also challenge the UK government and the Turkish Embassy to condemn this attack on a peaceful ethnic and religious minority."

## Levon Ter-Petrosian: Karabakh Has Been Armenian For 3,000 Years Will Remain Armenian For Another 3,000

YEREVAN -- Former President Levon Ter-Petrosian brushed aside on Wednesday accusations of defeatism leveled against him by Robert Kocharian and reaffirmed his stated commitment to seeking a compromise solution to the Nagorno-Karabakh conflict.

Campaigning in the eastern Gegharkunik region, the opposition candidate said he will make peace with Azerbaijan and ensure continued Armenian control over Karabakh if he wins the upcoming presidential election.

Reacting to Ter-Petrosian's harsh anti-government rhetoric at the weekend, Kocharian renewed his allegations that his predecessor is ready to place the disputed region back under Azerbaijani rule. He said Ter-Petrosian would go so far as to disband Armenia's armed forces in order to "get chummy with Azerbaijan."

"If he takes cooperation of peoples and good neighborhood as chumminess, that is the expression of his cultural level, his state of mind," Ter-Petrosian shot back at a campaign rally in Vartenis, a small town near the eastern shore of Lake Sevan.

"Yes, I am stating that the land which has been Armenian for 3,000 years will remain Armenian for another 3,000," he said, referring to Karabakh. "That achievement has to be formalized by an international treaty, after which we will cooperate and establish good-neighborly relations with Azerbaijan."

"Because our main conduit to the outside world is Azerbaijan. Azerbaijani railway used to handle 85 percent of Armenia's external cargo turnover."

During his speech in the unem-



Levon Ter-Petrosian with supporters in Vartenis

ployment-stricken area, Ter-Petrosian again charged that Khocharian-Sarkosian decade-long rule has been "based" on vote rigging and the 1999 terrorist attack on the Armenian parliament.

"Imagine Robert Kocharian's rule continuing for another ten years in the form of Serzh Sarkisian," he told hundreds of people rallying in Vartenis. "This is such a nightmarish prospect which I wouldn't wish even to my enemies."

"Take back the victories which were stolen from you in [the presidential elections of] 1998 and 2003. This is your victory. Take care of your victory," added outspoken ex-president.

"Yerevan is with us," claimed one of his top allies, Hanrapetutyun party leader Aram Sarkisian. "We've won there. We only have to prevail in the regions."

Ter-Petrosian attracted visibly strong voter interest during his latest campaign trip, with hundreds of people attending his rallies in Vartenis, the nearby town of Martuni and several local villages. In two of those villages, opposition supporters slaughtered sheep and danced to folk music as they greeted Ter-Petrosian.

## OSCE Deplores Excessive TV Coverage Of Serzh Sarkisian

YEREVAN -- Observers from the Organization for Security and Cooperation in Europe criticized Armenia's leading broadcasters on Wednesday for what they described as a tendentious coverage of the presidential election campaign favoring Prime Minister Serzh Sarkisian.

They said most major local TV channels provided disproportionate amounts of airtime to Sarkisian and showed strong bias against one of his eight challengers, former President Levon Ter-Petrosian, in the week preceding the official start of campaigning for the February 19 election.

The criticism was contained in the first interim report issued by the election observation mission deployed

by the OSCE's Warsaw-based Office for Democratic Institutions and Human Rights (ODIHR).

"During the monitoring period before the start of the official campaign (11-20 January), most of the broadcast media including public television demonstrated a clear imbalance in their coverage of the prospective candidates," read the report.

"The amount of time received by Mr. Sarkisian, on privately owned H2, Kentron, Shant and Armenia TV, even taking into account the execution of his official duties, exceeded what could be reasonably considered appropriate," it said, referring to the country's four

Continued on page 2

## Armenian Authorities Crack Down On Levon Ter-Petrosian's Supporters

YEREVAN -- The Armenian police launched criminal proceedings on Tuesday against supporters of former President Levon Ter-Petrosian who drove through the streets of Yerevan on Monday in a motorcade of more than a hundred cars led by the opposition presidential candidate.

The collective ride, not sanctioned by municipal authorities, lasted for more than an hour and ended in a rally in the city's northern Avan suburb. It was aimed at drumming up popular support for Ter-Petrosian and possibly exerting psychological pressure on the government.

A statement by the police said that the motorcade disrupted traffic in the city center and that participants of the car parade defied orders by road police officers and threatened to use force against them. It said a criminal case has been opened under a corresponding article of the Armenian Criminal Code.

The police did not immediately charge any of the Ter-Petrosian campaigners. Instead, it reportedly impounded cars belonging to some of the ex-president's close associates, including the chairmen of the former ruling Armenian Pan-National Movement and the radical opposition Hanrapetutyun party.

Also, law-enforcement authorities announced late Monday the launch of a separate criminal investigation into a violent incident that marred Ter-Petrosian's weekend campaign rally in the central town of Talin. Several Ter-Petrosian loyalists reportedly threw punches at a man who heckled the ex-president as the latter was about to address local residents. According to media reports, the man, identified as Sarkis Karapetian, was assaulted after telling Ter-Petrosian that "the people of Talin are not with you."

The Office of the Prosecutor-General identified three alleged attackers of Karapetian, among them a local leader of Hanrapetutyun, but would not say if any of them have already been formally charged with assault.

Ter-Petrosian's election campaign headquarters was quick to condemn both criminal cases. "These actions are aimed at stemming Levon Ter-Petrosian's triumph in the presidential elections and taking the pre-election situation out of control," it

said in a statement. "We warn Armenia's kleptocratic authorities that they will bear full responsibility for unpredictable consequences of these actions."

The statement described the violent incident in Talin as a government "provocation." It also claimed that the police have "effectively paralyzed" the Ter-Petrosian campaign in Talin by summoning its activists for questioning en masse.

Also reacting to the Talin incident were two nationalist activists controversially imprisoned by the Armenian authorities. Like Karapetian, Zhirayr Sefilian and Vartan Malkhasian are veterans of the 1992-1994 war in Karabakh. In a joint statement from their prison, they alleged that the attack victim is a government agent who had been paid by Prime Minister Serzh Sarkisian to spy on war veterans unhappy with Armenia's leadership.

Sefilian and Malkhasian, who support Ter-Petrosian's presidential bid, at the same time urged the ex-president's loyalists to "beware such provocations and be more tolerant in the future."

In a related development, Police in the southeastern Armenian town of Kapan on Monday reportedly used force to shut down the sole local campaign office of former President Levon Ter-Petrosian.

The office, located on the ground floor of an apartment block, was leased by the Ter-Petrosian campaign in late December. According to Roman Navasardian, the local campaign chief, its owner unexpectedly decided to end the lease agreement despite being paid two-month rent up front.

"The owner was forced to ask us to vacate the property because he said he doesn't want to have any connection with politics," Navasardian told RFE/RL from Kapan shortly before the eviction. He said police ordered him and other campaign volunteers to vacate the office despite the owner's willingness to let them stay there for two more days.

"They are forcing us out," Navasardian said shortly afterwards.

"The police have sealed the office," the oppositionist said moments later. "All of our property is in there. So we are unable to operate right now."

## OSCE Deplores Excessive TV Coverage Of Serzh Sarkisian

Continued from page 1

largest private networks.

"The other eight candidates received some coverage on most of the TV stations monitored," added the OSCE/ODIHR mission. "However, in contrast to the almost exclusively positive or neutral coverage afforded to Serzh Sarkisian, Levon Ter-Petrosian was regularly portrayed in a negative light."

The report echoed the findings of similar monitoring conducted by the Yerevan Press Club, a local media freedom watchdog, in recent months. The YPS has faulted the government-

controlled electronic media for aggressively promoting Sarkisian's presidential bid and showing "unprecedented" bias against Ter-Petrosian. The broadcasters have dismissed the criticism.

The OSCE observers said the state-run Armenian Public Radio was "more balanced" than the TV channels in its coverage of the presidential race. They also noted that daily Armenian-language news programs of RFE/RL "included greater diversity in their coverage of the nominees, including presenting Serzh Sarkisian and Levon Ter-Petrosian in positive, negative and neutral tones."

## Musa Dagh, Kessab, Dort-Yol To Be Featured In UCLA Conference

LOS ANGELES -- A leap-year international conference on the Armenian communities of the Northeastern Mediterranean will take place on the weekend of February 29-March 1, 2008. The seventeenth in the UCLA AEF Chair's conference series "Historic Armenian Cities and Provinces," the two-day gathering will focus on region extending from Dort-Yol (Chork-Marzban) to Musa Dagh and Kessab. Serving as co-sponsors are the Mousa Ler Association of Califor-

writing. Dr. Vahram Shemmassian of CSU Northridge will offer an overview of the history of Musa Dagh in the nineteenth and twentieth centuries.

The second morning session will feature Dr. Susan Pattie of University College London who has chosen the title, "Even Paradise Isn't Perfect: Memories of Kessab." Ms. Seda Altug, Ph.D. candidate at Utrecht University in the Netherlands, will compare the making of community identities in the Jazira and Kessab areas of Syria, while



Musa Daghists after reaching Port Said, 1915

nia and the Kessab Educational Association of Los Angeles, along with the UCLA Centers for Near Eastern Studies and European-Eurasian Studies, International Institute, and Department of History.

Participants include scholars from Armenia, France, Great Britain, Netherlands, Syria, and several institutions in the United States. The opening session in Armenian will take place on Friday evening, February 29, from 7:30 to 9:30 p.m. in the Kalaydjian Hall of the Armenian Church Western Diocese at 3325 N. Glenoaks Boulevard in Burbank (Buena Visa exit from the 5 Golden State Freeway).

Following an introduction by Professor Richard Hovannisian, AEF Chair at UCLA, Dr. Hagop Tcholakian of Aleppo, the author of a three-volume history of Kessab, will give an overview of the Armenian communities from Beylan to Antioch and Latakia. He will be joined by Dr. Verjine Svazlian of the Armenian Institute of Archeology and Ethnography, who will discuss the oral tradition of Musa Dagh, and by Ms. Isabel Mavian, both of Paris and of Yerevan, who will examine how the people of Kessab responded to calamitous situations between 1909 and 1947.

The all day sessions on the UCLA campus on Saturday, March 1, from 10 a.m. to 5:00 p.m., will be in English and take place in the refurbished Broad (formerly Dickson) Auditorium. The morning program will include an illustrated presentation by Ms. Ruth Thomasian of the Project SAVE Archives, Watertown, Massachusetts. Dr. Minas Kojoyan of the AGBU High School in Canoga Park will examine the repeated self-defense of Chork-Marzban (Dort-Yol) from 1896 to 1921, with Mr. Aram Arkun of New York City making additional comments in

Hagop Tcholakian will speak on Kessab after becoming a diasporan community.

During the lunchtime intermission on March 1, brief readings and explanations of the Musa Dagh and Kessab Armenian dialects will be given by Dr. Hagop Panossian of the Mousa Ler Association and Dr. Hrair Atikian of the Kessab Educational Association.

In the afternoon sessions, Mrs. Sona Zeitlian will present the findings of her study on the oral tradition of Musa Dagh. Mr. Ara Soghomonian, Ph.D. student at UCLA who has investigated primary source materials on the projected filming of "The Forty Days of Musa Dagh" will reveal little known aspects of this case of Hollywood censorship. Dr. Keith Watenpaugh of UC Davis will focus on the Armenian and Alwaite responses to the Alexandretta crisis in the 1930s.

During the final afternoon session, Dr. Herant Katchadourian of Stanford University will speak on culture and personality, based on his field research in Anjar after the relocation there of most of the natives of Musa Dagh. Dr. Shemmassian will conclude the program with a sketch of Vakef or Samandagh, the only remaining Armenian village in Musa Dagh and in all of Turkey. As in most previous conferences in this series, Mr. Richard and Mrs. Anne Elizabeth Elbrecht of Davis, California, will mount a related photographic exhibit.

The conference is open to the public without charge. Parking on the UCLA campus will be in Structure 3, entrance from Hilgard Avenue near Sunset Boulevard. Daily parking fee: \$8.00.

For further information, please e-mail Professor Hovannisian at Hovannis@history.ucla.edu

Tuzla Camp: the symbol of injustice

One of these lost properties is the Children's Camp that belongs to the Foundation of Gedikpasa Armenian Protestant Church. I have, as someone who has lived in this camp, talked and written about its saga countless times.

The Tuzla Camp became almost a symbol of the whole phenomenon of the seizure of Minority Foundation properties. There have been exhibits organized and books written about it by the Human (Rights) Organizations.



Main building Camp Armen: with visiting Armenian Evangelical summer camp leadership

Trust me, one could not get tired of hearing the saga of the Tuzla Camp...

It is worth narrating, yet another time.

It was flat land

One morning they took us 13 children...

From Gedikpasa on foot to Sirkeci... Then to Haydarpasa by boat... From Haydarpasa to Tuzla station by train.. An hour away from the station on foot, they took us to a wide, limitless, flat land surrounding a lake and the sea.

Tuzla then was not like the Tuzla of today, filled with the villas of the rich and the bureaucrats.. It was then an untouched shore with fine sand and a piece of lake formed from the sea... a couple of houses on the vast land, a sprinkling of fig and olive trees, and thorny raspberry bushes along the sides of the ditches...

Plus, the Red Crescent tents that we had set up...

Our labor as children

For us 13 puny kids, between the ages of 8 and 12, the summer imprisonment at the cement covered garden of the Gedikpasa Orphanage had come to an end...

We remembered our families and relatives only at night, while watching the flickering city lights in the distance. The city lights reminded us of old fallen stars piled up on each other. We completed the construction of the camp building in three years by getting up at dawn and working until midnight. "Stumpy" (our nickname for Zakar), who was one of the shortest among us, could grab by himself a bag of cement and carry it all the way up to the roof. We used to bed wet at night, out of exhaustion, yet each time would save face by putting the blame on others, saying "I did not do it, he did."

We were confronted by the state I went to Tuzla when I was eight.

## Hrant Dink

### The Man, the Mission, the Martyrdom

By Zaven Khanjian

Part II

Audio-Visual Lecture presented on September 25th, 2007 at the United Armenian Congregational Church

I labored there for exactly 20 years...

I met my wife Rakel there. We grew up together. We got married there. Our children were born there.. After September 12, they placed our

And a rebel with a cause.

The short study of the life of Hrant Dink has revealed to me that the story of the Tuzla Camp, its creation and seizure by the Turkish authorities, the childhood labor and the earthly heaven created there, has left such a deep scar on the psyche of Hrant that went on to be the driving force in his struggle for justice, for fairness, freedom of expression, minority rights and true democracy for all Turkish citizens under Turkish law.

I said Turkish citizens. Hrant was a Turkish citizen. He defended his right of being one. A Turkish citizen. He struggled for it. He fought to have been one. Here is Robert Fisk again writing on January 20, 2007.

"Dink told news agency reporters in 2005 that his case (this is the case in Malatya) had arisen from a question on what he felt when, at primary school, he had to take up a traditional Turkish oath.

"I am a Turk, I am honest, I am hard working".

In his defense, Dink said, "I said that I was a TURKISH CITIZEN, but Armenian, and even though I was honest and hard working, I was not a Turk, I was an Armenian".

And Armenian he was. With roots so deep to the land, not very many Turkish citizen living in Turkey can claim today. Let's listen to Rakel Dink as she addresses the Turkish court and judges at the opening session of the trial of Ogun Samast, Hrant Dink's assassin.

"Your honor, my husband was tried for whatever he wrote, for what he thought and spoke. Even though an innocent man he was found guilty because of this unjust understanding

camp director (Hrant Guzelian) under arrest with the accusation that he was "raising Armenian militants."

It was an unfair accusation. None of us had been raised as Armenian militants.

In order for the orphanage and the camp, now without a director, not to be closed down, my friends and I, who had all been raised there, assumed this duty.

But one day they served us a paper from the court...

"It turns out that you minority institutions did not have the right to acquire property! It turns out that we had made a mistake when we had once given you permission. This place will, from now on, belong to its former owner."

In spite of our resistance for five years, we were defeated.. Yet, what could we have done; we were confronted by the state.

We were no longer helpless

They threw us out of the civilization we had created there.

They usurped what had been put together with the sweat of the one thousand five hundred children raised there.

They appropriated our labor, the labor we had put in as children.

And the "Tuzla Poor Children's Camp" that we had created, our "Atlantis" civilization, is now in ruins...

After the children's chirpy voices disappeared, the water in the well has also dried up...

The building has sagged..

The soil is barren...

Trees are offended...

The diving flights of my rebellion are as sharp as those of a swallow whose meticulously crafted nest is destroyed with a single blow...

Yet no longer helpless"

There you go...

You want a cause? The Tuzla camp - symbol of lost minority properties.

You want a rebel? Hrant Dink.

ask you, can you trust him or her? If we do not deny our origin, does that mean we are enemies?

And here is Hosrof Dink, Hrant's brother at the same trial.

"My brother knew that our ancestors were born on these lands and harvested this land, that they had turned grape into pectin, grape juice to wine, wheat to bread, earth to jug, copper to ewer, iron to plow, and that they had dearly loved this land, had caressed it with their hands and had smelled it with their noses. I also know he thought that all the people who lived and currently live (here) share the same pain, and that all their happiness, sadness and hopes are linked to each other."

And so the Armenian Turkish citizen was prosecuted for denigrating and insulting Turkishness and on October 7, 2005 was given a 6 month suspended sentence under the provisions of the infamous Article 301 of the Turkish penal code for an article he had written in AGOS entitled "On Armenian identity".

Many in Turkey; intellectuals, writers, journalists, educators have also been prosecuted under similar circumstances and for violating the vague provisions of Article 301. Taner Akcam, Orhan Pamuk, Elif Shafak, Ragip Zarakolu are among them. But non have been convicted like Hrant Dink was. This was really hard for Hrant to accept and digest. The verdict was harsh on him and he could not take it lightly. It alienated him from the country he called his and home. He repeatedly said if he was truly guilty of the charges he could not live any more within the society he was convicted to have insulted. He decided to appeal both to the higher courts and the European Court of Human Rights. He made up his mind. He decided to stay and fight. In his own soul and conscience he was so fair in his struggle for individual freedom of expression. He vehemently opposed the French law criminalizing the denial of the Armenian genocide. This certainly placed him at odds with some outspoken



The campers at the Tuzla "Camp Armen" beach front

of the state.

I, as a member of the people who have lived on these soils since NOAH, want to feel, to see both my children and myself as Armenian Turkish citizens, as equal.

Our proverb says "One who denies his origin is a sinner.. What would you expect from someone who denies or hides his or her origin? How can you establish a strong building, a good character over a faulty foundation? I

Diaspora Armenian nationalists who have the luxury of living under conditions incomparable to the restrictions, pressures and discrimination experienced by Turkish Armenian citizens. A few of them, just months before Hrant's murder accused him of trying to exploit "cheap heroism". (Ajan herosutyun). Unfortunately Hrant paid very dearly for that heroism. His life.

## Hrant Dink The Man, the Mission, the Martyrdom

Continued from page 3

And I don't believe there is anyone who would characterize life as being cheap. He shed his blood defending everyone's right to free speech, fighting both against the criminalization of the discussion of the Armenian Genocide in Turkey and yes opposing the criminalization of the denial of historic truth in France.

What Turkey had done with Article 301 was legitimizing hate speech instead of criminalizing it. State spon-

alone. Not much more. No body guards, no police protection.

But most of all and more than himself, Hrant was concerned about the safety of his family.

In his famous last article published in AGOS on January 10, 2007 he said:

"I could have resisted out of my own will, but I did not have the right to put into danger the life of anyone who was close to me."

Hrant's quest for justice, human rights and true democracy were not only designed for the country he called home,



Hrant Dink with Zaven & Sona Khanjian on November 2, 2006

sored legitimization. And Hrant fell victim. As a matter of fact, many believe, including Hrant, that he was targeted for it.

Here is what he said after the 9<sup>th</sup> Criminal Court of Appeals confirmed the lower court conviction in Istanbul on July 6, 2006 and the Court of Appeals General Criminal Council rejected an appeal on July 11, 2006.

"But what can I say, that great force which had decided once and for all to put me in my place and had made itself felt at every stage of my lawsuit through processes I would not even know about, was there, present, once again behind the scenes. And as a consequence, it was declared by majority vote at General Council as well that I had denigrated Turkishness."

Was he afraid of his life? You bet he was.

Here is what he wrote on January 10, 2007.

"I am just like a pigeon....

Obsessed just as much (by) what goes on my left, right, front, back.

My head is just as mobile... and just fast enough to turn right away."

And addressing Foreign Minister (now President) Abdulla Gul and Justice Minister Cemil Cicek who had expressed bewilderment about the exaggerations raised on the consequences of penal code 301 reminding all, that no one had been imprisoned as a result of it, Hrant wrote:

"As if the only cost one paid was imprisonment..."

Do you know, oh ministers, what kind of a cost it is to imprison a human being into the apprehensiveness of a pigeon? Do you know?

Do you ever watch a pigeon?"

In November 2006, when Sona asked him what he was doing for protection he said he had taken some precautions. He had stopped driving and driving

Turkey. He was courageous enough to criticize the injustices experienced in the other part of his ancestral homeland, Armenia. Here is Hrant again after considering a move to Armenia.

"Okay, but if we went, where would we go?

To the Armenian Republic?

How long someone like me who could not stand injustices, put up with the injustices there? Would not I get into even deeper trouble there?"

When Sona and I met Hrant for the first time at the Armenia Marriott Hotel on September 19, 2006, it was right after the late morning address that I had made at the Armenia-Diaspora conference where I had openly and unequivocally criticized the Armenian leadership for their power abuses and self enrichment. So, as soon as I introduced myself to Hrant, he stood up and said, "One moment, first, I have to congratulate you on your speech at the conference". This was a clear indication of like mindedness on the issue of corruption in Armenia and in line with his above referred position on the subject of a move to Armenia.

And so Armenia was out for the time being.

After considering Europe and the West and discounting both he continues on to firmly state:

"We were going to stay and we were going to resist"

"If we were forced to leave one day however... We were going to set out just as in 1915... Like our ancestors.. Without knowing where we were going.. Walking the roads they walked through... Feeling the ordeal, experiencing the pain..."

And so he had decided to take his case to the European Court of Human Rights.

He knew things were not going to be easy. He said 2007 will probably be

## Shoghaken Armenian Folk Ensemble Concert In Fresno February 26

The internationally recognized Shoghaken Armenian Folk Ensemble will perform in concert in Fresno as part of its 22-city United States tour, at 8:00PM, on Tuesday, February 26, 2008, in the Satellite Student Union at Fresno State.

The concert is co-sponsored by the Armenian Studies Program at Fresno State, the Knights and Daughters of Vartan, and the Armenian General Benevolent Union.

The eight-member Ensemble was founded in 1991 by dudukist Gevorg Dabaghyan in Yerevan and has become one of the preeminent traditional music ensembles in Armenian. The group uses only traditional Armenian instruments, maintaining an authentic sound with the duduk, zurna, dhol, kanon, kamancha, shvi, and other instruments. Singers Hasmik Harutyunyan and Aleksan Harutyunyan are known throughout Armenia, the former Soviet Union, and Europe for their unique interpretation of Armenian folk and ashoughagan (troubadour) music. The ensemble recorded the soundtrack for Atom Egoyan's film Ararat and in 2002 was invited by acclaimed cellist Yo-Yo Ma to perform at the "Silk Road Festival," in Washington D.C.

In 2003 their CD Armenian Anthology (Traditional Crossroads CD 4311) won the NARM Award for "Best World Recording of the Year." With an extraordinary ancient tradition of exhilarating folk dances, haunting love songs and lullabies, Shoghaken has mesmerized audiences far beyond the Caucasus mountains, where Armenians have lived for centuries.

The Chicago Reader said about Shoghaken, "There isn't a better introduction to traditional Armenian music."

Jon Pareles of the NY Times said, "There may be no instrument that can sound as richly inconsolable as the duduk...exuberance tempered by a tearful memories."

The Shoghaken Folk Ensemble performed to a standing room only audience in their Fresno State concert held in 2004.

Tickets are \$20 per person for general admission and \$10 per person for students.

For tickets and information call the Armenian Studies Program at 559-278-2669; AGBU-Zar at -559-431-5259; or Knights of Vartan-Gerald-439-7910. In the South Valley call Gerry -896-2785.

even a more difficult year.

He still had faith in the people if not the state. He said while additional injustices might continue to accrue he will consider ONE truth as his only security.

"Yes, I may perceive myself in the spiritual unease of a pigeon, but I do not know that in this country people do not touch pigeons.

Pigeons live their lives all the way deep into the city, even amidst the human throngs.

Yes, somehow apprehensive but as much free"

On January 19, 2007 the pigeon was slain.

The 17 year old teenager assassin, Ogun Samast, was the trigger man. But the murder was committed by the forces of darkness, by Turkish penal code 301, by Deep State, the republic of Turkey.

Robert Fisk would have said,

The genocide continues.....

92 years after the Genocide, the Turkish State still lies in a deep coma of denial. Will the trial of the murderer

of Hrant Dink create an opportunity where we witness an enlightened awakening in Turkish society? Will there be enough pressure in time from an awakened Turkish Society to defeat the Deep State and force the nation to face historical truth? Will Turkey ever face its own past and come to terms with the "murder of a nation" perpetrated by their ancestors?

Would Hrant Dink's innocent blood have been shed in vain?

With the hope and desire of accession to the European Union and the gradual exposure of all the other international dark forces who hold a firm grip on US foreign policy and who continue to encourage Turkey in its denial, I am optimistic that Truth, Goodwill and the Recognition of the crime will prevail.

*Hrant Dink is dead but his voice will never be silenced.*

End

Zaven Khanjian can be reached at zaven@kanjianrealty.com



HOMENMEN-Glendale Presents

# Super Bowl Party

Come Join Us on a 10 Foot Screen  
at the Homenmen Center  
1060 N. Allen Ave., Pasadena, CA 91107  
Doors Open 1 hour prior to Game Time  
Sandwiches and Drinks will be served  
Donation: \$5

# ՄԻՈՒԹԻՒՆԸ ԸԱՐԱՋԱՏ ՏՈՒՆ Է ԸԱՅԻ

Ռ. ԿՈՐԻԻՆ  
(Շարունակուած մախտրդ թիւէն)

Մեր միութենականներից է նաև պրն. Սաքոն: Նա էլ է միութիւն յաճախում, եթէ առողջ է լինում կամ էլ ճամբորդած չի լինում, շաբաթվայ մէջ մի քանի անգամ է գալիս: Նա յարգալից վերաբերմունք ունի բոլորի նկատմամբ, ասուած է՝ յարգանքը յարգանք է բերում: Նա յառաջացած տարիք ունի, արտաքնապէս Եւրոպացու է նմանում ծախի աչքերով, ճերմակալած (նախքան դա վառ դեղին) խիտ մագերով՝ քորնէլ վայտ ոճով ասնորում, համակրելի դէմքով, միջնահասակ եւ լիքը կազմուածքով, նա յամրընթաց քայլում է քայլում, քանի որ սրտի գործողութիւն է ունեցել, նա զգոյշ է շարժմունքի մէջ, նա ճարեր է գործածում եւ անդակարգի հետեւում:

Միութեան մուտքից ներս մտնելիս առաջին անգամ ինձ է հանդիպում, ապա սրահ է գնում, նստում է առաւելաբար սրահի աջակողմեան սեղանի շուրջը, սրճում եւ զրոյցի բռնում իր նման միութենականների հետ: Նա խաղի սէր չունի, ոչ նարդի է խաղում, ոչ էլ ուրիշ խաղեր, այդ խաղերը համարում է՝ ժամանակի մեղքնում եւ ուղեղի թմրեցնում, այսպէս մի երկու ժամ զբաղւում է, ապա՝ դանդաղ քայլերով մնաք բարով ասելով թողնում եւ հեռանում է:

Նա մի երկու շաբաթով միութիւն չէր եկել, այդ առաւօտ որ իրեն տեսալ, ձայնեցի, մտերմաբար խօսակցութեամբ բռնուեցինք, նա դուռն մէջտեղը կանգնած, իսկ ես գրասեղանիս ետեւից հարց տուի.

«Պրն. Սաքո՛, երկար ժամանակ կը լինի, որ բացակայում ես միութիւնից, ինչ կայ, խէր լինի.

«Տղայիս տունը մի ուրիշ քաղաքումն է, նրա մօտ էի, ի միջ այլոց առողջութիւնս էլ այնքան գովելի չէր, այսօր ինձ աւելի լաւ զգալով միութիւն եմ եկել:

Պրն. Սաքոն աչքիս երեւում է լուրջ եւ մտածկոտ, նրա դիմագծի վրայ մտահոգութիւն եմ նշմարում, կարծես սրտի խորքում մի թաքցրած բան ունի, ինչպէս կապուտակ երկնքում նկատող թուխ ամպի ծէն:

Այդ օրը իրեն ներս հրաւիրեցի եւ աթոռ առաջարկեցի:

«Պրն. Սաքո՛, դու թէ դէմքով ես տարբերում մեզանից եւ թէ խօսելու լատով, դէմքով Եւրոպացու յար նման, իսկ ոճդ էլ Հայաստանեան է.

«Ճիշտ է, դէմքս որոշ չափով ուռսի է նմանում, սակայն ես ապուրպաբերով հայ եմ, քսան երկու տարի Հայաստանում եմ ապրել, բնական է հայաստանցու խօսելու կ'ունենամ.

«Ինչպէ՞ս է եղել, այստեղ Ամերիկայում ես յայտնուել.

«Է՛հ, երկար պատմութիւն ունի: Երեխաները եւ դժուարութիւնները բերին, Հայաստանի միջավայրը եւ ապրուստի պայմանները պատճառ դարձան: Է՛հ, գլխիս էնքան օյրներ (չար-փորձանք) են եկել, որ կերած կաթն մոռացել եմ:

«Ինչպէ՞ս կարելի է հայրենիքը դժուարութեան համար թողնել եւ հեռանալ, նմանում է այն մարդուն, որ լքում է ընտանեկան օջախը՝ կնոջ եւ երեխաներին ու ծնողներին, ընտանիքի մէջ առաջացած անխոհեմ վէճից՝ անհասկացողութեան եւ թիւրիմացութեան պատճառով, որը հարթուելու ու փարստուելու է: Պրն. Սաքո՛, ամառ չի հայրենիքը թողել եւ եկել ես մի անհարազատ երկիր, ուր լեզուն եւ սովորութիւն-

ները տարբեր են, բնութիւնը եւ կլիման ոչ նման հայրենիքին, գիտես որ հայրենիքը ուրիշ բան է, այնտեղ ապահով ես զգում քեզ, կարեւորը նա է, որ նա քոնն է, պապենական երկիրդ է:

Պրն. Սաքոն սկսեց իր ողիսականը պատմել.

«Հայրենիքի սէրով ոգեւորուած եւ այնտեղ ապրելու բուռն ցանկութեամբ դիմեցի Թեհրանի հայկական կոնսուլատը, երկար վազվզելուց, սրան տես ու նրան տես, արժանացայ հայրենդարձութեան, ինչ ուրախութիւն էր տիրում իմ եւ մօրս մօտ: Մօրս միակ քոյրը գտնուած էր Երեւանում, նրա կարօտն էլ էր մագնիսի պէս քաշում իրեն: Մայր եւ որդի ի՞նչ երազներով էինք տարուած, թէ ինչպէս կը գնանք մեր երկիրը, կամուսնանամ այնտեղ հայաստանցու աղջկայ հետ, երեխաներ կ'ունենամ, նրանք ձրի ուսում կը ստանան, ոչ գործի մտահոգութիւն կ'ունենանք եւ ոչ էլ բնակարանի, երջանիկ կեանքը բազկատարած սպասում է մեզ: Անշուշտ մեր աչքով չէինք տեսել Հայաստանը, անտես հաւատք էինք ընծայել, այն ինչ իմ գաղափարակից ընկերներն ասում եւ քարոզում էին.

Այստեղ պրն. Սաքոյի խօսքը ընդհատելով միջամտում եմ.

«Պրն. Սաքո՛ գիտես որ քարոզչութեան շատ չի լինի հաւատալ, քանի որ քարոզը նմանում է առաւօտայ ցօղին, որը արեւը ծագելուն պէս գոլորշիանում է, կարելի է մարդ քարոզով տարուի, կարելի է, սակայն հարկաւոր է խորը մտածել, դատողութիւն անել, ապա վերջնականապէս համոզուել ու կողմնորոշուել ասուածներով:

«Հայրենիքով էի տարուած, հայրենիք գնալու մտադրութիւնը դրոշմուել էր իմ սրտին ու ուղեղին, լաւ ասողին յարգում էի, իսկ վատ ասողին ատում էի որպէս դաւաճան, իրականութիւնը այն էր՝ ինչ որ ընդունել էի: Հայրենասիրութիւնը նոր չէր կազմաւորուել իմ մէջ, այլ չորս հարիւր տարիների աւանդն էր պապերիցս հասել ինձ, դարձել էր իմորում, դարձել էր խառնուածք: Իմ պարսիկ գործատէրերս համաձայն չէին, որ ես գնամ, նրանց մօտ աշխատում էի որպէս պատասխանատու մեքանիք, նրանք աշխարհ տեսած մարդիկ էին, իմանում էին սովետի կեանքն ու հասարակական դրուածքը, խիստ պայմանները, աշխարհից կտրուած վիճակը, առաջարկում էին ուժիկի աւելացում եւ աւելի լաւ պայմաններ, որ իրենց մօտից չգնամ, սակայն ով էր լսողը, նրանց ասածները ընդունում էի որպէս միտումնաւոր: Իրօք պարսիկ գործատէրերը համաձայն չէին հայ աշխատաւորների հեռացումի հետ, նրանք համոզուած էին, որ հայերը խելօք, խոնարհ եւ լաւ աշխատաւորներ են, վստահելի եւ ճշմարիտ: Անուշաղի բամբասանքներին մնացի որոշումիս վրայ անխախտ:

«Գործից հրաժարուելով ի՞նչ արեցիր.

«1970 թւի ամռանը ես եւ մայրս հրաժարուելով իրանական հպատակութիւնից ընդունել էինք Սովետական միութեան քաղաքացիութիւնը, առերեւոյթ այդպէս էր, բայց սրտով ու հոգով որպէս Հայաստանի քաղաքացի էինք գնում: Հայաստանում ապրելու համար: Ինչպէ՞ս էինք ուրախացած եւ ոգեւորուած, երբ Թեհրան-Թաւրիզ-Ջուլֆա գնացքում տեղաւորուեցինք: «Դատա՞րկ էիք գնում, թէ՛ սպ-

րանքով.  
«Մեր կարիքներին համապատասխան ապրանք էինք տանում հակերի մէջ դասաւորուած՝ հինա, տեսակ-տեսակ զառ կտորներ եւ այլն, նաեւ ուռսական ուրբի, մեր արդար վաստակի ունեցուածքը:

«Գնացքը մինչեւ ո՞ւր տարաւ ձեզ եւ ո՞րտեղ հանգրուանեցիք.

«Գնացքը մեզ տարաւ մինչեւ Նախիջեւանի Զուլֆա կայանը, այնտեղից նա փոխուեց դէպի Հայաստան: Հայաստանի հողի մէջ մտնելով մենք յափշտակուած մեր երկրի բնութեան տեսարաններով գնացքի բացուած պատուհանից կառչած կը դիտէինք, երկիրքը ջինջ կապուտակ, արեւաշող օր, լեռնային գով օղը բացաւիկ թովչանք էր պատճառում, ամէն ինչ գեղեցիկ էր ու հետաքրքրական, հոգեպէս խաղաղուած էինք զգում մեզ պապենական երկիր մտնելով, Արարատ լեռ տեսել էինք պատասխանների վրայ, հիմա իրական Արարատն էր մեր աչքի առջեւը իր անասան քարայրի գանգուածով: Իջեւանեցինք Մասիսի երկաթուղային կայանում, մի քանի օր կարանտինայում պահեցին, սրսկումներ կատարեցին, ապա մեզ ճամբայ դրին դէպի Գիւմրի, մեզ տեղաւորեցին յանձնուած բնակարանում, մեր նոր կեանքը սկսուեց Գիւմրիից եւ դարձանք Գիւմրեցի (Լենինականցի):

«Հայրենադարձներից համար

հեշտ եղա՞ւ մերուել հայաստանեան կեանքի հետ.

«Արդէն իսկ հայաստանցի էինք ոչ մի կասկած, սակայն հեշտ չէր ստացուած մերուելը, նկատուած էր անհանգստացնող երեւոյթներ, որոնց նկատմամբ անտարբերութեամբ էինք անցնում, հանդուրժողականութեամբ: Աշխատանքի էի անցել էլէկտրօտեխնիկականի գործարանում: Ամուսնացել էի հայաստանցի աղջկայ հետ, գաւակներ ունէի՝ երկու տղայ մի աղջիկ, արդէն մայրս հոգին աւանդել եւ թաղուել էր իր փայփայած երկրում: Դրանով հանդերձ որ տարիներ էր, որ ապրում էինք Գիւմրիում, սակայն որոշ բնիկների լեզուի խայթերը գործարանում եւ դրսում իսկապէս մեզ հոգեպէս նեղում էին եւ դժգոհութիւններ առաջացնում մերոնց մօտ, մինչեւ այն աստիճան, որ որոշեցինք արտագաղթել, դիմումնազիր դրկեցինք Երեւան այդ հարցով: Նախքան ասուոր տնաքանդիչ երկրաշարժից մի քանի ամիսներ առաջ էր, աշխատանքի ընթացքում ինձ կանչեցին, ցոյց տուին սենեակը, ուր պիտի մտնեմ, նախ դուռը թակեցի եւ սպասեցի հրաուէր ձայնին եւ ներս մտայ, սենեակում երեք հոգի էին աթոռներին նստած, երիտասարդ էին երեւում, դէմքերին նկատուած էր խաղաղ մեղմութիւն, ինձ նկատե-

Շար.ք էջ 19



**Blue Cross of California takes the worry out of health care.**

Our goal is to make staying healthy easier with a variety of affordable plans to fit your needs. For over 65 years, Blue Cross has been a leader in California offering quality health care coverage with over 41,000 doctors and 400 hospitals in our network. We offer:

- Prescription Drug Coverage
- Life Insurance by BC Life & Health Insurance Company
- Individual and Family Plans
- HSA-Compatible Plans by BC Life & Health Insurance Company
- Plans for Small Businesses
- Dental Coverage
- Integrated Workers' Compensation by Employers Compensation Insurance Company
- Medicare Supplement Plans

**Call now and let me help take the worry out of your health care!**

**HARUT DER-TAVITIAN**  
 Authorized Independent Agent  
 1807 W GLENOAKS BLVD. #202  
 GLENDALE, CA 91201  
 (818) 502-3233  
 HARUT@EXCELHYE.COM  
 WWW.EXCELHYE.COM  
 CA Insurance  
 License #0B28270



Blue Cross of California (BCC) and BC Life & Health Insurance Company (BCL&H) are Independent Licensees of the Blue Cross Association (BCA). The Power of Blue and the Blue Cross name and symbol are registered service marks of the BCA. ©2005 BCC. CAN119

# ՈՒՏԱՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՍԻՈՅ ԵՒ ԻՐ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԸԱՅՈՑ» ԵՐԿԸ

ԴՈԿՏ. Տ. ԶԱԽԷՆ Ա. ՔԶՆՅԱՆ  
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

## ՔՆՆՈՒՅԻՆ ԲՆԱԳՐԻ

Տասներորդ դարու հայ մատենագիրներին է Սեբաստիոյ Ուխտանէս Եպիսկոպոսը որուն անունով մեզի հասած է իր միակ երկը հետեւեալ խորագրով. «Զպատմութիւն յերիս հատուածս գոր ասացեալ է Տեառն Ուխտանիսի Սեբաստացոյ» Եպիսկոպոսի: Նոյն խորագրին կը հասկնանք նաեւ որ Ուխտանէս գրած է իր «Պատմութիւն»ը Նարեկայ Վանքի առաջնորդ Անանիա Վարդապետի խնդրանքով, ու գայն երեք բաժիններու վերածած:

Ա. Յաղագս Թագաւորաց եւ Հայրապետաց Հայոց

Բ. Վասն Բաժանման Վրաց ի Հայոց

Գ. Յաղագս Մկրտութեան Ազգին Ծաղն Կոչեցեալ:

Բնագրին միակ ձեռագիր օրինակին կը ստուգուի որ միայն առաջին երկու մասերն են որ հասած են մեզի, իսկ երրորդ մասը կանուխէն կորսուած կը նկատուի: Մեր ձեռքին տակ ունինք երկու հրատարակութիւններ միայն, մին հայերէն գրաբար բնօրինակը՝ տպագրեալ ի Վաղարշապատ 1871, եւ ֆրանսերէն թարգմանութիւնը մը՝ Մ. Պրոսպէր կողմէ անկէ տարի մը առաջ:

Երրորդ մասը՝ Ծաղ կոչուած ազգի քրիստոնէութեան դարձի պատմութիւնը պիտի ըլլար, որ դժբախտաբար կորսուած է, որ այլապէս շատ հետաքրքրական եւ օգտաշատ նիւթ պիտի հայթայիէր քրիստոնէութեան նախնազոյն պատմութեան համար: Բարեբախտաբար Ուխտանէս Ծաղերու մասին հակիրճ ակնարկութիւն մը արձանագրած է իր «Նախերգանք»ի վերջաւորութեան, որուն ստորեւ պիտի անդրադառնամ:

Ուխտանէսի գիրքը մէկ անգամ միայն հրատարակուած է հայերէն բնագրով 1871ին Վաղարշապատի (էջմիածին) մէջ, դժբախտաբար սակայն սխալներով բեռնաւոր ու գիտական արժէքէ զուրկ: Հրատարակիչ միաբանները կը յայտնեն թէ «համարք գլխոց նորա էին խառն եւ գրչութիւնն բազմաշփոթ», պարագայ մը որ կը պահանջէր առաւել ուշադրութիւն եւ գրաբարի նկատմամբ աւելի հմտութիւն, քան թէ աճապարանք հրատարակելու զայն: Միանգամ ընդ միշտ կ'ուզեմ այստեղ ըսել որ երախտապարտ ըլլալով հանդերձ առաջին հրատարակիչներուն իրենց նախաձեռնութեան համար, չեմ կրնար ծածկել այն իրողութիւնը թէ 1871 թուի հրատարակութիւնը լեզուական բազմաթիւ սխալներով ու յատուկ անուաններու խաչաբաղձ տառադարձութիւններով լեցուն հատոր մըն է, երկու բաժիններու պարագային հաւասարապէս: Կայ նաեւ կէտադրութեանց ու պարբերութեանց շարաչարման անարամբանական կառուցուածք: Տարրական սխալներն իսկ վրիպած են իրենց ուշադրութեանէն եւ գիտական ոչ մէկ ջանք կատարուած շիտակ կարգալու բնագիրը եւ գոնէ մասամբ սրբագրելու յայտնի սխալները:

Անգլերէն Լեզուի Իմ Թարգմանութիւնը  
Կարդալէ ետք Ուխտանէսի յիշեալ հրատարակութիւնը, պարտք

համարեցի լրիւ խմբագրել բնագիրը, եւ գոհունակ եմ որ կատարելէ ետք այդ դժուարին աշխատանքը, սրբագրելով ու խմբագրելով, կարողացայ նաեւ երկու հատորներն ալ անգլերէն լեզուի թարգմանել առաջին անգամն ըլլալով ու հրատարակել զանոնք: Յարդ կը մնան ուրեմն երեք հրատարակութիւններ, հայերէն միակ եւ հնագոյնը (անխնամ), ֆրանսերէնի հին եւ անգործածելի թարգմանուածը, եւ վերջնագոյն անգլերէն թարգմանութիւնս՝ մանրամասն ծանօթագրութիւններով:

Հարկ է ըսել որ իւրաքանչիւր պարագայի նշեցի նաեւ այն սկզբնաղբիւրները գորս Ուխտանէս օգտագործած է, արձանագրելով անոնցմէ կատարուած մէջբերումներուն համապատասխանող Ուխտանէսի նախադասութիւններն կամ պարբերութիւնները: Երկու գիրքերու պարագային կատարեցի սխալներու ստուգումները, զանոնք ցանկագրելով գոյգ հատորներուն սկիզբը, ընդամենը 250 բառեր կամ նախադասութիւններ:

## Յեղիցակը

Ուխտանէս իր գործին մէջ ոչ մէկ ակնարկութիւն ըրած է իր մասին, եւ սակայն վկայութիւններ քով քովի բերելով կը գիտնանք որոշապէս իր ինքնութիւնը: Հետագայ պատմիչներ վկայակոչած են իր մասին թէ գրած է Վրաց եկեղեցոյ բաժանման մասին: Գիտենք նաեւ որ երկին տիտղոսաթերթին վրայ երկու տառերով (ՍԵ)բաստիոյ Եպիսկոպոս ըլլալը թելադրուած է, թէեւ Կիրակոս Գանձակեցի կը ճանչնայ զինք որպէս Ուուհայեցի, որուն հիման վրայ ալ Պրոսպէ իր ֆրանսերէն թարգմանութեան սկիզբը Ուուհայեցի կոչած է զինք: Սակայն պատմիչներու այլ վկայութիւններ եւ յատկապէս իր Ա. Գիրքին մէջ երեւցող վկայութիւններ կը հաստատեն իր Սեբաստացի կոչումը, եւ մեր կարծիքով ան ծննդեամբ եղած է Ուուհայեցի եւ սակայն պաշտօնով՝ թեմակալ Եպիսկոպոսը Սեբաստիոյ, ուր գրած է իր «Պատմութիւն»ը տասներորդ դարուն:

Պատմական վաւերական անձինք որոնք չիշուած են Ուխտանէսի կողմէ, կը վկայեն Ուխտանէսի երկի մասին, ինչպէս Անանիա Նարեկացի մեծանուն վարդապետն ու Հայոց Կաթողիկոս Խաչիկ Ա Արշարունին (973-992), երկուքն ալ ապրած եւ գործած 10-րդ դարուն: Ուխտանէս ճշդած է նաեւ իր եւ Անանիա Նարեկացիի հանդիպման թուականը՝ «յաւուրս ամարայնոյ, յամսեանն Տրէ, որ օր տասն եւ մին էր ամսոյն, յաւուր Կիւրակէին», որ կը համապատասխանէր 973 տարուան Յուլիսի 6-ին:

Ուխտանէս մասնաւոր ծանօթութիւններ կուտայ Սեբաստիոյ մասին մի քանի առիթներով: Երբ ան կը գրէ Քառասուն Մանկանց նահատակութեան մասին, կը մանրամասնէ անոնց հասած վայրը նկարագրելով, ամբողջներն ու լեռները յանուանէ յիշելով, որոնցմէ յայտնի կ'ըլլայ թէ հեղինակը հոն ապրեր է եւ ծանօթ է տեղւոյն անուններուն: Կը չիշէ, օրինակի համար, Ալիս գետը որուն եզերքը կար ամբողջ մը ուր փախտական քրիստոնէաներ կը պատսպարուէին, որ «այժմ շէն է եւ կոչի Քաջ

Վահանայ, որ տակաւին դեռ եւս կայ տեղիք կայարանաց սրբոցն եւ զիր իւրաքանչիւր անուանց գրեալ ի տախտակս քարանց»: Այս բոլորը ակնատեսի եւ գործի վրայ եղող եպիսկոպոսի վկայութիւններ են անտարակոյս:

## Ա. Պատմութիւն Զայրապետաց եւ Թագաւորաց Զայոց

Առաջին Գիրքը ամփոփ պատմութիւնն է հայ ժողովուրդին՝ Արամէն սկսեալ մինչեւ Տրդատ Գ Արշակունի թագաւորի շրջանը (298-330), եւ կը բաղկանայ 75 գլուխներէ, առաւել Նախերգանքը: Առաջին Գիրքը բաղդատմամբ երկրորդին նուազ կարեւորութեամբ կը ներկայանայ մեզի, քանի որ Ուխտանէս պարզապէս կրկնած է ամփոփելով ինչ որ գտած է Մովսէս Խորենացիի «Հայոց Պատմութիւն» եւ Ազաթանգեղոսի «Պատմութիւն» երկերուն մէջ: Ան օգտագործած է նաեւ Զենոբ Գլակի «Պատմութիւն Տարօնոյ», եւ Եւսեբիոս Կեսարացիի «Եկեղեցական Պատմութիւն» ու «Ժամանակագրութիւն» ծանօթ սկզբնաղբիւրները: Այսուհանդերձ, Ուխտանէս պատմագէտի մը գործը չէ կատարած, այլ ամփոփած է անյաջող կերպով ինչ որ գտած է անոնց մէջ, ոչ իսկ ըստ բովանդակութեան, այլ ըստ կամս՝ հապճեպ կերպով:

Սա ըսել չէ անշուշտ որ Ուխտանէսի Ա. Գիրքը արժէքէ զուրկ է: Անոր արժէքը թերեւս հոն պետք է փնտռել ուր կարելի կ'ըլլայ սահմանափակ չափով բաղդատութիւններ ընել Խորենացիի եւ իր բնագիրներուն միջեւ, եւ տեսնել թէ մեզի հասած Խորենացիի բնագիրը որքան հարազատ է, քանի որ Ուխտանէս կարգացած եւ օգտագործած Խորենացիի երկը շատ աւելի հին եւ վաւերական է քան մեր ձեռքը հասած Խորենացիի հնագոյն բնագիրը: Պատմագիտա-

կան արժէքաւոր նիւթ մըն է «Գահնամակ»ի ակնարկութիւնը եւս, որ պետականօրէն վաւերացուած ցուցակն էր հայ նախարարներու:

Պատմագիտական կարեւոր ակնարկ մը եւս ունի Ուխտանէս իր Առաջին Գիրքին մէջ: Վերջընթեր 75րդ գլուխը ամբողջութեամբ ընդօրինակուած է հայագիտութեան համար կորսուած եւ անծանօթ՝ Շապուհ Բագրատունիի «Պատմութիւն»էն գոր ան գրած էր 9-րդ դարուն եւ որուն կը վկայէ հաստատ կերպով 10-րդ դարու յայտնի հեղինակ Յովհաննէս Կաթողիկոս Դրասխանակերտցի: Ուխտանէս հետեւեալ խորագիրը կուտայ այդ գլխուն՝ «Յաղագս թագին երանելոյն Կոստանդիանոսի թէ ուստի՞ կամ ո՞րպէս յաջողեալ եղեւ նմա ի Տեառնէ, Շապհոյ որդու Աշոտոյ Ապահի պատրակի ասացեալ ի Պատմութեան իւրոյ»: Շապուհ Բագրատունիի երկը կորսուած ըլլալով, Ուխտանէսի արտագրած լման գլուխը կրնայ վաւերական մնոյշ մը ըլլալ 9-րդ դարու մեր պատմիչին:

## Բ. Պատմութիւն Բաժանման Վրաց ի Զայոց

Ուխտանէսի կարեւոր մասն է այս բաժինը որ կը ներկայացնէ Վրաց եկեղեցոյ բաժանումը Հայոց եկեղեցիէն, որուն վրացիք ենթակայ մնացին մինչեւ 608 թուականը, ու անոր յարակից բոլոր պարագաները թղթակցութիւններով ամբողջացած: Երկրորդ Գիրքին կը յայտնուին Հայոց եւ Վրաց միջեւ փոխանակուած նամակները, հայոց Սմբատ Վրկանայ մարգապանի եւ Վրաց Կիւրիոն կաթողիկոսի յարաբերութիւնները, Յուրտաւի Մովսէս եպիսկոպոսի յախուռն պաշտպանութիւնը Հայ եկեղեցոյ, որուն հետեւանքով երեւան կ'ըլլեն Կիւրիոնի կեղծիքն ու Վրաց եկեղեցոյ բաժանումը, որոնց մասին

Շարք էջ 19

**MELODY INTERNATIONAL  
MUSIC SCHOOL Inc.**  
**ՄԵԼՈՏԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ**



Happy New Year  
Join Our New Music School in Pasadena  
By Experineded & Educated Teachers

Piano, Keyboard, Violin, Viola, Vocals, Singing, Guitar, Bass, Flute, Duduk, Drums & Percussion lessons for all ages and levels  
Professional Digital Recording studio for all your audio recording needs

1060 N. Allen Ave. #D Pasadena, CA 91104  
Phones: (626) 797-8867 & (818) 599-1606  
and  
334 N. Central Avenue Unit 202  
Glendale, CA 91203  
Phones: (818) 244-8244 & (818) 599-1606  
Visit us at: [www.musiclessons4u.com](http://www.musiclessons4u.com)

# ՇՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՏԱՆ ՄԸ ԱՆՇՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅԿՆԱԳԳԱՇԵԱՆ

Հրատարակչական Տան մը անհարձակաբար զիտնալու համար պէտք է գիտնալ անոր դերը: Հրատարակչական Տունը այն հաստատութիւնն է, որ կը ստանձնէ գրողի մը գործին, կամ գործերուն ամբողջութեան հրատարակութիւնը, նիւթական ճշգրտած համաձայնութեամբ, կամ օրինական պայմանագրութեամբ մը: Բայց հոն հասնելու համար անհարձակաբար է ունենալ բաւարար թիւով ընթերցող հասարակութիւն եւ հրատարակելի գործին աւելցնելով լեզուական ու արուեստի մակարդակի երաշխաւորութիւն, որ ընդունելի դարձնէ տուեալ գործին հրատարակութիւնը: Այս բոլորին վրայ հրատարակելի գործը վաճառելի ու շահաբեր ըլլալու վստահութիւնը պէտք է ներշնչէ հրատարակչին: Հրատարակչական Տան եւ հեղինակին միջեւ համաձայնութիւնը կրնայ ըլլալ երկու ձևով. ա. Հրատարակչական տունը պատուագին մը վճարելով կը գտնէ հեղինակին գործը՝ գաջն վաճառելու ու շահարկելու իրեն վերապահելով, եւ կամ, հեղինակին որոշ գումար մը վճարելէ զատ յանձն կ'առնէ նաեւ ծախուած գիրքերէն մասնաբաժին մը տալ անոր: Այս երկրորդ ձևը, մանաւանդ կը կիրարկուի թատերագութեան պարագային, երբ երկին ամէն մէկ բեմադրութենէն յետոյ, սկզբնական գումարէն զատ, յաւելուածական գումար մը կը վճարուի հեղինակին: Այս է գրականութիւն եւ առհասարակ մշակոյթ տարածելու եւ հեղինակները քաջալերելու ձևը, որ կը կիրարկուի մշակոյթին կարեւորութիւնը գնահատող քաղաքակիրթ ազգերու կողմէ:

Կար ժամանակ երբ խորհրդային Հայաստանն ալ, այս առումով, քաղաքակիրթ այդ պետութիւններու շարքին մէջ կը գտնուէր: Հրատարակչական հօր կազմակերպութիւն մը կար Հայպետհրատ անուամբ, որ իր հովանիին տակ առած էր հայ գրողները: Գրողներու Միութեան յանձնարարութեամբ եւ պետհրատի վաւերացումէն յետոյ, երբ գրողի մը մէկ երկը արժանի նկատուէր հրատարակութեան ան կը վարձատրուէր ըստ որակի եւ ծաւալի: Հեղինակին իւրաքանչիւր տողն ու բառը հաշուի կ'առնուէին վճարման համար: Իսկ այդ վճարումը հեղինակին քանի մը տարուան ապրուստը կ'ապահովէ:

Այս առթիւ ուրախալի եւ հպարտաւոր թէ յիշել որ հայ պետութիւնը հանուր հայութեան Մայր Հայրենիքը ըլլալու հանգամանքը շեշտելու համար նկատի կ'առնէր նաեւ սփիւռքահայ գրողները, որոնցմէ ոմանք Պետհրատին կողմէ հրատարակուելու բախտին արժանացան՝ նիւթական վարձատրութեան կողքին բարոյական մեծ վարկ ալ ապահովելով: Այդ բախտաւորներէն մէկն ալ ես եղայ, երբ «Որսորդի Ուղիներով» խորագրեալ պատմութեան քերական հատորը վերահրատարակուեցաւ «Ափրիկեան Անտառներուն Մէջ» խորագրով: Խոստովանիմ որ այս յաջողութիւնը կը պարտիմ մեծ մասամբ վախտանգ Անանեանին, որ իր մշակած գրական սեռին, յանձնախնամի, սփիւռքահայ հետեւորդ մը, կամ ուղեկից մը գտած ըլլալ կը կարծէր:

Երբ տարի մը յետոյ Հայաստան

տան գացի՝ ինծի համար քան օրինակ միայն պահեր էին, իսկ 10,000 տպաքանակի օրինակները ծախուէր էին արդէն: Ծախուելը՝ ծախուել, այդպէս էր այդ օրերուն, սակայն աւելի կարեւորը՝ կարդացուել էին, որուն ապացոյցը առօրեայ հանդիպումներու ընթացքին կը տեսնէի, երբ գրող կամ ընթերցող բարեկամներ կը խօսէին գրքին մասին՝ մէջբերումներ կատարելով: Իսկ այցելած դպրոցներու մէջ պատանի տղաք ու աղջիկներ ափրիկեան անտառներու մէջ արկածախնդրական արշաւներու նկարագրականը կ'ընէին խանդավառ կերպով:

Այսօրուան անկախ Հայաստանը, դժբախտաբար, չկրցաւ շարունակել այդ գեղեցիկ ավանդութիւնը, եւ Սփիւռքի անմխիթար վիճակին նման, հոն եւս գրողները մնացին անպաշտպան: Բնականաբար, այս կացութիւնը տուժեց եւ որակը եւ քանակը: Որակը տուժեց, որովհետեւ հրատարակուելիք գործը քննութեան անցնող գնահատիչ մարմին չկայ, չկայ Պետհրատ, կամ համապատասխան հրատարակչական տուն մը: Ձեռքը գրպանը համոզող գիրք կը հրատարակէ, հոգ չէ թէ կարդացուելիք չըլլայ ան, կամ, կարդացող ընդհանրապէս չկայ արդէն: Քանակը տուժեց նոյն պատճառներով եւ առաւել՝ տարրական ապրուստը ճարող հեղինակ մը դժուար վատակած դրամը ինչպէ՞ս կրնայ գիրքի վրայ ծախսել: Որով, ստեղծուեցաւ սփիւռքեան պատկեր:

Այստեղ պէտք է յիշել հագուադէպ պարագաներ, երբ մեկեանաներու օգնութեամբ գիրքեր կը հրատարակուին, կամ, խորհրդանշական պատուագիններ կը վճարուին մամուլի վատակաւոր աշխատակիցներու: Բայց որքան ալ գնահատելի նկատենք այս մասնակի ու միակողմանի խթանները՝ հիմնական փոփոխութիւն մը չեն կրնար յառաջացնել այս տխուր կացութեան մէջ:

Հայրենիքի եւ Սփիւռքի մէջ տիրող այս ցաւալի վիճակը լաւատեսութիւն չի ներշնչէր հայ գրականութեան եւ ընհանրապէս մշակոյթի ապագային հաշուոյն: Հետզհետէ գրողները պիտի նստարանն եւ այս աշխարհէն հեռացողներուն տեղ նորերը պիտի չհասնին: Արդէն կը տեսնուի տերեւթափը: Այսօրուան սփիւռքի գրական կեանքը եւ մամուլը լուսաւոր պահողները, մեծ մասամբ, իրենց կեանքի վերջալոյսը ապրողներն են:

Ճա՞րը: Բնական ընթացքով ճարը չ'երեւար, քանի որ, մեկնողներուն տեղ համապատասխան թիւով նորեր չեն հասնիր: Ուրե՞մն. արուեստականօրէն պէտք է գտնել ճարը, որուն կրնայ օգնել հրատարակչական Տան մը ստեղծումը: Գրողներու Միութիւններ եւ վարչութիւններ կազմելու փոխարէն, կամ, անոնց գուգահեռ եւ աւելի առաջ, հրատարակչական տուն մը հիմնելն է կարեւորը, որուն դերը յիշուեցաւ արդէն:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն, Համագործակցութեան, Թէքէեան, Նոր Սերունդ եւ այլազան մշակութային միութիւններ այս ուղղութեամբ պէտք է մտածեն: Պէտք է հիմնել Սփիւռքի հրատարակչական Տունը:

Այլապէս տխուր է ապագան հայ գրականութեան եւ մշակոյթին ընհանրապէս:

## ՄՍՍՅՈՒԲ ՅՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ «ԱՆՈՒՐՁ ԳԵՏԻՆ ԿԱՍՈՒՐՁՆԵՐԸ» ՊԱՏՄՈՒԾՔՆԵՐ Մ. ՀԱՅԿԵՆՑ

Տ.Ա.Գ

Մ. Հայկենցի «Անուրջ Գետին Կամուրջները» պատմութեան քերական հատորը լոյս ընծայուած է 2007-ին, Մայրենի Հրատարակչատունէն, Նիւ ձըրքի:

Մեր տրամադրութեան տակ գտնուող մաքուր, խնամուած եւ ներկայանալի կազմով 102 էջերէ բաղկացող ներկայ հեղինակութիւնը, կը պարունակէ վեց պատմութեան (Ա. Մաս) եւ խոհական բնոյթի երկու արձակ մշակումներ (Բ Մաս):

Հայկենցի շոշափած նիւթերը վերցուած են իրական կեանքէ:


Հոն կայ հաւատարիմ սիրոյ յաղթանակը, որ կը մշակուի Զիգէթին վզնոցին Սուրէնին համար ստեղծած առկախումով (suspense). (Թիւ 8-ը Թուի'սթ):

Հոն կայ հայրենիքի, հայ լեզուի սիրով ապրող հայուն տառապանքը, որոնք ծնունդ կ'առնեն ..«մոռուած, մոռցուելիք եւ չմոռցուելիք բաներով», (Ախտաճանաչում):

Հոն կայ կեղծ հայը, գ'Աստուած, Հայ եկեղեցին, հայը եւ հայութիւնը ասող Չարլին, որ իր մահուան անարին՝ պիտի վերադառնար իր արմատներուն եւ մահամերձ ձայնով մը պիտի շնչար «Իզ-իզ տիս-պա-տա-պատա-րագ»:

Հոն էր երկրի ընկերութեան բարոյական ստորնագոյն անկումը, որ իր ոստայնին մէջ պիտի առնէր բարեմիտ հայը: Իր նորապսակ գաւկին Յովիկին մեղրալուսնային ճամբորդութեան, «Արուսյակին արեւը երկու օր կրակ թափած էր տիկին Արուսեակին (մօր) սրտին մէջ» Այդ նոյն ճամբորդութեան, Հարսը՝ գործատէր Թինան, հրաւիրած էր իր երկարամեայ երկու պաշտօնեաները Գարմենը եւ Մարչէլլոյին: Մարչէլլոն մեղաւոր յարաբերութեան մէջ կը գտնուէր հետը. (Բարի Երեկոյ, Ստուերներ):

Հոն էին «Ծ փառնու մարիուանայի, 2 փառնու քոքայինի եւ 2000 հատ մեթանֆէթամինի» յայտնութեամբ պատկերացող սպառնալիքը՝ հասակ առնող հայ նոր սերունդին, «ներգաղթի», «արտագաղթի», «սովետական աքսորի», «խորհրդային Մուրաթէկեան Կաթողիկոս»ի սպանութեան ու «մեր դպրոցներէ ներս



հայերէնի հանդէպ անտարբերութիւնը. (Յայտնութիւն Հայաստանի):

Վերջապէս հոն էին Հայ Եկեղեցին, «...պսակէ պսակ, մկրտութենէ մկրտութիւն, թաղումէ թաղում աշխարհի էն զարդարուն, էն ընդարձակ եւ էն շքեղ թարգմանութեան գրասենեակի վերածուող եկեղեցի», «...հայու հոգին նորագոյն ձեւով փառաւորելու եւ հայու հոգին անփորձ եւ անխռով ապրեցնելու» մտորումները (Նորէն Եկեղեցի Երթալ Կ'ուզեմ) եւ, թող որ «...1700-ամեակին առթիւ Նիւ Եորքի Առաջնորդարանին պատրաստած խորհրդանշանը եւ նոյն խորհրդանշանին պատասխանները տաճարէն ներս թէ դուրս... Մեսրոպէն (Մեսրոպ Մաշտոց Ա.Գ.) մէկ հատիկ գիր չկար», ի հեճուկա ասոր, հոն էր լուսաւոր ապագայի լաւատեսութիւնը. «Չա'րկ, որովհետեւ ամէն Յոյս գրեց կը յուսայ եւ ամէն Ապագայ գրեց կը պաղատի...» (Ոգին Ազգին):

Գրաւիչ է Մ. Հայկենցի պատմողական ոճը: Ընթերցողը կը կապէ դէպքերու աստիճանական զարգացումին: Չկան աւելորդաբանութիւններ: Լեզուն հարուստ, պատկերաւոր, հիւմորով լեցուն: Հայկենց սրամտօրէն հարուածային է բայց միշտ կառուցողական: Կայ ջերմութիւն:

Առիթ մը մտածելու այն տագնապներուն մասին, որոնք մաս կը կազմեն մեր առօրեայ կեանքին, անկախ մեր կամքէն:

**ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄՈՒԹԻՒՆ**  
**Վ Ի Ծ Ա Կ Ա Յ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն**  
**Ի նպաստ**  
**Նոր Հաճոյ Մեծն Սուրատ դպրոցին**  
 Մեծ Պարգել՝ 2008 Lexus ES 350  
 Ա. Պարգել՝ Երկու Երթ ու Դարձ Տոմս Հայաստան  
 Բ. Պարգել՝ Laptop Համակարգիչ  
 Գ. Պարգել՝ 42" Plasma TV  
**Վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ**  
**Կիրակի, Մարտ 16, 2008, Կ.Ե. Ժամը 8:00ին**  
**Verdugo Hills Country Club**  
**400 West Glenoaks Blvd., Glendale, CA 91202**  
 Նոր Հաճոյ Քաղաքի 50-ամեակի տօնակատարութեան առիթով  
**Նուէր՝ \$100**  
**Տոմսերը ստանալու համար հեռաձայնել՝**  
**(626) 351-0695, (626) 577-7234, (818) 243-7029**

**ԵՐԱԺՅՏԱԿԱՆ**

**ԱՐԱ ԳԵՈՐԳԵԱՆ՝ ՄԻՇՏ ՅԱՂԹԱԿԱՆ...**

**Հենրի Կ ԱՆԱՍԵԱՆ**

... Ժողովրդական առած կայ. «մի չիմար քարը զցեց ջրհորը, հարիւր խելօք չկարողացան այն հանել ջրհորից»:

Ճանաչուած ու սիրուած կոմպոզիտոր Արա Գեորգեանը իր այս վերջին փորձութեան մէջ, ապացուցէ, որ կայ նաեւ այդ առածի մէկ այլ տարբերակ եւս. «հազար չիմար քարը զցեցին ծովը եւ մի խելօք կարողացաւ այն ջրի երես հանել...»:

Եւ այսպէս. ազերիների անհիմն ձաբուտուկներին վերջ տալու միտումով, Արա Գեորգեանը միայնակ նետուեց ասպարէզ եւ կարողացաւ ապացուցել, որ «Արցախ» ստեղծագործութեան մեղեդին իրենն է եւ ոչ թէ նորովի մշակուած ու գործիքաւորուած մի գործ, որի հիմքում իբր ընկած է ազերի կոմպոզիտոր Թոֆիկ Կուլիեւի «Սենէ դէ գալմագ» («Քեզ էլ չի մնայ») երգի մեղեդին:

«Արցախ» ստեղծագործութեան հրապարակ իջնելուց յետոյ անցել է մօտ տասը տարի, եւ այն կատարուել, հնչել է աշխարհի գրեթէ բոլոր գուգահեռականներում: Ի՞նչ պատահեց այժմ, որ ոտ ու ձեռ ընկած, ազերիները փորձում են իրենց վերագրել այդ շէնչող ստեղծագործութիւնը:

Ես այդ թեմային անդրադառնալու մտադրութիւնս զանց էի առել, որովհետեւ հայաստանեան մամուլը, թէեւ փոքր ինչ ուշացումով, լայնօրէն անդրադարձաւ այդ՝ սուտ, հնարովի պատմութեանը:

Սակայն, քանի որ շատեր նոր են տեղեակ դառնում ասէկօսներով լի այդ բառնելի յերևրանքին, հաշուի առնելով նաեւ սփիւռքահայի հոգեբանութիւնը՝ Հայաստանում կատարուող ամէն մի իրադարձութեանը տեղեակ լինելու՝ իր իրաւացի պահանջը, ինչպէս նաեւ երաժիշտների եւ երաժշտասէրների հետաքրքրասիրութիւնը, որոշեցի մանրամասնել երկու-երեք ամիս տեւած այդ պատմութեան ծալքերը:

Երեք ամիս առաջ Երեւանում. - Մասնորո՞. հեռաձայնի միւս ծայրից լսում եմ Արա Գեորգեանի յուզուած ձայնը, - պատկերացնում ես, էդ շան որդի ատրպէյճանցիները մեծ աղմուկ են բարձրացրել, ասելով թէ իմ «Արցախ» ստեղծագործութեան երաժշտութիւնը գողացել եմ կոմպոզիտոր Թոֆիկ Կուլիեւի «Սենէ դէ գալմագ» երգից... ի՞նչ անեմ...

- Նախ, բարեկամս, մի յուզուիր, ամէն ինչ կը ճշդեմք, ես լաւ գիտեմ այդ երգը, նոյնիսկ երկու նոտայի նմանութիւն չկայ քո երաժշտութեան հետ:

- Եւ, գիտե՞ս, որ քան էլ զարմանալի, յայտարարութիւն անողն էլ Ռուսաստանում Ատրպէյճանի դեսպան ֆոլյաք Բիւլբիւլօլլին է, որը նախկինում երգիչ է եղել:

- Միբլի մաստրօ, դեռ կայ աւելի սարսափելին: Այդ «գրագէտ» երգիչ-դեսպանը սպառնացել է դատի տալ ինձ բանագործութեան համար եւ ասել, թէ «Այդ երաժշտութեան հեղինակն ազերի կոմպոզիտոր Թոֆիկ Կուլիեւն է, իսկ Արա Գեորգեանը պարզապէս գողացել է այն, գործիքաւորել ու գետեղել իր երաժշտական սկաւառակում»:

- Ես որքան իշուում եմ, քո «Անի» սկաւառակը, որի մէջ է «Արցախ»-ը, թողարկուել է Լոս

Անճելոտում 1999-ին՝ «Eye Records» ընկերութեան կողմից, եւ դու դեռ այն օրերից ձեռք ես բերել հեղինակային իրաւունք, որը պաշտպանուած է ամերիկեան ծերակոյտի կողմից:

- Այո՛, ի հարկէ ունեմ հեղինակային իրաւունքի վկայականը, եւ, աւելին. սկաւառակը արտադրութեան է իջել իմ՝ հեղինակային իրաւունքը ստանալուց յետոյ, որը ստանալու համար սպասել եմ գրեթէ մէկ տարի: Այդ էս է, որ դատի պիտի տամ նրանց՝ իմ երաժշտութիւնը առանց իմ թոյլտուութեան օգտագործելու համար:

... Պարզապէս ապշել կարելի է, որ երգիչ, երաժիշտ, դեսպան Բիւլբիւլօլլին իր իսկ անգրագիտութեան գոհն է դարձել: Տասը տարի հնչում է Գեորգեանի «Արցախ»-ը, հիմա՞ անդրադարձաւ, որ այն «գողացուած» է, ո՞ւր էր մինչեւ հիմա:

Վերջին վեց-եօթը տարիների ընթացքում Արա Գեորգեանի «Արցախ» երաժշտութեան տակ պարել են աշխարհի ոչ միայն բազմաթիւ հայկական պարայմբեր, այլեւ նշանաւոր գեղասահորդներ ու գեղարուեստական մարմնամարզութեան մրցանակակիրներ, ինչպէս օրինակ 2002-ին՝ ռուս գեղասահորդ Ալեքսանդր Աբը, 2006-ին՝ վրացուհի Ելենա Գեղեւանիշվիլին, իսկ վերջին անգամ, 2007-ի Սեպտեմբերի 15-ին, «Արցախ»-ի երաժշտութեան տակ պարել է... ազերի մարմնամարզուհի Դինարա Գեմատովան՝ առանց տեղեակ պահելու իր երկրի պատկան մարմիններին, թէ ինչ երաժշտութեան տակ է պարելու:

Այդ պատճառով էլ ազերիներն ակամայ ընկան իրենց իսկ կողմից յօրինուած պատմութեան մէջ, որն անշուշտ գալիս է իրենց հայրերի հանդէպ ունեցած ատելութեան շարափից:

Ազերիների կատաղութիւնը է՛լ աւելի է սաստկացել, երբ մարզահամալիրով մէկ հնչել է հաղորդավարի ձայնը, որից միլիոնաւոր հեռուստադիտողներ տեղեակ են դարձել, որ Արա Գեորգեանի երաժշտութեան տակ իր վարպետութիւնն է ցուցադրելու իրենց հայրենակցուհի Գեմատովան:

Նրանց վրդովմունքն ու կատաղութիւնը գազաթնակէտին է հասել, երբ իմացել են, որ Հայաստանում հրատարակուող ռուսերէն «Գոլոս Արմենիի» (Հայաստանը Ձայնը) թերթը անդրադարձել է ռուսական հեռուստատեսութեան կողմից կազմակերպուած գեղարուեստական մարմնամարզութեան մրցումին եւ լրատու նիւթը վերնագրել է «Ատրպէյճանցի սպորտսմենուհին ճանաչել է ազատ Արցախը»:

Ինչպէս Արա Գեորգեանն է ասում. «Ատրպէյճանցիներին դուր է եկել իմ ստեղծագործութեան անուանումը՝ «Արցախ», եւ, որովհետեւ Գեմատովան պարել է իմ երաժշտութեան տակ, որոշել են իմ երաժշտութիւնը սեփականացնել, որպէսզի «փրկեն», թէ իրենց եւ թէ սպորտսմենուհուն»:

- Իսկ իրականում՝ ինչի՞ց է ծագել այս թիւրիմացութիւնը:

Բոլորիս է յայտնի, որ գեղասահքի եւ գեղարուեստական մարմնամարզութեան մրցոյթների ժամանակ, մարզիկներն իրենց վարպետութիւնը ցուցադրում են նախապէս ընտրուած եւ փորձութեան բովոյ մնացած երաժշտութեան տակ:

Եւ, սովորաբար, երաժշտական այդ կառուցը խմորուում է

արագ, դանդաղ եւ համեմատաբար արագ տեմպերով հիւսուած, իրարից տարբեր երաժշտական գործերի խառնուրդով:

Անշուշտ, շատ անգամ իրարամերժ երաժշտական այդ կտորները իրար են ագուցուում մասնագիտական մեծ վարպետութեամբ, որպէսզի դիտող-ունկնդրի համար դիւրին լինի ըմբռնել երաժշտութիւնը:

Անցեալ տարուայ Սեպտեմբերի 15-ին ռուսական ORT հեռուստաընկերութեան կողմից կազմակերպուած մրցոյթում Դինարա Գեմատովայի պարը յայտարարուել է «Հայկական Պար, հեղինակ՝ Արա Գեորգեան», իսկ իրականում երաժշտութեան դանդաղ մասում Գեմատովան պարել է Թոֆիկ Կուլիեւի «Սենէ դէ գալմագ» երգի, իսկ արագ հատուածում՝ Արա Գեորգեանի «Արցախ» ստեղծագործութեան երաժշտութեան տակ: Երկու գործ, երկու հեղինակ: Առերեւոյթ ամէն ինչ յստակ է, սակայն դա քաղաքակիրթ երկրների եւ նոյնքան քաղաքակիրթ ժողովուրդների համար է:

Ինչպէս ասում են. այլ տեղ է թաղուած «շան գլուխը»:

Այստեղ արդէն մեղքը ոչ թէ հաղորդավարինն է, այլ պարի բեմադրիչներ Սաշա Սաւելեւայի, Ալեքսանտր Սախնովսկիի եւ, մասնաւոր՝ երգիչ-դեսպան Բիւլբիւլօլլու, որոնց պարտականութիւնն էր ճշդել ամէն մի մանրամասն ստեղծութիւն՝ թիւրիմացութիւններից զերծ մնալու համար:

- Դո՛ւ, դեսպան կոչեցեալ Բիւլբիւլօլլի, որ կրում ես «Սոխակի գաւակ» անունը, հաւանաբար լաւ էլ երգիչ ես եղել ժամանակին, որ այդպիսի մականունով ես բեմահարթակներ գրաւել, ի՞նչ է, չգիտե՞իր, որ քո հայրենակցուհին երաժշտական երկու գործերի տակ է պարելու, ուրեմն պէտք է յիշուեր նաեւ երկրորդ հեղինակի անունը նոյնպէս: Ո՞րտեղ է այստեղ Արա Գեորգեանի մեղքը: Նախքան հարայ-հրոց բարձրացնելը, ինչո՞ւ մեղքի տակ ընկար, ի՞նչ գործ ունէիր դիւանագիտութեան հետ:

- Դու՛ ի՞նչ դիւանագէտ ես, որ որպէս «երկիր» ներկայացնող պետական գործիչ, չգիտես թէ քո հայրենակցուհին ի՞նչ երաժշտութեան տակ է ներկայացնելու քո երկիրը: Եւ, փոխանակ սուր ճօճելու Արա Գեորգեանի դէմ, դիւանագէտի բաճկոն հագած նորելուկ հայրենասէրի նման, առիթ ես փնտրում փնովելու քո երբեմնի «հարեւան» երկրին եւ նրա գաւակներին: Եւ դեռ աւելին պատրաստուում ես դատի տալ «օրինագանց» հայ երաժշտին:

Էստեղ են ասում. «Սէյլը ճռուալուն, սելուրն է ճռուում»:

Փոխանակ Արա Գեորգեանը դատի տար դեսպանին եւ միւսներին՝ իր երաժշտութիւնը առանց թոյլտուութեան օգտագործելու, միլիոնաւոր մարդկանց թիւրիմացութեան մէջ զցելու համար, մեր ազերի «եղբայրներն» են անհիմն մեղադրանքներ բարդում մի կոմպոզիտորի վրայ, որի «Արցախ» ստեղծագործութիւնը տասը տարի շարունակ, հեղինակային իրաւունքով հնչում է աշխարհով մէկ:

Ես հրաշալի գիտեմ Թոֆիկ Կուլիեւի «Սենէ դէ գալմագ» երգը, եւ երբ Արան ինձ յայտնեց այս պատմութեան մասին, ես մեղմօրէն երգեցի այն, անշուշտ առանց բառերի:

Անկասկած, իմ սերնդի շատ երաժիշտներ եւ երաժշտասէրներ

գիտեն այդ երգը, որ 40-50 տարի առաջ, էստրադային երգերի ծաղկման շրջանում, լսել են խորհրդային երկրի տարբեր բեմերից: Այն կատարել են ազերի նշանաւոր երգիչներ Ռաշիդ Բեյբուլօլլը, Շոֆքետ Ալեքպերովան, Մուսլիմ Մագոմաեւը, եւ, հաւանաբար վերջին շրջանում նաեւ այսօրուայ նորելուկ «հերոսը»՝ Ռուսաստանում Ատրպէյճանի դեսպան «սոխակի որդի» Բիւլբիւլօլլին:

Յիշողութիւնս վերականգնելու համար, Երեւանից բերել տուի «Սենէ դէ գալմագ» երգի ձայնագրութիւնը. լսեցի մէկ, երկու, նոյնիսկ երեք անգամ եւ ոչ մի ընդհանուր բան չգտայ Գեորգեանի «Արցախ»-ի հետ:

Ո՞ւմ եւ ինչի՞ էր պէտք մոգոնել այս յիմար պատմութիւնը, որ ծիծաղելի թիւրիմացութեան մէջ զցեց երկու ժողովուրդների:

Սա էլ Արցախը (որպէս տարածք) սեփականացնելու անճարակ փորձերից մէկը չէ՞ արդեօք, չէ՞ որ 40 տարի առաջ իրենց այդ՝ «մարգարիտ» երգի հանդէպ «ոտնձգութիւն» է արել իրեն հայրենակից, ազգութեամբ հայ, Արցախցի ինքնուս կոմպոզիտոր Ալեքսէյ Հեքիմեանը: Այդ հրաշալի հայն ու մի քանի տասնեակ հիւնալի երգերի հեղինակը միամտաբար, ոչ մտածածին, ազդուել է ատրպէյճանական այդ չարաբաստիկ երգից ու գրել «Աշտարակ» երգը:

Հիմա, ինչ է, ասե՞ք, թէ Հեքիմեանը գողացել է Կուլիեւի երաժշտութիւնը: Եթէ ազերի ազգայնամոլներն այդքան հիւանդագին վերաբերմունք ունեն իրենց ազգային «արժէքների» հանդէպ, հապա ո՞ւր էին մինչեւ հիմա:

Իհարկէ այն տարիներին ձայն չէին հանի, որովհետեւ Արցախը Ատրպէյճանի մէջ էր մտնում, իսկ «Աշտարակ» երգի հեղինակն էլ Ղարաբաղցի էր: Ձայն չէին հանի նաեւ այն պատճառով, որ այդ տարիներին Հեքիմեանը ծանրակշիռ պաշտօն էր վարում Սովետական երկրի Ներքին Գործերի Նախարարութիւնում եւ Մոսկուայի իր աշխատասենեակը վեր էր ածել բարեգործական հաստատութեան՝ Հայաստանից եւ Ղարաբաղից այս կամ այն հարցով իրեն օգնութեա խնդրանքով դիմող հայրենակիցների համար:

Լաւագոյնս գիտեմ ի ծնէ մեղեդաստեղծ (նոր բառ է, անակնկալի չգաք, - Հեն. Ա) Ալեքսէյ Հեքիմեանին, որի մի քանի երգերն էլ ես եմ գործիքաւորել ժամանակին: Նրա ինչի՞նչ էր պէտք ուրիշից մեղեդի «թոցնել»:

Պարզապէս (ինչպէս շատ է պատահում բազմաթիւ երգահաններին մօտ), նրա երեւակայութեան մէջ այնքան է տպաւորուել Կուլիեւի երգը, որ ժամանակի ընթացքում, անգիտակցաբար, իրեն թուացել է թէ ինքն է յօրինել այն:

Իսկ ահա այսօր, պատեհ առիթ համարելով վերը նշուած պատմութիւնը, մեր ազերի «հարեւանները» մեր սքանչելի երաժշտութիւնը վարկաբեկելու համար թիրախ են ընտրել տաղանդաւոր կոպմոզիտոր Արա Գեորգեանին, որը տասը տարի շարունակ յօրինելով ազգային-հայրենասիրական սքանչելի գործեր, իր հաստատուն տեղն է ապահովել մեր երաժշտութեան երկնակամարում:

Եւ, ինչպէս ինքն է ասում. - Հայկական մշակութալին արմատներն այնքան խորն են, որ մենք կարիք չունենք օտար աղբիւրներից օգտուելու:

### ԳԻՏԵՔ ՍԵՐԺԸ ԻՆՉՈՒ՞ ԿՈՒՉԷ ԴԱՌՆԱԼ ՆԱԽԱԳԱՐ

Շարունակում է 1-ին

գործ մշտապես ուրացած են ինքնու  
միու իշխանաւորները, որոնք կը  
փառաբանէին երկրէն ներս արձա-  
նագրուած յառաջդիմութիւնները  
յետ անկախ Հայաստանի առաջին  
Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեա-  
նի... նախագահութեան հրաժարի-  
լէն: Այդ ելոյթներուն շարադրումը  
այնպիսին էր, որ կարծէ՛ք ծաղրի  
կ'ենթարկէր ունկնդիր գիւղացի-  
ներու բարեմտութիւնը: Սարգիս-  
եան կը փորձէր գրգռել իր ուկն-  
դիրներուն երեսակայութիւնը ի  
խնդիր իրմով պայմանաւորուած  
կենցաղային բարեկրթութեան  
բուռն: Վերջապէս, այդ ելոյթներու  
միտք բանին պայմանադրական  
յանձնառութեան տակ դնել էր իր  
ունկնդիրները: Ժողովուրդը եթէ  
կ'ուզէր վերջ տալ իր յուսահատա-  
կան կեանքին, պէտք էր բուէրակեր  
իրեն: Իր անել կացութեանէն դուրս  
գալու համար:..

Այս բոլորէն ետք Սարգիսեան  
Հայաստանի նախագահ դառնալու  
հիմնականները պիտի բացա-  
յայտէր, Սիսիան քաղաքի հրապար-  
ակիւն վրայ հաւաքուած իր ունկն-  
դիրներուն:

Մինչ այդ, Սպանիայի բանի եւ  
Անգղիայի կոթի հաւաքներուն՝ Սերժ  
Սարգիսեան, պահ մը մոռնալով իր  
անդամներին մեղաւորութիւնը,  
եւ ոճրային մեղաւորութիւնը այդ  
բոլորի չգոյութեան մէջ, հանգա-  
մանօրէն անդրադարձած է երկրէն  
ներս ընկերա-բարոյական եւ սահ-  
մանադրական իրաւունքներուն  
հաստատման մասին: Կ'ըսէ ան. «  
Մեր երկրում քաղաքական գարգա-  
ցումները պէտք է հիմնուեն մար-  
դու արժանապատուութեան, ազա-  
տութեան, հաւասարութեան երաշ-  
խաւորման իրաւունքի գերակայու-  
թեան հաստատման, ժողովրդա-  
վարութեան ապահովութեան  
սկզբունքներու վրայ»:

Մեր շնորհակալութիւնները  
Սերժ Սարգիսեանին, որ անգամի  
մը համար կու գայ հրապարակաւ  
ընդունելու մեր երկրէն ներս հաս-  
տատուած ապա-ժողովրդավարա-  
կանութիւնը, սահմանադրական  
սկզբունքներու բացակայութիւնը,  
ազատութեան ոտնակոխումը,  
անիրաւութիւնը, որոնք պատմառ  
հանդիսացած են ժողովրդական  
ըզնվումներու...

Այս հաստատումներու ետին  
կանգնող երբեմնի պաշտպանու-  
թեան նախարարը, ներկայիս վար-  
չապետ, նաեւ ինքնուէ՛ր, ուրիշներու  
շարքին եւ անոնց հետ, որ տարի-  
ներ շարունակ իր թիկունքը տուած  
երկրի նախագահին, գործակցա-  
բար ննչեց ընդդիմութիւնը, հա-  
լածեց նշմարտախօսը, ազատագր-  
կեց ըմբոստ քաղաքացին , թալա-  
նեց երկրի հարստութիւնը, ար-  
գիլեց եւ անգամ դաւադրաբար  
արեան մէջ խեղդեց այն քաղաքա-  
կան առաջնորդները, որոնք ան-  
սակարկ պաշտպաններն էին նո-  
րանկախ երկրի կառոյցներու, մեր  
ազգային սկզբունքներուն: Ան,  
ներկայիս եկած է խօսելու Սպան-  
իայի բանի եւ Անգղիայի բարի  
գիւղացիներուն՝ հաւաստիացնել  
փորձելով, թէ մեր երկրի քաղա-  
քական գարգացումները պէտք է  
հաստատուին այդ սկզբունքնե-  
րուն վրայ... Ուրեմն, մեր երկրի  
քաղաքական գարգացումները  
հաստատուած էին քաղաքակա-  
նապէս ապարարոյ, ստրկամտու-

թեան, խտրականութեան եւ անի-  
րաւութեան, ապա-ժողովրդավա-  
րութեան անսկզբունքներուն  
վրայ»:

Հետաքրքրական է Սիսիան  
Քաղաքի հրապարակի վրայ Սերժ  
Սարգիսեանի կատարած հար-  
ցադրումը. «Հաւանաբար կը  
հարցնէք, թէ ինչու՞ ուզում եմ  
դառնալ նախագահ», ապա առանց  
ժամանակ կորսնցնելու, ան կը  
պատասխանէ. «Որպէսզի պարեմ  
աւելի լաւ Հայաստանում: Ես խոս-  
տանում եմ, որ մինչեւ 2012-ը մեծ  
կ'ունենանք ընդամենը 10-ը տո-  
կոս աղքատ բնակչութիւն, իսկ  
չճարտութիւն ընդհանրապէս չի  
լինի» Սարգիսեան դիտելով տայ  
միաժամանակ, որ իր ընտրական  
ծրագիրը «ամբողջապէս հիմն-  
ուած է սիրոյ, փոխադարձ յար-  
գանքի եւ վստահութեան մթնո-  
լորտ ձեւաւորելու ցանկութեան  
վրայ, որն էլ մեզ բերելու է յաջո-  
ղութիւն»:

Այս իրայատուկ տրամաբա-  
նութիւնը որքան գարմանք, նոյն-  
քան եւ անելի ծիծաղելի կը թուի  
այն պատմառ, որ այսօր տա-  
րիներէ ի վեր իշխանութեան  
բարձրագոյն դիրքերու վրայ  
գտնուող նախագահական այս  
թեկնածուն, դոյզն սէր, փոխա-  
դարձ յարգանք եւ վստահութիւն  
չէր ներշնչած իր ժողովուրդին:  
Ընդհակառակը՝ ան սերմանած էր  
վախ, սպառնալիք, անապահովու-  
թիւն եւ չարաշահութիւն: Քաղա-  
քացիին աչքերը յառած մնացած  
էին դուրսի աշխարհի վրայ, երե-  
ւակայեցէ՛ք անգամ մը, նոյնիսկ  
Թուրքիոյ՝ որ եւ միջոցաւ ապա-  
հովութիւն եւ ապրուստ նարելու  
համար: Եթէ իրապէս մտաւոր  
էր իր ժողովուրդի բարօր կեան-  
քով, ապա ի՞նչ սպասեց իշխա-  
նութեան գալէն անմիջապէս ետք  
գործի ձեռնարկելու, իրրեւ կա-  
ռավարութեան պետ՝ սէր, ապա-  
հովութիւն եւ բարօր կեանք ստեղծ-  
ելու համար իր ժողովուրդին, եւ  
կամ «մեծ կարելիութիւններ ու-  
նեցող Գործար» գիտարուեստա-  
կան կենտրոն դարձնելու հա-  
մար»:

Մինչ անդին Պրն. թեկնածուն,  
նաեւ կը սակարկէր իր խոստում-  
ները:

Ան այդ մասին իր յայտնու-  
թիւնները կատարեց Ծինուհար  
գիւղին մէջ: Սարգիսեան պար-  
տաւորութեան տակ կը դէր իր  
ընտրողները. «վստահելու իրեն  
եւ իրեն բուէն տալու» որպէսզի  
կարեւոր իրագործել խոստում-  
ները: Նոյնքան նորարար ու նոր  
տրամաբանութիւն էր Սերժ Սար-  
գիսեանի մօտ այն մտեցումը, որ  
ցուցաբերեց քաղաքացիներուն  
մօտ: Անոնց պատգամեց. թէ «ան-  
գամի մը համար եւս պարտէին  
կշռադատել ու տեսնել , թէ ո՛վ  
աւելի լաւ կընայ ղեկավարել մեր  
երկիրը»: Եւ որպէսզի ի վիճակի  
ըլլար անելի լաւ կառավարել,  
Սարգիսեան ունէր նոր պատգամ  
մը, գործառնայտեց Գործարի մէջ.  
«Ինձ համար չափազանց կարե-  
ւոր է , թէ ինչքան բուէ կը ստա-  
նամ Սիւնիքում: Եթէ քիչ տոկոս  
ստանամ, ապա ընտրուելու պա-  
րագայում նշում կը լինեմ, եւ  
ձեզ խնդրում եմ, այնպէս արեւէ,  
որ ձեր երկրի նախագահը բարո-  
յապէս նշում չլինի»:

Համաձայն իր այդ պատգա-  
մին, Սերժ Սարգիսեան կը գգու-

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Շարունակում է 5-ին

է այժմ բնակուում իր պետութեան  
ասհմաններու: Աւելի շատ իռլան-  
դացիներ ու լիբանանցիներ ապրում  
են արտերկրում, քան իրենց տանը:  
Աշխարհի տարբեր երկրներում մենք  
հանդիպում ենք իտալական, յունա-  
կան, գերմանական, ռուսական, ուկ-  
րաինական, բուլղարական, հունգա-  
րական, ռումանական, սերպիական,  
չինական, հնդկական, ճափոնական,  
վիետնամական, ֆիլիպինեան,  
թրքական , մերձավայրէջ ժողո-  
վուրդների եւ այլ ազգերի գաղութ-  
ների: Հետեւաբար արտերկրի գաղ-  
թը գուտ հայկական երեւոյթ չէ:  
Ամէն մի ազգ ունի իր պատմութեան  
տարբեր հանգրւանում արձանագ-  
րած արտագաղթի իր սեփական  
պատճառները:

Միւս կողմից, համաշխարհա-  
յին պատմագիտութիւնը ապացուցել  
է, որ հայերի արտագաղթի հոսքի  
մեծ մասը բուտութեան արդիւնք է:  
Հայաստանը գտնուելով արեւելեան

ու արեւմտեան պետութիւնների մի-  
ջեւ միշտ ենթակայ է դարձել ասպա-  
տակութիւնների: Հայերը պարսկաս-  
տան են տեղափոխուել ոչ իրենց  
կամքով: Արդի սիւրուքը հետեւանք  
է Օսմանցիների կազմակերպած ջար-  
դերի ու բուտագաղթի:

Միաժամանակ պէտք է յիշել,  
որ արտերկրի հայութիւնը միշտ էլ  
մտահոգուած է եղել իր հայրենիքով  
ու հայրենի ժողովրդով ու երազել է  
մի օր տուն վերադառնալ: Այդ  
պատճառով նա օտարութեան մէջ  
գործու ու կենսունակ է պահել իր  
լեզուն, իր եկեղեցին, իր մշակոյթը:  
Հայ մշակութային, քաղաքական,  
տնտեսական ու գիտական շատ  
փայլուն էջեր գրուել են արտերկ-  
րում: Այս ընտրութեան ժամանակ  
հայր պէտք է միաժամանակ ժխտի  
այն գաղափարը, որ իր մտայնու-  
թեանը բնորոշ է «որտեղ հաց,  
այնտեղ կաց» մենտալիտետը, որը  
հայուն խեղճացնելու, բարոյական  
ճնշման տակ դնելու մի ինքնատիպ  
երանակ է:

### Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՆՇՈՒՄԸ

Շարունակում է 8-ին

Երգչախումբի անդամներու մօտ  
անշուշտ ներկայ է տարիներու  
հոսանքին հետ կապ ունեցող ֆիզի-  
քական փոփոխութիւնները, եւ սա-  
կայն անոնց մօտ միշտ ակնյայտ է  
նուիրումը, խանդավառութիւնը եւ  
ճառագուլթեան ոգին: Այդ օր իմա-  
ցանք նաեւ որ այս երգչախումբը  
վաչէ Սրբազանի բազմաթիւ նա-  
խաձեռնութիւններին մէկը կը հան-  
դիսանայ: Նոյնպէս շնորհաւորելի  
է երգչախումբին ղեկավարը՝ Բրշ.  
Ստեփան Սրկ. Կէօզիւմեանը, որ  
երկար տարիներու վաստակ ունի  
իր եւ ղեկավար: Յաջող երգեհո-  
նահարն էր Ովսաննա Մեղրիկեան:

Հայց. Առաք. եկեղեցուց Ս.  
պատարագի արարողութիւնը յա-  
ճախ շատերուն երկար եւ յոգնե-  
ցուցիչ կը թուի եւ է: Այդ օր  
սակայն գարմանալիօրէն հետաքրք-  
րական եւ հաճելի թուեցաւ, մանա-  
ւանդ երբ պատարագէն առաջ,  
աւիթը ունեցանք տեսնելու կիսա-  
սարկաւազի եւ ապա սարկաւազի  
(Սարգիս էյլեմեանի) ձեռնադ-  
րութիւնները:

Յովնան Սրբազան գոյգ տօնե-  
րու աւթիւ հոգեշունչ քարոզ մը  
տուաւ եւ յատուկ գնահատագիր եւ  
մետալներ յանձնեց Տիար Գրիգոր  
Քարակէօզեանին, Տէնիս Սարկա-  
ւազ Տաքէսեանին եւ երէցկին Պալ-  
ճառ Մատարեանին, աւ ի գնահա-  
տանք Ս. Սարգիս եկեղեցուց իրենց  
մատուցած ճառագուլթեանց հա-  
մար:

Հացներ իր ունկնդիրները գիմք փո-  
խարինողներու ապաւինելէ: Ան  
ապահով համարելով իր ընտրու-  
թիւնը՝ այս անգամ կը ձգտէր բուէ-  
ներու բարձր տոկոսի, իր տիրա-  
կալութիւնը ամբողջական եւ ան-  
հաշուետու դարձնելու համար: Հայ  
ժողովուրդը բու կը համարէ անց-  
նող մօտ տասը անվերջանալի այլ  
չարաղէտ տարիներու փորձառու-  
թիւնը: Ժողովուրդը կը մերժէ Սար-  
գիսեանի կեղծ, հնարեալ ու ար-  
ուեստական բարբառացիները:  
Սերժ Սարգիսեանի պարագա-  
յին, իր ժողովուրդի ու հայրենիքի  
գերագոյն շահերու պաշտպանու-

Ս. Պատարագի աւարտին, հո-  
գեհանգստեան պաշտօն կատար-  
ուեցաւ Հրանդ Տիւնքի նահատա-  
կութեան առաջին տարելիցին աւի-  
թով: Ներկաներուն լամբակիւն վրայ  
կը տեսնուէին ողբացեալի նկարնե-  
րը: Ապա տեղի ունեցաւ մատա-  
ղօրհնէքի արարողութիւն եւ մա-  
տաղի բաշխում ներկայ հաւատաց-  
եալներուն:

\*\*\*  
Ս. Պատարագի աւարտին, եկե-  
ղեցուց կից Մամուլեան սրահէն  
ներս տեղի ունեցաւ «սիրոյ սե-  
ղան» ճանչցուած հիւրասիրու-  
թիւնը, որուն հանդիսավարն էր  
համակրելի, գուարճախօս եւ փոր-  
ձառու Բրշ. Յակոբ Սրկ. Մերուն-  
եան: Ընդունելութիւնը ունէր գե-  
ղարուեստական բաւական ճոխ յայ-  
տագիր, կատարողութեամբ երի-  
տասարդ եւ պատանի արուեստա-  
գէտ-արուեստագիտուհիներու,  
որոնք տարիներու ընթացքին պի-  
տի յաջողին իրենց ընտրած ար-  
ուեստի ճիւղերուն մէջ:

Ընդունելութեան նաեւ նա-  
խագահեց եւ հուսկ բանքը տուաւ  
Գերշ. Տ. Յովնան Արք. տէրտէր-  
եան: Պատշաճ ելոյթներ ունեցան  
եկեղեցուց հովիւ Արժ. Տ. Նարեկ  
Ա. Քհնյ. Մատարեան եւ Մխական  
Խորհուրդի ատենապետ՝ Վարդի-  
վառ Թուլթակ:

Մեր շնորհաւորութիւնները,  
նաեւ շնորհակալութիւնները այս  
իրապէս հոգեպարար օրուայ առ-  
թիւ եւ վարձքը կատար բողոքին:

Թ.Ղ.ԱԿԻՑ

թեան ապացոյցը կը սկսի նախ՝ երկ-  
րին հիմնական կառոյցներուն  
հասցում չարիքներուն խոստովա-  
նութեամբ, ապա՝ նախագահական  
թեկնածութեան հրաժարելով: Անոնք  
պիտի օգնեն գալիքնոր, ազգընտիր  
նախագահութեան վերջակէտել  
անոր ու միւսներուն ապա-ժողովր-  
դավարական, անապահով եւ բուտա-  
տիրական իշխանաւորութեան քայ-  
փայի ժամանակաշրջանը, որ տա-  
րակոյս չկայ քննարկման առարկայ  
պիտի դառնայ մօտաւոր գալիքին...  
Այս կը պահանջեն մեր ժողո-  
վուրդի ու հայրենիքի գերագոյն շա-  
հերը:

# ՄԱՐԶԱԿԱՆ

## ՊՈՒՐԿԱՆԵՆԸ ԳԼԽԱՎՈՐԵՑ ԶԱՎԱՔԱԿԱՆԸ

Դանիացի մասնագետ Եան Պոուլսենը նշանակուել է Ֆուտբոլի Հայաստանի ազգային հաւաքականի գլխավոր մարզիչ: 61-ամեայ մարզիչի հետ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան պայմանագիր է կնքել մինչեւ 2010թ. Մայիսը:



«Եան Պոուլսենը կը լինի նաեւ հաւաքականի տեխնիկական տնօրէնը: Բացի մարզիչ լինելը նա նաեւ զբաղուելու է մեր երիտասարդ մարզիչներին կրթելու գործով, ուստի նրա հետ մենք պայմանագիր ենք կնքել եւ որպէս տեխնիկական տնօրէն եւ որպէս գլխավոր մարզիչ», - ասաց ՀՖՖ նախագահ Ռուբէն Հայրապետեանը:

Պոուլսենը 1969-76թթ, հանդէս է եկել դանիական ակումբներում որպէս ֆուտբոլիստ, այնուհետեւ անցել է մարզչական գործունէութեան: 80-ականներին աշխատելով մի շարք դանիական ակումբներում Հայաստանի հաւաքականի նորանշանակ մարզիչը 1990թ. նշանակուել է Դանիայի ֆուտբոլի ֆեդերացիայի տեխնիկական տնօրէն, ինչպէս նաեւ Դանիայի ազգային հաւաքականում գլխավոր մարզիչ օգնական: Դանիայի հաւաքականի հետ 1992թ. դարձել է Եւրոպայի ախոյեան: 1999թ. Պոուլսենը հեռացել է Դանիայից՝ աշխատանքի անցնելով Սինգապուրում: 2006թ. աշխատանքի է անցել Յորդանանի հաւաքականում, որը նրա գլխավորութեամբ 2007թ. արձանագրել է իր պատմութեան ընթացքում լաւագոյն արդիւնքը՝ նուաճելով 20 տարեկան ֆուտբոլիստների աշխարհի առաջնութեան ուղեգիր:

«Ես շատ տխուր եմ, որ նստած եմ լուսահոգի Եան Պոուլսենի վրէժի տեղում: Ես դիտեմ, թէ նա որքան մեծ աշխատանք է կատարել», - նշեց դանիացի մասնագէտը, աւելացնելով, որ Հայաստանի հաւաքականը արդէն լաւ արդիւնքներ ունի եւ ապացուցել է, որ կարող է յաջող ելույթներ ունենալ:

\*\*\*\*\*

### 13 ՄԱՐԶԻՉ, 15 ՏԱՐՈՒՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ֆուտբոլի Հայաստանի հաւաքականի նորանշանակ գլխավոր մարզիչ Եան Պոուլսենը մեր ընտրանու 13-րդ մարզիչն է: 15 տարուայ պատմութիւն ունեցող Հայաստանի հաւաքականի համար սա բաւական մեծ թիւ է: Փորձե՞նք վերջիչէլ բոլոր մարզիչներին եւ պարզե՞նք թէ ինչու են նրանք այդքան արագ փոխուում:

1. Էդուարդ Մարգարով՝ 1992-1994թթ. 6 խաղ Մարգարովի գլխավորութեամբ ստեղծուեց Հայաստանի հաւաքականը:
2. Սամուէլ Դարբինեան՝ 1995-1996թթ. 9 խաղ «Եւրո-96»-ի ընտրական փուլի մի քանի անյաջող հանդիպումներից յետոյ Մարգարովին փոխարինած Դարբինեանի գլխավորութեամբ հայ ֆուտբոլիստները պաշտօնական հանդիպումներում տօնեցին իրենց առաջին յաջողութեամբ՝ հիւրընկալուելիս 2:1 հաշուով առաւելութեան հասնելով Մակեդոնիայի նկատմամբ:
3. Խորէն Յովհաննիսեան՝ 1996-1997թթ. 16 խաղ Հայաստանի 20-րդ դարի լաւագոյն ֆուտբոլիստի գլխավորութեամբ մեր ընտրանին վերջապէս սկսեց զարմացնել ֆուտբոլային Եւրոպային: Պաշտօնական հանդիպումներում թոյլ հաւաքականի համբաւ ունեցող Հայաստանը յանկարծ ոչ-ոքի խաղաց Պորտուգալիայի հետ, իսկ հիւրընկալուելիս 1:1 հաշուով աւարտեց Ուկրաինայի հետ մրցավէճը:
4. Սուրէն Բարսեղեան՝ 1998-1999թթ. 14 խաղ «Եւրո-2000»-ի ընտրական փուլում Հայաստանի հաւաքականը հանդէս եկաւ Սուրէն Բարսեղեանի գլխավորութեամբ:
5. Վարուժան Սուքիասեան՝ 2000-2001 17 խաղ Սուքիասեանի գլխավորութեամբ Հայաստանի հաւաքականը առաջին անգամ ընտրական փուլում ոչ-մի յաջողութեամբ չտօնեց եւ բնականաբար եզրափակեց մրցաշարային աղիւսակը:
6. Անդրանիկ Ադամեան՝ 2002 (2003) 2 խաղ Գիւմրեցի փորձառու այս մասնագէտը հաւաքականի գլխավոր մարզիչ նշանակուեց 2002թ.: Սակայն վեց ամիս անց նրան փոխարինեց Օսկար Լոպեսը, որը «Փիւնիկի» հետ աննախադէպ արդիւնքների էր հասել:
7. Օսկար Լոպես՝ 2002թ. խաղ Լոպեսը փոխարինելով Ադամեանին դարձաւ Հայաստանի հաւաքականը գլխավորած առաջին արտասահմանցի: Սակայն մի քանի ամիս անց նա հեռացաւ Հայաստանից, դժգոհելով իր աշխատավարձից:
8. Միխայ Ստոյկիցա՝ 2003-2004 10 խաղ Ռուսիացի այս մասնագէտի գլխավորութեամբ Հայաստանի հաւաքականը սկսեց դիտարժան ֆուտբոլ ցոյց տալ, յաղթանակներ տօնել:
9. Բեռնարդ Կագոնի՝ 2004-2005 8 խաղ Ֆրանսացի այս մարզիչը չկարողացաւ շարունակել Ստոյկիցայի գործը: Նրա գլխավորութեամբ Հայաստանը ընտրական փուլը սկսեց 4 պարտութիւններով:
10. Հենկ Վիսման՝ 2005-2006թթ. 8 խաղ Հոլանդացի Հենկ Վիսմանը, գլխավորելով Հայաստանի հաւաքականը, ապացուցեց, որ Կագոնին չարաց փոքրագոյնն էր: Վիսմանը թէեւ բնակուում էր Երեւանում, սակայն մտածում էր ամէն ինչի մասին, բացի Հայաստանի հաւաքականի յաջող ելույթների:
11. Եան Պոուլսենի ղեկավարումը՝ 2006-2007թթ. 10 խաղ Շոտլանդացի այս մասնագէտի գրանցած արդիւնքները քաջ յայտնի են բոլորին, որոնք դրանք աննախադէպ ելույթներ էին: Արդէն 1 տարի է անդադար խօսուել է այդ մասին: Կարելի է պարզապէս եւս մէկ անգամ ցաւել, որ նա անժամանակ հեռացաւ կեանքից:
12. Վարդան Մինասեան՝ 2007թ. 6 խաղ Վարդան Մինասեանը որպէս գլխավոր մարզիչ չի աշխատել: Հանգամանքների բերումով նա եղել է գլխավոր մարզիչի պաշտօնակատար:
13. Եան Պոուլսեն՝ 2008թ. Դանիացի:

## ԱՐՈՆԵԱՆԸ ԿՐԿԻՆ ՈՒԺԵՂԱԳՈՒՅՆՆ Է

Ջեեի շախմատային մրցաշարում 2-րդ տարին անընդմէջ յաղթող է ճանաչուել հայ գրոսմայստեր Լեւոն Արոնեանը: Ինչպէս եւ նախորդ տարի Արոնեանին յաղթանակը շնորհուել է լրացուցիչ ցուցանիշներով:



Վերջին 13-րդ տուրում Լեւոնը սեւերով մրցել է մրցաշարի միակ կին գրոսմայստեր Հուզիթ Պոլգարի հետ: Պարտիան աւարտուել է ոչ-ոքիով: Խաղաղ ելք է գրանցուել նաեւ Կառլսեն-Ռաջաբով, Անանդ - Կրամնիկ, Տոպալով-Ադամս, Իվանչուկ - Վան Վեյլի պարտիաներում, իսկ Գելֆանդը սպիտակներով պարտութեան է մատնել Ելեանովին, Լեկոն՝ Մամեդեարովին:

Մրցաշարային աղիւսակի 1-ին հորիզոնականում 8-ական միաւորով յայտնուել են Արոնեանը եւ Կառլսենը: Լրացուցիչ ցուցանիշներով Լեւոնը ճանաչուել է յաղթող: 3-րդ հորիզոնականը 7.5-ական միաւորով բաժանել են Ռաջաբովը եւ Անանդը: 7-ական միաւորով 5-րդ հորիզոնականում են հանգրուանել Իվանչուկը եւ Լեկոն: Կրամնիկը, որը համարուում էր յաղթողի գլխավոր չաւանդներուց մէկը, բաւարարուել է ընդամէնը 7-րդ հորիզոնականով:

### ՅՐԱՆԴ ՏԻՆՔ՝ ՄԵԿ ՏԱՐԻ ԵՏՔ

Շարունակուած էջ 8-էն

վերաբերի «աշխարհի վրայ գոնուող գուլումին»:

Կատարին մասին, խիստ հետաքրքրական մանրամասնութիւններ տալով: Իրապէս կ'արժէ որ իր խօսքը հրատարակուի թէ անգլերէն եւ թէ հայերէն լեզուներով: Իսկ փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեան, հայերէն եւ անգլերէն լեզուներով ունեցաւ իրապէս բովանդակալից, ներշնչուած եւ լաւատես ելույթ մը, որ Հրանդ Տինքի ճակատագրէն անդին, հայ ժողովուրդի վերջնական յաղթանակի մասին վստահութիւն կը ներշնչէր: Աւուր պատշաճի եւ Տինքի գոհաբերութեան տարողութեան եւ իմաստին մասին պիտի արտայայտուէր Յովհանն Սրբազան, մեծապէս տպաւորեց այս ձեռնարկը նկատելով յարգանքի եւ գնահատանքի արտայայտութիւն մը, անհետացող հերոսի նկատմամբ:

Օրուայ ատենավարն էր իրաւաբան էտվին Մինասեան, որ իրեն յանձնուած դժուարին գործը պատուով կրցաւ գլուխ հանել: Յայտագրի աւարտին Առաջնորդ Սրբազանի նախագահութեամբ եւ եկեղեցական դասի ընկերակցութեամբ, եւ Խաչատուրեան երգչախումբի կատարողութեամբ տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն, որուն ներկաները հետեւեցան խոր երկիւղածութեամբ:

Ներկայի գեղարուեստական միակ կատարումն էր սրինգի եւ «Հարբի» վրայ Սալբի եւ Սօսի Քերթնեան մայր ու աղջիկ զոյգին, յուզիչ կտորի մը որ կը

Վերջաւորութեան տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն: Բեմի վրայ Հրանդ Տինքի նկարը, ինչպէս նաեւ Պիլլանթ Արինլիի պատրաստած տեսաերկը «Ճնճուկի բոյն» խորագրուած եւ Տինքի հիմնած որբանոցի վերաբերեալ մեծապէս տպաւորիչ ազդեցութիւն թողուցին ներկաներու վրայ: Իրապէս լիցքաւորող եւ ներշնչող ձեռնարկ մըն էր այս յուշերեկոն որուն համար շնորհաւորելի են բոլոր նախաձեռնողները:

### ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Էժժէն ՄերձԱՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով, Ս.Գ.Հ.Կ. «Փարամագ» մասնաձեւերը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար իր դստեր եւ փեսային՝ Տէր եւ Տիկ. Ընկ. Գէորգ եւ Մարալ Թաւուքճեանին:

### ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Տիկ. Էժժէն Մերձանեանի մահուան տխուր առիթով՝ Կիլիկեան Բարեգործական Միութեան Վարչութիւնը իր վշտակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն, յատկապէս Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Մարալ Թաւուքճեանին: Առ այդ փոխան ծաղկեպսակի \$100 տուար կը նուիրէ «Մասիս»-ի ֆոնտին:

### ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

«Մասիս» շաբաթաթերթի ընթերցողներէն Խաչիկ Թաշճեան գնահատելով թերթի բովանդակութիւնն ու խմբագրական տեսութիւնները, \$100 տուար կը նուիրէ «Մասիս»-ին, առ ի բաշխւեան:

Չեր Ճանուցումները Վստահեցէք  
«Մասիս» Շաբաթաթերթին  
T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
massis2@earthlink.net

### ՄԻՈՒԹԻՒՆԸ ԸԱՐԱՋԱՏ ՏՈՒՆ Է ԸԱՅԻ

Շաբաթվա կուռած էջ 13-էն

լով իրենց դիմացը կանգնած մէկ հոգին յարգանքով առաջարկեց նստելու եւ սկսեց հարց ու փորցըր.

-Դուք էք ընկեր Սաքօն.

-Այո՛, ես եմ.

-Քաղաքացի ընկեր դիմում էք ուղարկել, որպէսզի երկրից հեռանաք, մենք եկել ենք օլիւրից, կարելի է հակիրճ ասել, թէ ինչ է պատճառը ձեր դիմումի ներկայացման.

-Մեզ նեղացնում են պարսիկ(մեր հասկացողութեամբ՝ մուսուլման, իսկ այլ մեկնաբանութեամբ՝ ճարպիկ, քաղաքագէտ) ախպար եւ այլն ծաղրական մակդիրներով, չորս հարիւր տարի Պարսկաստանում ինչ գոհողութիւններով մեզ հայ ենք պահել, որ պարսիկ չդառնանք, հիմա աչտեղ, մեր հայրենիքում, մեզ կոչում են՝ պարսիկ եւ տարբերութիւն դնում:

-Նրանք աւելի լրջացան եւ յարգանք ցուցաբերելով իմ նկատմամբ նրանց մեծը դիմեց ինձ.

-Սիրելի Սաքօ նրանցից մէկի անունը կարող ես տալ, որ քեզ անհանգստացնում են:

-Խուսափում էի անուն տալ, չէի ուզում թշնամութիւն առաջացնել, փորձեցի համոզել, որ իրենք իմ բաժնի կառավարիչի միջոցով այդ խնդիրը ստուգեն, սակայն աւելի պնդեցին, ես էլ ստիպուած այն մարդու անունը տուի, որ աջ ու ձախ նեղացնում էր.

-Խնդրեմ, Գագոյին կանչէք:

-Երկար չտեւեց, տեսանք Գագօն իր չաղթանդամ կազմուածքով ու ուռած փորով առանց իմաց տալու ներս մտաւ.

-Հա՛, ինչ կայ, ի՞նչ էք կանչել ու նստեց դատարկ աթոռին:

-Նրանցից մէկը մատը իմ կողմն ուղղելով հարց տուեց.

-Ճանաչում ես այս ընկերոջ.

-Նա հեզնանքով իմ կողմը նայելով, թէ.

-Ոնց թէ չեմ ճանաչում, նա մեր պարսիկն է, մեր մօտ է աշխատում:

-Նրա այս խօսքի վրայ նրանցից մէկի վեր կենալն ու բռունքով նրան հարուածելը մէկ եղաւ բարկացած ասելով.

-Տօ՛, անասուն, մեր լաւ քաղաքացուն պարսիկ ես անուանում, նրան ցաւ ես պատճառում.

-Նա բողբոջեց, թէ.

-Այս պարսիկի խաթեր համար ինձ ծեծում է՞ք:

-Նորից մի հարուած կերաւ:

-Տօ՛, աւանակ, դու այս մեծ մարմնովդ միայն լակել ես իմանում, տարրական քաղաքավարութիւնը նոյնիսկ քեզ չեն սովորեցրել, ինչպէս գրասենեակ մտնել եւ ինչպէս դիմացինի հետ խօսել:

-Նրանց այս վարմունքն իսկապէս ինձ ապշեցրել էր, այն ինչ նախապաշարուած էի դրականօրէն փոխուեց իմ տպաւորութիւնը, հաւատացի, որ աշխատանք է տարւում հասարակարգի օրինականութիւնը պահելու եւ պաշտպանելու համար:

-Նրանք Գագոյին գրկեցին աշխատանքից եւ կարգադրեցին՝ այլ տեղերում եւս չկարողանայ աշխատել, այսպիսով դաս լինելու օրինազանցներին:

-Յետոյ ի՞նչ եղաւ, նրանք քո արտագաղթելու մասին ի՞նչ ասացին.

-Այդ ուղղութեամբ որեւէ խօսք չգնաց նկատելով առաջացած վիճակը:

-Գորբաչովեան տարիներն էին, Քրեմլինից հրապարակայնութեան եւ լուրջ փոփոխութիւնների կայծեր էին առկայւածում ընդհանուր

սովետին ի լուր, կոմինիստական կարգերի փլուզման ցնցումներ, նոր իրադարձութիւնների բովում ազատութեան շունչն էր տարածւում, սակայն մեր մօտ՝ Գիւմրիում, կեանքն իր սովորական հունով առաջ էր գնում: Քաղաքը եռ ու գետի մէջ էր, աշխատանքի օր, մէկ էլ սանդարամետ երկրի ահարկու ձայներ լսուեցին, գետինը սաստիկ շարժուել սկսեց, երկինք ու գետին իրար խառնուեց, խուճապ ու տազնապ, շէնքեր մէկը միւսի յետեւից դողդալէն փլուզուած էին, մարդկային սրտածմլիկ աղաղակներ, ամէն կողմ կործանում լաց ու կոծ, ողբ ու կական...Մեր հինգ յարկանի շէնքի աստիճաններն էր փլուել, բնակիչներին մարմնական վնաս էր հասել, քանի որ շէնքը խուռուչովի ժամանակաշէնքերից էր, ամուր էր սարքուել: Աղջիկս ժաժքին դասընկերների հետ դատարանումն են եղել, պատուհանի ապակիները ջարդուած եւ դուրս են թափուած՝ այսպիսով փրկուելով: Դա դեկտեմբերի 7, 1988 անիծեալ թուականն էր, որը ահաւոր մարդկային եւ նիւթական վնասներ տուեց մեր փոքրիկ ժողովրդին ու փոքրիկ Հայաստանին էն էլ ճակատագրական ժամանակահատուածում, որը տազնապալից վիճակին աւելի տազնապ պատճառեց: Քսան տարի այդ կործանիչ թուականից անցնելով դեռ հետքերը մնում են, դեռ վէրքերը միտում են գոհերի եւ կորուստների համար:

-Երկրաշարժին յաջորդող օրերին ինչպէ՞ս տնօրինեցի կեանքդ.

-Հագարաւոր մահեր, հագարաւոր երկրաշարժի աղէտեալներ, հագարաւոր անօթեւաններ, կատարուածը շուտափոյթ դարմանուելու խօսք նոյնիսկ գնալ չէր լինի, երկար ժամանակի պահանջ էր հարկաւոր, ձմեռային սաստիկ սառնամանիք ու սառցակալում, անդիմադրելի ծանր պայմաններ էին առաջացրել աղէտեալ գօտիում, անկարելի էր մնալ Գիւմրիում, տեղափոխուեցինք Երեւան մեր հարազատների մօտ:

-Ինչպէս յայտնի էր, նաեւ Հայաստանը մեծ քաղաքական իրադարձութիւններով յղի էր, Երեւանը ոտքի էր, ժողովուրդը անդադրում հաւաքների եւ ցույցերի էր մասնակցում, պահանջում էր ազատութիւն՝ անջատում Սովետական միութիւնից եւ Ղարաբաղի միացում:

-Դու որպէս մէկ հայը աչք երկրի ինչպէ՞ս էիր վերաբերում մարդկային այդ յորձանուտում վնաս ազատութեան մղուող պայքարին:

-Իւրաքանչիւր հայ ինքնաբերաբար քաշուած էր այդ ցույցերին, ինք եւս ուզում էր բաժին ունենալ ապագալիք անկախութեան բարիքներից: Ինչ համերաշխութիւն եւ սրտակցութիւն ու հայրենասիրական ոգի էր տիրում այդ հաւաքներին, երանի հայրութիւնը միշտ միասին լինեն, մէկ սիրտ ու մէկ հոգի հայրենի շահերը պաշտպանելու դիրքերում:

-Քեզ նման հայ մարդու համար ինչպէս եղաւ տուժով-տեղով 1992-ի պատերազմի օրերին, ուր Ղարաբաղում պատերազմ էր գնում հայրենին ազատագրելու համար, լքես ու գաս ԱՄՆ-ում ապրելու: Թող ականջիդ օղ դառնայ, որ պատերազմի ժամանակ ամէն մի շունչի ներկայութիւնն էլ յոյժ կարեւոր է հայրենին պաշտպանելու տեսակէտից:

-Ապրուստի գոյատեւման միջոցների պակասը պատճառ դարձաւ, որ թողնենք երկիրը եւ ապաստանենք այստեղ: Մեր կամքով չեկանք, պայմանները ստիպեցին:

### ՈՒՍՏԱՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՍՏԻՈՅ ԵՒ ԻՐ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԸԱՅՈՅ» ԵՐԿԸ

Շաբաթվա կուռած էջ 14-էն

Ուխտանէս կը գրէ պատահած դէպքերէն մօտ 365 տարիներ ետք:

Մինչեւ 7-րդ դարու սկիզբը Հայոց եւ Վրաց եկեղեցիներու միջեւ համաձայնութիւնը կատարեալ էր, նոյնիսկ անկէ ճիշդ 100 տարի առաջ ալ, 506 թուին, Վրաց Գաբրիէլ կաթողիկոսը իր եպիսկոպոսներով մասնակցած էր Բաբգէն Ա Ոթմսեցի Հայոց կաթողիկոսի գումարած Դուինի ժողովին, ուր եւ Գաբրիէլ «նպովեաց գծողովն Քաղքեղոնի եւ գտուարն Լեւոնի»: Հայոց Մովսէս Եղի-վարդեցի կաթողիկոսի օրով (574-604) սկսան բաժանումի խմորումները եւ Ուխտանէսի տուած ստոյգ տեղեկութեանց համաձայն ճիշդ 608 թուականին, Աբրահամ Աղբաթանեցի հայոց կաթողիկոսի (607-615) երկրորդ տարին, տեղի ունեցաւ վերջնական բաժանումը:

Ուխտանէսի այս բաժինը ունի 70 անհաւասար գլուխներ, որոնցմէ 26-ը թղթակցութիւններ են: 44 գլուխները իր կողմէ գրուած մեկնութիւններ են որոնք անվերջ կ'անդրադառնան Կիւրիոնի ընթացքին եւ անոր անհաւատարիմ եւ յամառ կեցուածքին՝ հանդէպ ուղիղ դաւանութեան: Վերջին գլուխը Աբրահամ կաթողիկոսի Կոնդակին յատկացուած է ուր մանրամասնօրէն կը կրկնուին առաջին երեք Տիեզերական ժողովներու ուսուցումները եւ կը պահարակուի քաղքեղոնականութիւնը:

Երկու կաթողիկոսներու գահակալութեանց միջեւ տեղապահի պաշտօնը երեք տարիներ վարեց յայտնի աստուածաբան Վրթանէս Վրդ. Քերթոյ (604-607), որ հարազատ եղբայրն էր Սմբատ Վրկանայ Մարգարանին եւ Դաշակարանի Տէր՝ Գիգի: Յունարէն լեզուին քաջ տեղեակ, Վրթանէս մատենագրական գործերու հեղինակ ալ եղած է: Երեք եղբայրներն ալ ծանօթ են պատմութեան մէջ որպէս Քչկան որդիներ, ըլլալով Քչիկ իշխանի որդիները: Սմբատ կարողացած է զսպել Պարսից թշնամիները, պատերազմներ մղելով Հայոց եւ Յունաց ի նպաստ, ընդդէմ Պարսից: Սմբատ եղաւ նաեւ Դուինի 607 թուի ժողովի գումարման գլխաւորը, ուր որոշուեցաւ թէ ինչ վերաբերումներ պիտի որդեգրէր Հայոց եկեղեցին հանդէպ իրեն դաւանակից Վրաց, Աղուանից եւ Սիւնեաց եկեղեցիներու անջատողական ձգտումներուն:

#### Գ. Սկրտութիւն

Ծաղկոյնուած ժողովուրդին

Ծաղերու Մկրտութեան եւ կամ Քրիստոնէութեան Դարձի մասին պիտի ըլլար Ուխտանէսի Պատմութեան Գ հատուածը, որ սակայն մեր ձեռքը հասած չէ: Իր Նախերգանքին մէջ կը կարդանք որ Ծաղերու Մկրտութեան պատմու-

թիւնը մաս կը կազմէր իր Պատմութեան, ուր գրուած էր անոնց քաղաքներու, գիւղերու, բերդերու եւ գաւառներու մասին, ինչպէս նաեւ վանքերու եւ վանականներու մասին՝ «որք բազմակեցք եւ որք միայնակեաց բնակեալ յապատս եւ յանապատս, եւ գորինակ ցուցանել գորութեանն Աստուծոյ»: Այսքանը արդէն բաւական է գիտնալու համար թէ կարեւոր քրիստոնէական կեդրոն մը ըլլալու էր Ծաղերու երկիրն ու նկատելի՝ նաեւ անոնց հաւատալիքները:

Ծաղերը հայկական ծագում ունեցող ժողովուրդ մըն էին, որոնց մասին ակնարկած է Մ. Խորենացի որպէս «Ծաղէացիներ», որոնք Առանի սերունդէն էին ու կը բնակէին Հայաստանի հիւսիսը ու պաշտպանութիւնը կը վայելէին Հայոց Վաղարշակ թագաւորին: Ծաղերու մասին ակնարկութիւն մըն ալ ունի 13-րդ դարու պատմիչ Մխիթար Այրիվանեցի որ 821 թուականի վերաբերող տեղեկութեանց շարքին կը յիշէ Փարսման քահանայի մը անունը, որ նախապէս եղած է հայ եկեղեցուց պատկանող մը, որ սակայն կրօնափոխ ըլլալով յարած է Վրաց քաղքեղոնական հաւատքին, ու աշխատած է կրօնափոխ դարձնել նաեւ Ծաղի բնակիչները: Ուստի Ծաղերու քրիստոնէաց դարձը 10-րդ դարէն շատ աւելի առաջ տեղի ունեցած ըլլալու է: Հայեր չհանդուրժելով անոնց կրօնափոխութիւնը Ուխտանէսի Գ հատուածը այն ատեն նոյնիսկ փճացուցած ըլլալու են: Ծաղերը հայ եկեղեցուց ուղղափառ դաւաւանքը ընդունած են շատ կանուխէն, ու այդ մասին է որ Ուխտանէս գրած պէտք է ըլլար իր գործին Գ մասը:

Հարկ է այստեղ աւելցնել որ 13-րդ դարու հայ պատմիչներ, գլխաւորաբար Կիրակոս Գանձակեցի եւ Ստեփանոս Օրբէլեան, երբ կ'ակնարկեն Ուխտանէսի գործին, որոշ մանրամասնութեամբ ալ կը նկարագրեն անոր բովանդակութիւնը, յիշելով միայն Վրաց բաժանման նկարագրութիւնը Հայ եկեղեցիէն: Ուրեմն, շատ հաւանաբար Գ հատուածը որ Ծաղերու քրիստոնէութեան դարձին կը վերաբերէր, արդէն իսկ «փճուեցաւ» էր եւ կամ դիտմամբ անջատուած Ուխտանէսի երկէն նոյնիսկ Գանձակեցիի օրով, այլապէս ինչո՞ւ Գանձակեցին եւ Օրբէլեանը պիտի չանդրադառնային նաեւ Ծաղերու դարձին եւ յիշատակութեամբ մը գէթ գրած ըլլային այդ մասին:

Վարդանանց պատերազմին Եղիշէ պատմիչը եւս 5-րդ դարուն երկու առիթներով կը յիշէ «Ծաղէք»ի բնակիչները, ըսելով որ «անոնք բոլորը հաւատացեալներ էին եւ մկրտուած էին Մէկ, կաթողիկէ եւ Առաքելական եկեղեցուց մէջ»: Սա պատմական կարեւոր վկայութիւն մըն է ինքնին որ կը համընկնի Ուխտանէսի տուած կարծ տեղեկութեանց հետ:

## ԲԱՋ ՆԱԶԱՐ

### ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ԾՕ

Ամէն Կիրակի երեկոյեան  
ժամը 10:00-ից 12:00  
Կլէմտէյի 26-րդ կայանից

*International Academy of Los Angeles*  
**Presents**

**An Evening Honoring Composer, Director &  
Pioneer of Armenian Television**

# **SARKY MOURADIAN**



**Manuel  
Kevin George  
Chuko**

**Andre Danik  
Narine Shahbazian  
Salpi Mayelian  
Hovik Krikorian  
Harut Hakopian  
Jenny Armen**

**Flora Martirosian  
Adiss Harmandyan  
Vatche**

**Hovik Grigorian  
Levon Sevan  
Maxim  
Raffi Khardalian  
Razmik Mansourian  
Armen Aloyan**

**Hosts: Anahit Martirossian, Aramayis Gharibyan, Nouné Serobian**

**Thursday, April 10, 2008, 7:30 p.m.**

**ALEX THEATER**



**216 North Brand Blvd., Glendale, California 91203**

**FOR TICKETS CALL: (818) 913-2299  
(818) 265-0506**

**FOR INFORMATION CALL: (818) 243-5722**